

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

ՓԱՍՏՈՒԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՄԱՆԻԹՅՈՒՆ

INTERNATIONAL TREATIES ON HUMAN RIGHTS WITH PARTICIPATION OF THE  
REPUBLIC OF ARMENIA COLLECTION OF DOCUMENTS  
Volume I

*Official Armenian translation*

ARMENIAN ASSOCIATION OF INTERNATIONAL LAW

ԵՐԵՎԱՆ 2001

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

### ՀԱՍՑԵԴԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Ընդունված և հռչակված Գլխավոր ասամբլեյի  
1948թ. դեկտեմբերի 10-ի 217 Ա(III) բանաձևով

#### ՆԱԽԱԲԱՆ

Քանզի մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության և աշխարհում խաղաղության հիմքն է,

Քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհանարհանքը հանգեցրել են մարդկության խիզը վրդովող բարբարոսական գործողությունների, և քանի որ որպես մարդկության վեհ նպատակ հռչակված է այնպիսի աշխարհի ստեղծումը, ուր մարդիկ կվայելեն խոսքի ու համոզնունքների ազատություն և գերծ կլինեն վախից ու կարիքից,

Քանզի, որպեսզի մարդու հարկադրված չլինի ապստամբելու ընդդեմ բռնակալության ու ճնշման՝ որպես վերջնական միջոցի, կարևոր է իրավական պետության կողմից նրա իրավունքների պաշտպանությունը,

Քանզի կարևոր է ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացման խթանումը,



Քանզի Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդները կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու իմանական իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության ու արժեքի և տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել են սոցիալական առաջընթացին ու կենսապայմանների բարելավմանը նպաստել առավել ազատության պայմաններում,

Քանզի անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների և իմանական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման,

Քանզի այդ իրավունքների ու ազատությունների համընդհանուր ըմբռնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար,

#### ՈՒՍՏԻ, ԱՅԺՄ

Գլխավոր ասամբլեան,

Հռչակում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ որպես համընդհանուր առաջադրանք բոլոր ժողովուրդներին ու ազգերին, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության ամեն մի մարմին, մտքում մշտապես ունենալով սույն Հռչակագիրը, ձգտի ուսման ու կրթության միջոցով նպաստել այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքին և ազգային ու միջազգային առաջարիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե՛ անդամ պետությունների ժողովուրդների և թե՛ դրանց իրավագորության ներքո գտնվող տարածքների ժողովուրդների կողմից:

#### Հոդված 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով:

#### Հոդված 2

Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարրերակման այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, ճաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ժագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ որևէ այլ կարգավիճակ:

Ավելին, չպետք է կատարվի որևէ տարրերակում՝ ելելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում:

### Հոդված 3

Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունք:

### Հոդված 4

Ոչ ոք չպետք է պահվի ստրկության կամ կախվածության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունը, իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են:

### Հոդված 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի կամ պատժի:

### Հոդված 6

Յուրաքանչյուր ոք, ուր էլ որ լինի, իրավունք ունի ճանաչվելու որպես իրավասությեկտ:

### Հոդված 7

Բոլոր հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Բոլորն ունեն, ի խախտումն սույն Հռչակագրի, ցանկացած խտրականությունից և նման խտրականության ցանկացած հրահրումից հավասար պաշտպանության իրավունք:

### Հոդված 8

Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնական իրավունքների խախտնան դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք:

### Հոդված 9

Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման:

### Հոդված 10

Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների ու պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու իրապարակային դատաքննության իրավունք:

### Հոդված 11

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով, իրապարակային դատաքննությամբ, որի ժամանակ նա ունեցել է պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր երաշխիքները:

Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի

համաձայն, հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

### Հոդված 12

Ոչ ոք չպետք է ենթարկվի իր ամձնական, ընտանեկան կյանքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության, ինչպես նաև որևէ ոտնձգության՝ պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք:

### Հոդված 13

Յուրաքանչյուր ոք ունի տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, այդ թվում՝ սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք:

### Հոդված 14

Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և դրանից օգտվելու իրավունք:

Այդ իրավունքը չի կարող գործել բացառապես ոչ քաղաքական հանցագործությունների կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքների կապակցությամբ հետապնդման դեպքում:

### Հոդված 15

Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:

Ոչ ոք չպետք է կամայականորեն գրկվի իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

### Հոդված 16

Զափահաս տղամարդիկ ու կանայք, առանց ռասայական, ազգային կամ կրոնական որևէ սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու: Նրանք հավասար իրավունքներ ունեն ինչպես ամուսնանալիս, այնպես էլ ամուսնության ընթացքում և ամուսնալուժվելիս:

Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության դեպքում:

Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանության իրավունք:

### Հոդված 17

Յուրաքանչյուր ոք ունի ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականություն ունենալու իրավունք:

Ոչ ոք չպետք է կամայականորեն գրկվի իր սեփականությունից:

### Հոդված 18

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք. այդ իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատություն և դրանք, միայնակ կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզելու կամ եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն:

## **Հոդված 19**

Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների և դրանք արտահայտելու ազատություն. այս իրավունքը ներառում է համոզմունքներին առանց միջանտության հավատարին մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ փնտրելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից:

## **Հոդված 20**

Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ու միավորումներ կազմելու իրավունք:

Ոչ ոք չպետք է հարկադրվի անդամակցելու որևէ միավորման:

## **Հոդված 21**

Յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք:

Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այն պետք է արտահայտվի պարբերական և արդար ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդիանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ընթացակարգերի միջոցով:

## **Հոդված 22**

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, ունի սոցիալական ապահովության իրավունք և ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից:

## **Հոդված 23**

Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք՝ առանց որևէ խտրականության:

Յուրաքանչյուր աշխատող ունի իր և իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիր գոյություն ապահովող արդար ու գոհացուցիչ վարձատրության և, անհրաժեշտության դեպքում, այն սոցիալական ապահովության այլ միջոցներով լրացնելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի արհեստակցական միություններ ստեղծելու և հանուն իր շահերի պաշտպանության դրանց անդամակցելու իրավունք:

## **Հոդված 24**

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի ողջամիտ սահմանափակման և վճարովի պարբերական արձակուրդների իրավունք:

## **Հոդված 25**

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսանակարդակի, այդ թվում՝ ներառյալ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև ապահովության իրավունք՝

գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգանանքներում գոյության այլ միջոցների անհրաժեշտության դեպքում:

Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Անուսանությունից կամ արտանուսնական կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն սոցիալական միևնույն պաշտպանությունից:

## Հոդված 26

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամաշելի, իսկ բարձրագույն կրթությունը՝ ընդունակություններին համապատասխան հավասարապես մատչելի բոլորի համար:

Կրթությունը պետք է նպատակառուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու իիմնական ազատությունների նկատմանը հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականության ու բարեկանությանը, ել՝ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը:

Ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության տեսակ ընտրելու առաջնային իրավունք:

## Հոդված 27

Յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից օգտվելու և գիտական առաջընթացին մասնակցելու և նրա բարիքներից օգտվելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր հեղինակած ցանկացած գիտական, գրական կամ գեղարվեստական երկի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք:

## Հոդված 28

Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական և միջազգային այնպիսի կարգուկանոնի իրավունք, որի առկայությամբ սույն Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները լիովին իրագործելի են:

## Հոդված 29

Յուրաքանչյուր ոք ունի պարտականություններ այն համայնքի առջև, ուր և միայն հնարավոր է նրա անհատականության ազատ ու լիարժեք զարգացումը:

Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակությունում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով:

Այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

## Հոդված 30

Սույն Հռչակագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընձեռված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակառուղղված լինեն սույն Հռչակագրում շարադրված իրավունքների և ազատությունների վերացմանը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄԱԿԱՆ  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

(1950թ. նոյեմբերի 4)

Սույն Կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

ուշադրության առնելով 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագիրը,

**նկատի ուժնենալով**, որ Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդիանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը,

**նկատի ուժնենալով**, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել մեծ միասնության ձեռք բերումն է և որ այդ նպատակին հասնելու միջոցներից են մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների հաստատումը և հետագա իրականացումը,

**կրկին հավաստելով** իրենց խորին հավատարմությունը այդ հիմնական ազատություններին, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում և որոնց լավագույն պահպանումը հիմնականում կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների համընդիանուր ընթացնումից ու կիրառումից,

**որպես միասնական հայացքներ** և քաղաքական ավանդույթների, իրեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող Եվրոպական երկրների կառավարություններ համակված լինելով Համընդիանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին առաջին քայլերն անելու վճռականությամբ,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

### Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1 բաժնում:

### ԲԱԺԻՆ I.

#### Իրավունքներ և ազատություններ

## Հոդված 2

### Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճիքի այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նման պատիժ է նախատեսված:

2. Կյանքից գրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը միանգամայն անհրաժեշտ է՝

- a. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,
- a. օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմքերով ձերբակալված անձի փախուստը կանխելու համար,

c. խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

### Հոդված 3

#### Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերնունքի կամ պատժի:

### Հոդված 4

#### Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:
  1. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:
3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում
  - a. ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,
  - b. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը համոզնենքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,
  - c. ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրույթյան կամ աղետի դեպքում,
  - d. ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որ դասվում է սովորական քաղաքացիական պարտականությունների շարքը:

### Հոդված 5

#### Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից գրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով
  - ա.անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրան դատապարտելուց հետո,
  - բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

с. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

д. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու մարմնին ներկայացնելու նպատակով,

е. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գիմեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

ֆ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3.Սույն հոդվածի 1-ի կետի (c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր որ անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական գործառույթներ, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով՝ ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

## Հոդված 6

### Արդարացի դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և իրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը իրապարակվում է դրնբաց նիստում, սակայն մանուկի ներկայացուցիչներին և հանրությանը կարող են չքույլատրվել ներկա լինելու ամբողջ դատաքննությանը կամ նրա մի մասին՝ բարոյականության, հասարակական կարգի կամ ժողովրդավարական հասարակության մեջ պետական անվտանգության շահերից ելնելով, եթե դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգանաճների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե իրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի առնվազն հետևյալ իրավունքները՝

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ ումենալու իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

с. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայությունների դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունքներ տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու իր վկաներին կանչելու ու հարցաքննելու նույն այն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

## Հոդված 7

### Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1.Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, հանցագործություն չի հանդիպել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիր ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է հանցագործություն:

## Հոդված 8

### Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

## Հոդված 9

### Ստքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ նաև պատասխանատվությունը կամ հանցագործությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

## Հոդված 10

### Կարծիք արտահայտելու ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է իր կարծիքը պնդելու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից: Այս

հոդվածը պետություններին չի խոչընդոտում սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այդ ազատությունների իրականացումը, որը պարտավորություններ և պատասխանատվություն է ենթադրում, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային անբողջականության կամ հասարակական անդորրի, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական բնույթի տեղեկատվության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաշառությունը պահպանելու նպատակով:

## Հոդված 11

### Դավաքների և միավորումների ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք, ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անդորրի, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը պաշտպանելու կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելուն զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

## Հոդված 12

### Անուսնության իրավունք

Անուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն անուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 13

### Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում՝ սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ, եթե նման խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք:

## Հոդված 14

### Խստրականության արգելում

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խստրականության, այն է՝ անկախ սերից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հանողանուններից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրանասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

## Հոդված 15

### Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ, ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ծեռարկել միջոցառումների շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է դրության լարվածությունը, պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերը, կամ 3, 4 (1), և 7-րդ հոդվածների դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին լիարժեքորեն իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

## Հոդված 16

### Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում

Բարձր պայմանավորվող կողմերի համար 10, 11 և 14-րդ հոդվածներում ոչինչ չի կարող խոչընդոտ համարվել օտարերկրացիների քաղաքական գործունեության կապակցությամբ սահմանափակումներ նախատեսելու ուղղությամբ:

## Հոդված 17

### Իրավունքների չարաշահման արգելում

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացնանք կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

## Հոդված 18

### Իրավունքների նկատմամբ սահմանափակումների

#### Կիրառման սահմանները

Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

## ԲԱԺԻՆ II.

### Մարդու իրավունքների եվրոպական դատարան

## Հոդված 19

### Դատարանի հիմնումը

Սույն Կոնվենցիայով և նրան կից արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան (այսուհետև՝ Դատարան): Այն գործում է մշտական հիմունքներով:

## Հոդված 20

## **Դատավորների թիվը**

Դատարանի կազմի մեջ մտնող դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորվող կողմերի թվին:

## **Հոդված 21**

### **Դատավորներին ներկայացվող պահանջները**

1. Դատավորները պետք է օժտված լինեն բարոյական բարձր հատկանիշներով և բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն հանրաճանաչ հեղինակություն վայելող իրավագետներ:

2. Դատավորները Դատարանի աշխատանքին մասնակցում են անձնապես:

3. Պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն որևէ գործունեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության, անաշառության կամ նրանց լիազորությունների մշտական բնույթից բխող պահանջների հետ. սույն կետի դրույթների կիրառման առնչությամբ ծագող հարցերը լուծում է Դատարանը:

## **Հոդված 22**

### **Դատավորների ընտրությունները**

1. Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմից դատավորներն ընտրվում են Խորհրդարանական վեհաժողովում, նրանց օգտին տրված քվեների մեջամասնությամբ, Բարձր պայմանավորվող կողմից առաջադրած երեք թեկնածուների ցուցակից:

2. Նույն ընթացակարգը կիրառվում է նոր Բարձր պայմանավորվող կողմի միանալու դեպքում Դատարանի կազմը, ինչպես և առաջացած թափուր տեղերը համարելիս:

## **Հոդված 23**

### **Պաշտոնավարության ժամկետը**

1. Դատավորներն ընտրվում են վեց տարվա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել: Սակայն, առաջին ընտրության ժամանակ ընտրված դատավորների կեսի պաշտոնավարության ժամկետը երեք տարի է:

2. Առաջին երեք տարվա ժամկետի ավարտին պաշտոնաթողության ենթակա դատավորները որոշվում են նրանց ընտրվելուց անմիջապես հետո՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից անցկացվող վիճակահանությամբ:

3. Յուրաքանչյուր երեք տարին մեկ, Դատարանի կազմի, ըստ հնարավորին, կիսով չափ նորացումն ապահովելու նպատակով, Խորհրդարանական վեհաժողովը կարող է, մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելը, որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող դատավորների պաշտոնավարության ժամկետը կամ ժամկետները լինեն այլ, քան վեց տարին է, բայց ամեն դեպքում ոչ ավելի, քան ինը և ոչ պակաս, քան երեք տարի:

4. Այն դեպքերում, եթե խոսք վերաբերում է պաշտոնավարության ավելի քան մեկ ժամկետի, և Խորհրդարանական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետը որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարն՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությամբ:

5. Այն դատավորը, որն ընտրվել է մեկ այլ, պաշտոնավարության ժամկետը դեռևս չլրացած դատավորի փոխարինելու համար, այդ պաշտոնն զբաղեցնում է նախորդ դատավորի լիազորությունների ժամկետից մնացած ժամանակահատվածում:

6. Դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, եթե լրանում է նրանց 70 տարին:

7. Դատավորները պաշտոնավարում են մինչև փոխարինվելը: Նրանք, սակայն, փոխարինվելուց հետո, շարունակում են քննել իրենց կողմից արդեն իսկ քննության առնված գործերը:

## Հոդված 24

### Պաշտոնից հեռացնելը

1. Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեջամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

## Հոդված 25

### Գրասենյակը և իրավական հարցերով քարտուղարները

Դատարանն ունի Գրասենյակ, որի գործառույթներն ու կազմակերպումը սահմանվում են Դատարանի ընթացակարգի կանոններով: Դատարանն օգտվում է իրավական հարցերով քարտուղարների ծառայություններից:

## Հոդված 26

### Դատարանի լիազումար նիստերը

Լիազումար նիստերում Դատարանը՝

- ա. ընտրում է իր նախագահին և նախագահի մեկ կամ երկու տեղակալի երեք տարի ժամկետով. նրանք կարող են վերընտրվել,
- բ. ձևավորում է Պալատներ, որոնք ստեղծվում են որոշակի ժամկետով,
- շ. ընտրում է Դատարանի պալատների նախագահներ. նրանք կարող են վերընտրվել,
- դ. ընդունում է Դատարանի ընթացակարգի կանոնները,
- ե. ընտրում է Քարտուղար և Քարտուղարի մեկ կամ մի քանի տեղակալ:

## Հոդված 27

### Կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

1. Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստեր գումարում է երեք դատավորից կազմված կոմիտեներում, յոր դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում: Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ:

2. Շահագրգիռ մասնակից կողմից ընտրված դատավորը Պալատի և Մեծ պալատի *ex officio* անդամ է. նման դատավորի բացակայության դեպքում կամ եթե նա չի կարող մասնակցել նիստին, տվյալ պետությունը նշանակում է որևէ այլ անձի, որը հանդիս է գալիս որպես դատավոր:

3. Մեծ պալատի կազմի մեջ մտնում են նաև Դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, Պալատների նախագահները և Դատարանի այլ դատավորներ, որոնք ընտրվում են Դատարանի ընթացակարգի կանոններին համապատասխան: Եթե գործը 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան հանձնվում է Մեծ պալատ, որևէ դատավոր, որն ընդգրկված է եղել որոշում կայացրած Պալատում, չի կարող մասնակցել Մեծ պալատի նիստերին բացառությամբ վերոնշյալ Պալատի նախագահի և շահագրգիռ մասնակից կողմի դատավորի:

## Հոդված 28

### Կոմիտեների հայտարարությունները գանգատի

#### անընդունելիության մասին

Կոմիտեն միաձայն որոշմանք կարող է անընդունելի հայտարարել

34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատը կամ այն համել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է:

## Հոդված 29

### Պալատների որոշումները գանգատի ընդունելիության

#### մասին և ըստ էության

1. Եթե 28-րդ հոդվածին համապատասխան որոշում չի ընդունվում, Պալատը որոշում է կայացնում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:

2. Պալատը որոշում է կայացնում 33-րդ հոդվածին համապատասխան պետության ներկայացրած գանգատի ընդունելիության մասին և ըստ գործի էության:

3. Գանգատի ընդունելիության մասին որոշումը կայացվում է առանձին, եթե դատարանը բացառության կարգով հակառակ որոշում չի ընդունում:

## Հոդված 30

### Ընդդատության զիջումը Մեծ պալատին

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման առնչվող լուրջ հարցի կամ եթե Պալատը քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի՝ ավելի վաղ կայացրած որոշմանը, Պալատը կարող է մինչև իր որոշումը կայացնելը ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատի օգտին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում:

## Հոդված 31

### Մեծ պալատի լիազորությունները

Մեծ պալատը՝

ա. քննության է առնում 33-րդ կամ 34-րդ հոդվածներին համապատասխան ներկայացված գանգատները, եթե Պալատը 30-րդ հոդվածի դրույթների հիման վրա զիջել է ընդդատությունը կամ եթե գործը նրան է հանձնվել 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,

բ. քննության է առնում խորհրդատվական եզրակացություններ տալու մասին՝ 47-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ներկայացված խնդրանքները:

## Հոդված 32

### Դատարանի իրավագորությունը

1. Դատարանի իրավագորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը և որոնք հանձնվում են 33, 34 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավագորության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը:

### Հոդված 33

#### Միջպետական գործեր

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որ թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ:

### Հոդված 34

#### Անհատական գանգատները

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, ոչ կառավարական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման գոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացնանք:

### Հոդված 35

#### Ընդունելիության պայմանները

1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, եթե սպառվել են միջազգային իրավունքի հանրածանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վերջնական որոշման կայացնան օրվանից հետո վեց ամսվա ընթացքում:

2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

ա. անանուն է,

բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ, կամ ակնհայտորեն անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:

4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան: Նա կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

### Հոդված 36

#### Երրորդ կողմի մասնակցությունը

1. Պալատի կամ Մեծ պալատի կողմից քննության առնվող ցանկացած գործի կապակցությամբ յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, որի քաղաքացին է դիմողը, իրավունք ունի ներկայացնելու գրավոր դիտողություններ և մասնակցելու լսումներին:

2. Ելելով պատշաճ արդարադատություն իրականացնելու շահերից՝ Դատարանի նախագահը կարող է ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի, որը գործի կողմ չէ, կամ ցանկացած շահագրգիռ անձի, որը դիմող չէ, իրավիրել ներկայացնելու գրավոր դիտողություններ կամ մասնակցելու լսումներին:

### Հոդված 37

## **Գանգատը ցուցակից հանելը**

1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանելու գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ՝

ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատի քննությանը,

բ. վեճն արդեն կարգավորվել է,

շ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով՝ գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է գանգատի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել գանգատը վերստին ընդգրկելու գործերի ցուցակում, եթե գտնում է, որ դրա համար կան արդարացի հանգամանքներ:

## **Հոդված 38**

### **Գործի քննությունը և բարեկամական կարգավորման ընթացակարգը**

1. Եթե Դատարանը գանգատը հայտարարում է ընդունելի, նա՝

ա. նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար շահագրգիռ պետություններն ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,

բ. իր ծառայությունն է տրամադրում շահագրգիռ կողմերին՝ սույն Կոնվենցիայով և նրա Արձանագրություններով սահմանված իրավունքների պահպանման հիման վրա հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

2. 1-ին կետի (բ) ենթակետին համապատասխան իրականացվող քննությունը խորհրդապահական բնույթ է կրում:

## **Հոդված 39**

### **Բարեկամական կարգավորման ծեռք բերումը**

Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որտեղ տրվում է փաստերի և ծեռք բերված որոշման հակիրճ շարադրանքը:

## **Հոդված 40**

### **Ղոնքաց լսումները և փաստաթղթերի մատչելիությունը**

1. Լսումները դրնբաց են, եթե Դատարանը բացառիկ հանգամանքներում այլ որոշում չի ընդունում:

2. Քարտուղարությանն ի պահ հանձնված փաստաթղթերը մատչելի են հանրությանը, եթե Դատարանի նախագահը այլ որոշում չի ընդունում:

## **Հոդված 41**

### **Արդարացի փոխհատուցումը**

1. Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանական իրավունքն ընձեռում է

միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, որոշում է արդարացի փոխհատուցում վճարել տուժած կողմին:

## Հոդված 42

### Պալատների վճիռները

Պալատների վճիռները վերջնական են դառնում 44-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան:

## Հոդված 43

### Գործի հանձնումը Մեծ պալատին

1. Պալատի վճոհ կայացման օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կարող է պահանջել, որպեսզի գործը հանձնվի Մեծ պալատին:
2. Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած խումբն ընդունում է պահանջը, եթե գործն արժարքում է այնպիսի լուրջ հարց, որը վերաբերում է Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց:
3. Եթե Կոմիտեն ընդունում է պահանջը, ապա Մեծ պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով:

## Հոդված 44

### Վերջնական վճիռները

1. Մեծ պալատի վճիռը վերջնական է:
2. Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝
  - a. կողմերը հայտարարում են, թե չեն պահանջի գործի հանձնումը Մեծ պալատին, կամ
  - b. վճոհ կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնումը Մեծ պալատին, կամ
3. Վերջնական վճիռը ենթակա է իրապարակման:

## Հոդված 45

### Վճիռների և որոշումների հիմնավորումը

1. Ինչպես վճիռները, այնպես էլ գանգատների ընդունելիության կամ անընդունելիության մասին որոշումները պետք է լինեն հիմնավորված:
2. Եթե վճիռը ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

## Հոդված 46

### Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռներն այն գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում նրա կատարման նկատմամբ:

### Հոդված 47

#### Խորհրդատվական եզրակացությունները

1. Նախարարների կոմիտեի խնդրանքով Դատարանը կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ:

2. Նման եզրակացությունները չպետք է շոշափեն այն հարցերը, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և բաժնում և նրան կից Արձանագրություններում սահմանված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ ծավալին, կամ ցանկացած այլ հարց, որը Դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնք կարող էին տեղի ունենալ Կոնվենցիային համապատասխան:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացություն խնդրելու մասին Նախարարների կոմիտեի որոշումն ընդունվում է կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների քվեների մեջամասնությամբ:

### Հոդված 48

#### Դատարանի խորհրդատվական իրավագորությունը

Դատարանը որոշում է, թե արդյոք խորհրդատվական եզրակացության համար Նախարարների կոմիտեի ներկայացրած խնդրանքը 47-րդ հոդվածով սահմանված իր իրավասության շրջանակում է:

### Հոդված 49

#### Խորհրդատվական եզրակացությունների հիմնավորումը

1. Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է հիմնավորված լինեն:

2. Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացությունն ուղարկվում է Նախարարների կոմիտե:

### Հոդված 50

#### Դատարանի պահպանման ծախսերը

Դատարանի գործունեության հետ կապված ծախսերը կրում է Եվրոպայի խորհուրդը:

### Հոդված 51

#### Դատավորների արտոնություններն ու անձեռնմխելիությունը

Դատավորներն իրենց գործառույթները կատարելու ընթացքում օգտվում են Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 40-րդ հոդվածով և դրա հիման վրա կնքված հանաձայնագրերով նախատեսված արտոնություններից ու անձեռնմխելիությունից:

### Բաժին III.

## **Այլ դրույթներ**

### **Հոդված 52**

#### **Գլխավոր քարտուղարի պահանջները**

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, ի պատասխան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի պահանջի, ներկայացնում է պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ, որով իր ներպետական իրավունքն ապահովում է Կոնվենցիայի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը:

### **Հոդված 53**

#### **Մարդու՝ առկա իրավունքների պահպանումը**

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնարանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնական ազատությունների սահմանափակում կամ նվազեցում, որոնք կարող են երաշխավորվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա նախակցությամբ որևէ այլ համաձայնագրով:

### **Հոդված 54**

#### **Նախարարների կոմիտեի լիազորությունները**

Սույն Կոնվենցիայում ոչինչ ի վեհականություն կոմիտեի լիազորություններին, որոնք նրան վերապահված են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությամբ:

### **Հոդված 55**

#### **Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը**

Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ, բացառությամբ հատուկ համաձայնագրի, իրենք չեն օգտվի իրենց միջև գործող պայմանագրերից, Կոնվենցիաներից կամ հռչակագրերից՝ սույն Կոնվենցիայի մեկնարանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը գանգատի միջոցով կարգավորման այլ միջոցների ներկայացնելու նպատակով, քան նրանք, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայով:

### **Հոդված 56**

#### **Տարածքային կիրառումը**

1. Ցանկացած պետություն վավերացնելիս կամ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ժանուցելու միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիան, սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

2. Կոնվենցիայի գործողությունը ժանուցագրի մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա տարածվում է այդ ժանուցագրի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո 30-րդ օրվանից:

3. Սույն Կոնվենցիայի դրույթները հիշյալ տարածքներում կիրառվում են՝ պատշաճորեն հաշվի առնելով տեղական պահանջները:

4. Ցանկացած պետություն, որը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություն է կատարել, հետագայում ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է այդ հայտարարությունը, հայտարարել, որ ինքը ժանաչում է անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անձանց խնբերից գանգատներ ստանալու Դատարանի իրավասությունը, ինչպես որ դա նախատեսված է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով:

## Հոդված 57

### Վերապահումները

1. Ցանկացած պետություն, սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս, կարող է վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածը ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:

2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

## Հոդված 58

### Չեղյալ հայտարարումը

1. Բարձր պայմանավորվող կողմն օրողություն կարող է սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել Կոնվենցիային մասնակից դաշնային պահից սկսած իննուրի անց միայն և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու պահից սկսած վեց ամիսը լրանալուց հետո. Գլխավոր քարտուղարն այդ մասին իրազեկ է պահում մյուս Բարձր պայմանավորվող կողմերին:

2. Չեղյալ հայտարարելը համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին չի ազատում սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից ցանկացած գործողության կապակցությամբ, որը կարող էր այդ պարտավորությունների խախտում լինել և նրա կողմից կատարվել մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ժամկետը:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը դադարում է Եվրոպայի խորհրդի անդամ լինել, նույն պայմաններով դադարում է սույն Կոնվենցիայի մասնակից լինել:

4. Կոնվենցիան կարող է, նախորդ կետերի դրույթներին համապատասխան, չեղյալ հայտարարվել ցանկացած տարածքի նկատմամբ, որի վրա տարածվում է նրա գործողությունը 56-րդ հոդվածի դրույթների համաձայն:

## Հոդված 59

### Ստորագրում և վավերացումը

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո:

3. Կոնվենցիան ստորագրած այն պետությունների համար, որոնք Կոնվենցիան վավերացմելու են հետագայում, վերջինս ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերն ի պահ հանձնելու ամսաթվից:

4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի և բոլոր վավերագրերի ի պահ հանձնման մասին, որոնք կարող են ստացվել հետագայում:

Կնքած է Հունվար, 1950թ. նոյեմբերի 4-ին, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարագոր են, մեկ օրինակով, որը պահպան է Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հավաստագրված պատճեններն ուղարկում է Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին:

## ԱՐՂԱՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և իմանական ազատությունների պաշտպանության մասին  
Կոնվենցիայի

## (Փարիզ, 1952 մարտի 20)

Սույն Արձանագրությունը ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

լի վճռականությամբ՝ ծերնարկելու որոշ այնպիսի իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումն ապահովող քայլեր, որոնք այլ են, քան 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Ի բաժնում արդեն ընդգրկվածները,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

### Հոդված 1

#### Սեփականության պաշտպանություն

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ են համարում, իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

### Հոդված 2

#### Կրթության իրավունք

Ոչ ոքի չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը, կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս, հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզնունքներին համապատասխան կրթություն ու ուսուցում ապահովելու իրավունքը:

### Հոդված 3

#### Ազատ ընտրությունների իրավունք

Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք ապահովեն ժողովրդի կանքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս:

### Հոդված 4

#### Տարածքային կիրառումը

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ստորագրելիս կամ վավերացնելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղել հայտարարություն՝ նշելով այն շրջանակները, որի սահմաններում ինքը պարտավորվում է կիրառել սույն Արձանագրության դրույթները այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը նախորդ կետին համապատասխան հայտարարություն է հղել, կարող է ժամանակ առ ժամանակ հետագա հայտարարություն հղել՝ ցանկացած նախորդ հայտարարության պայմանների փոփոխման կամ ցանկացած տարածքի նկատմամբ սույն Արձանագրության դրույթների կիրառման դադարեցման մասին:

Սույն հոդվածին համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի 56-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան արված հայտարարություն:

## Հոդված 5

### Դարաբերակցությունը Կոնվենցիայի հետ

Բարձր պայմանավորվող կողմերի հարաբերություններում սույն Արձանագրության 1, 2, 3 և 4-րդ հոդվածների դրույթները դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

## Հոդված 6

### Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Եվրոպայի խորհրդի այն անդամների համար, որոնք ստորագրել են Կոնվենցիան. այն ենթակա է վավերացման՝ Կոնվենցիայի վավերացման հետ միաժամանակ կամ այն վավերացնելուց հետո: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո: Հետագայում վավերացնող ցանկացած ստորագրող պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում նրա վավերագիրն ի պահ հանձնելու պահից:

Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը վավերացումների մասին ծանուցում է բոլոր անդամներին:

Կատարված է Փարիզում, 1952թ. մարտի 20-ին, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարագոր են, մեկ օրինակով, որը պահպում է Եվրոպայի խորհրդի արխիվներում: Գլխավոր քարտուղարը հավաստված պատճեններն ուղարկում է Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր կառավարությանը:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին  
կոնվենցիայի՝ որոշ այնպիսի իրավունքների և ազատությունների ապահովման մասին,  
որոնք այլ են, քան կոնվենցիայի և նրան կից թիվ առաջի Արձանագրության մեջ աղեն  
ընդգրկվածները

(Ստրասբուրգ, 1963 թ. նոյեմբերի 16)

Սույն Արձանագրությունն ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

լի վճռականությամբ՝ ձեռնարկելու որոշ այնպիսի իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումն ապահովող քայլեր, որոնք այլ են, քան 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) I բաժնում և նրան կից՝ 1952 թ. մարտի 20-ին Փարիզում ստորագրված թիվ 1 Արձանագրության 1-3 հոդվածներում արդեն ընդգրկվածները,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

### Պարտքի համար ազատազրկման արգելումը

Ոչ ոքի չի կարելի ազատությունից գրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային որևէ պարտավորություն:

## Հոդված 2

### Տեղաշարժի ազատությունը

1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից հեռանալու իրավունք:

3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անորորդի, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

4. 1-ին կետում շարադրված իրավունքները ևս կարող են որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և հիմնավորվում ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով:

## Հոդված 3

### Քաղաքացիների արտաքսման արգելումը

1. Ոչ ոքի չի կարելի անհատապես կամ կոլեկտիվ կերպով արտաքսել այն պետության տարածքից, որի քաղաքացին է նա:

2. Ոչ ոքի չի կարելի գրկել այն պետության տարածք մուտք գործելու իրավունքից, որի քաղաքացին է նա:

## Հոդված 4

### Օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսման արգելումը

Օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսումն արգելվում է:

## Հոդված 5

### Տարածքային կիրառումը

1. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է սույն Արձանագրությունը ստորագրելիս կամ վավերացնելիս կամ դրանց հետո ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղել հայտարարություն՝ նշելով այն շրջանակները, որի սահմաններում ինքը պարտավորվում է կիրառել սույն Արձանագրության դրույթները այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

2. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը նախորդ կետին համապատասխան հայտարարություն է հղել, կարող է ժամանակ առ ժամանակ հետագա հայտարարություններ հղել ցանկացած նախորդ հայտարարության պայմանների փոփոխման կամ ցանկացած տարածքի նկատմամբ սույն Արձանագրության դրույթների կիրառման դադարեցման մասին:

3. Սույն հոդվածին համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի 56-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան արված հայտարարություն:

4. Ցանկացած պետության տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է այդ պետության կողմից այն վավերացնելու կամ ընդունելու ուժով, և ցանկացած տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է սույն հոդվածին համապատասխան այդ պետության

հայտարարության ուժով, 2-րդ և 3-րդ հոդվածների նպատակների համար համարվում է ինքնուրույն տարածք:

5. Յուրաքանչյուր պետություն, որը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի համաձայն հայտարարություն է արել, դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է հայտարարությունը, հայտարարել, որ ինքն ընդունում է Դատարանի՝ առանձին անձանցից, ոչ կառավարական կազմակերպությունների կամ անձանց խմբերից սույն Արձանագրության 1-4 բոլոր կամ ցանկացած հոդվածների կապակցությամբ Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված գանգատներ ստանալու իրավասությունը:

## Հոդված 6

### Հարաբերակցությունը Կոնվենցիայի հետ

Բարձր պայմանավորվող կողմերի հարաբերություններում սույն Արձանագրության 1-5 հոդվածների դրույթները դիտվում են օրպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

## Հոդված 7

### Ստորագրումը և վավերացումը

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Եվրոպայի խորհրդի այն անդամների համար, որոնք ստորագրել են Կոնվենցիան. այն ենթակա է վավերացման Կոնվենցիայի վավերացման հետ միաժամանակ կամ այն վավերացմելուց հետո: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում հինգերորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո: Ենտագայում վավերացնող ցանկացած ստորագրող պետության համար Արձանագրությունն ուժի մեջ է մտնում նրա վավերագիրն ի պահ հանձնելու պահից:

2. Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին, որը վավերացումների մասին ծանուցում է բոլոր անդամներին:

Ի հավատում որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1963 թ. սեպտեմբերի 16-ին, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն ել հավասարագոր են, մեկ օրինակով, որը պահպում է Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հավաստված պատճեններն ուղարկում է Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետությանը:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

### Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի՝

#### Մահապատժի վերացման վերաբերյալ

(Ստրասբուրգ, 1983 թ. ապրիլի 28)

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից սույն Արձանագրությունը,

Նկատի առնելով, որ Եվրոպայի խորհրդի անդամ որոշ պետություններում տեղի ունեցած զարգացումն արտահայտում է մահապատժի վերացնելու օգտին առկա ընդիհանուր միտունը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

### Մահապատժի վերացումը

Մահապատժը վերացվում է: Ոչ ոքի չի կարելի մահապատժի դատապարտել կամ մահապատժի ենթարկել:

## Հոդված 2

### Մահապատժը պատերազմի ժամանակ

Պետությունը կարող է իր օրենսդրության մեջ մահապատժի նախատեսել պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կատարված գործողությունների համար. ննան պատիժը կիրառվում է միայն օրենքով սահմանված դեպքերում և նրա դրույթներին համապատասխան: Պետությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հաղորդում է այդ օրենսդրության համապատասխան դրույթները:

## Հոդված 3

### Շեղումների արգելումը

Սույն Արձանագրության դրույթներից շեղումներ չեն թույլատրվում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի հիման վրա:

## Հոդված 4

### Վերապահումների արգելումը

Սույն Արձանագրության դրույթների նկատմամբ վերապահումներ չեն թույլատրվում Կոնվենցիայի 57-րդ հոդվածի հիման վրա:

## Հոդված 5

### Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն ստորագրելիս կամ վավերագիրը, ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Արձանագրությունը:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ, ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությանք, սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման հայտարարություն ստանալու անսարվին հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է նրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է շեղյալ հայտարարվել Գլխավոր քարտուղարին ուղարկած ծանուցագրի միջոցով: Շեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցագրին ստանալու անսարվին:

## Հոդված 6

### Տարաբերակցությունը Կոնվենցիայի հետ

Մասնակից պետությունների հարաբերություններում սույն Արձանագրության 1-ին և 5-րդ հոդվածները դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

## Հոդված 7

## Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց միաժամանակ կամ դրանից առաջ կոնվենցիան վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

## Հոդված 8

### Ուժի մեջ մտնելը

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը, եթե Եվրոպայի խորհրդի անդամ հինգ պետություններ, 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, իրենց համաձայնությունն են արտահայտում Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

2. 8անկացած անդամ պետության համար, որն Արձանագրությամբ պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է վավերագրի կամ ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվան:

## Հոդված 9

### Ավանդապահի գործառույթները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը խորհրդի անդամ պետություններին ծանուցում է՝

- ա. ցանկացած ստորագրման մասին,
- բ. վավերագրի ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,
- c. 5 և 8-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- d. սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավաստումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1983թ. ապրիլի 28-ին, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն եւ հավասարագոր են, մեկ օրինակով, որը պահպան է Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետությանը:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

### Մարդու իրավունքների և իիմնական ազատությունների

#### պաշտպանության մասին կոնվենցիայի

(Ստրասբուրգ, 1984 թ. նոյեմբերի 22)

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, որոնք ստորագրել են սույն Արձանագրությունը,

լի վճռականությամբ՝ ծեռնարկելու այնպիսի քայլեր, որոնք ապահովեն որոշ իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումը 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու

իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) միջոցով,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

### Օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող

#### Ենթացակարգային երաշխիքները

1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով բնակվող օտարերկրացին չի կարող այնտեղից արտաքսվել այլ կերպ, քան ի կատարումն օրենքին համապատասխան ընդունված որոշնան, և պետք է հնարավորություն ունենա՝

ա. փաստարկներ ներկայացնելու իր արտաքսման դեմ,

բ. վերանայել տալու իր գործը, և

շ. այդ նպատակով ներկայացվելու իրավասու մարմնի կամ այդ մարմնի նշանակած մեկ կամ մի քանի անձանց առջև:

2. Օտարերկրացին կարող է արտաքսվել նախքան սույն հոդվածի 1-ին կետի (ա), (բ) և (շ) ենթակետերում նշված իր իրավունքների իրականացումը, եթե արտաքսումն անհրաժեշտ է ի շահ հասարակական կարգի կամ պատճառաբանվում է պետական անվտանգության նկատառումներով:

## Հոդված 2

### Քրեական գործերով գանգատարկման իրավունքը

1. Քրեական հանցագործություն կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայի վերադաս դատական ատյանը: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ որա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:

2. Այդ իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան հանցագործությունների առնչությամբ կամ երբ տվյալ անձը դատվել է ամենաքարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո:

## Հոդված 3

### Փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում

Եթե որևէ անձ վերջնական դատավճումը մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ հանողիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում տվյալ պետության օրենքին համապատասխան կամ պրակտիկայի համաձայն, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից:

## Հոդված 4

### Կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունքը

1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագորության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պատժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա

արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը տվյալ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե ի հայտ են եկել նոր կամ նոր բացահայտված փաստեր կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող են ազդել դրա արդյունքի վրա:

3. Սույն հոդվածի դրույթներից շեղում չի թույլատրվում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի հիման վրա:

## Հոդված 5

### Դավասարությունն ամուսինների միջև

Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալություն դեպքում ամուսինները հավասար իրավունքներ և նաև ամուսինները հավասար պատասխանատվություն ունեն փոխադարձ հարաբերություններում և իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում: Սույն հոդվածը պետություններին չի խոչընդոտում ծեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխաների շահերը պաշտպանելու համար:

## Հոդված 6

### Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն ստորագրելիս կամ իր վավերագիրը կամ ընդունման կամ հավանություն տալու մասին փաստարությունի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց վրա տարածվում է սույն Արձանագրության գործողությունը, և նշել այն ծավալը, որով տվյալ պետություններին չի խոչընդոտում ծեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխաների նկատմամբ:

2. Ցանկացած պետություն կարող է ավելի ուշ, ցանկացած պահի, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հղած հայտարարությամբ, սույն Արձանագրության կիրառումը տարածել հայտարարության մեջ նշված որևէ այլ տարածքի վրա: Այդ տարածքի նկատմամբ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրվամից, որն սկսվում է Գլխավոր քարտուղարի կողմից նման հայտարարություն ստանալու ամսաթվին հաջորդող երկանյա ժամկետի լրանալուց հետո:

3. Նախորդ երկու կետերի հիման վրա արված ցանկացած հայտարարություն, որը վերաբերում է նրանում նշված այս կամ այն տարածքին, կարող է չեղյալ հայտարարվել կամ փոփոխվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Չեղյալ հայտարարումը կամ փոփոխվելու ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որն սկսվում է Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցագիրն ստանալու ամսաթվին հաջորդող երկանյա ժամկետի լրանալուց հետո:

4. Սույն հոդվածի համապատասխան արված հայտարարությունը դիտվում է որպես Կոնվենցիայի 56-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան արված հայտարարություն:

5. Ցանկացած պետության տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է այդ պետության կողմից այն վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու ուժով, և ցանկացած տարածք, որի նկատմամբ սույն Արձանագրությունը կիրառվում է այդ պետության՝ սույն հոդվածին համապատասխան արված հայտարարության ուժով, 1-ին հոդվածում պետության տարածքը վկայակոչելու նպատակով կարող են դիտվել որպես առանձին տարածքներ:

6. Յուրաքանչյուր պետություն, որը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի համաձայն հայտարարություն է արել, դրանից հետո ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է հայտարարությունը, հայտարարել, որ ինքն ընդունում է Դատարանի՝ առանձին անձանցից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անձանց խմբերից՝ սույն Արձանագրության 1-5 հոդվածների կապակցությամբ Կոնվենցիայի 34-րդ հոդվածով նախատեսված գանգատներ ստանալու իրավասությունը:

## Հոդված 7

## Հարաբերակցությունը Կոնվենցիայի հետ

Մասնակից պետությունների հարաբերություններում սույն Արձանագրության 1-6 հոդվածները դիտվում են որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ, և Կոնվենցիայի բոլոր դրույթները կիրառվում են համապատասխանաբար:

## Հոդված 8

### Ստորագրումը և վավերացումը

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունը չի կարող սույն Արձանագրությունը վավերացնել, ընդունել կամ հաստատել՝ առանց միաժամանակ կամ դրանից առաջ Կոնվենցիան վավերացնելու: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

## Հոդված 9

### Ուժի մեջ մտնելը

1.Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն երկամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, եթե Եվրոպայի խորհրդի անդամ յոթ պետություն, 8-րդ հոդվածի համապատասխան, իրենց համաձայնությունն են հայտնում սույն Արձանագրությանը պարտավորություններ ստանձնելու կապակցությամբ:

2.8ամկացած անդամ պետության համար, որն Արձանագրությանը պարտավորություն ստանձնելու իր համաձայնությունը հայտնում է հետագայում, այն ուժի մեջ է մտնում վավերագիրը կամ ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ հանձնելուց հետո երկամսյա ժամկետի լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրվանից:

## Հոդված 10

### Ավանդապահի գործառույթները

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններին ծանուցում է:

- ցանկացած ստորագրման մասին, հավանության արժանացման,
- վավերագիրը, ընդունման կամ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին,
- 6 և 9-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- սույն Արձանագրությանը վերաբերող ցանկացած այլ գործողության, ծանուցման կամ հայտարարության մասին:

Ի հավատումն որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1984 թ. նոյեմբերի 22-ին, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որը պահպում է Եվրոպայի խորհրդի արխիվում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետությանը:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԺՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ**

## Նախարար

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները՝

**հաշվի առնելով**, որ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ հօչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդիանուր խաղաղության հիմքն է,

**ընդունելով**, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից,

**ընդունելով**, որ, Մարդու իրավունքների համընդիանուր հօչակագրին համապատասխան, քաղաքացիական և քաղաքական ազատությունից օգտվող և վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իրենց կարող է իրականանալ, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, եթե յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, այնպես էլ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից,

**հաշվի առնելով** Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ պետությունների ստանձնած պարտավորությունը՝ խրախուսելու մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդիանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

**գիտակցելով**, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց և այն կոլեկտիվի հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը,

համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

## ՄԱՍ I.

### Հոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու փոխահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից բխող որևէ պարտավորության: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության՝ իրեն պատկանող միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում և նրանք, ովքեր պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսում են ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգում այդ իրավունքը:

## ՄԱՍ II.

### Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն

պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավազորության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները, և ապահովել դրանք առանց որևէ խորականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

2. Եթե դա դեռևս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ միջոցներ ընդունելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

- a. ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, եթե նույնիսկ այդ խախտումը կատարել են պաշտոնապես գործող անձինք,
- b. ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.
- c. ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:

### Հոդված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

### Հոդված 4

1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովորդի կյանքը և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղունն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խորականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18-րդ հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն Դաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

### Հոդված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, խունք կամ անձ իրավունք ունի գրադարձելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որը ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով:

2. Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետությունում չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որևէ հիմնական իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմանը, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով:

### ՄԱՍ III.

#### Հոդված 6

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անկապտելի իրավունք: Այդ

իրավունքը պաշպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն գրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան

դատավճիռները կարող են կյացգել միայն ամենածանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն Դաշնագրի և Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթներին: Այդ պատիժը կարող է իրականացնել միայն ի կատարումն իրավասու դատարանի կյացրած վերջնական դատավճիռի:

3. Եթե կյանքից գրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն Դաշնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս որևէ կերպ շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստամձնած ցանկացած պարտավորությունից:

4. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայցելու ներում կամ դատավճիռ մեղմացում: Համաներումը, ներումը կամ դատավճիռ մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի նշանակվում տասնութ տարեկանից ցածր անձանց կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն Դաշնագրի

մասնակից որևէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ բույլ չտալու համար:

#### Հոդված 7

1. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերնունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

#### Հոդված 8

1. Ոչ ոք չպետք է պահի ստրկության մեջ. ստրկությունը և

ստրկավաճառությունը արգելվում են իրենց բոլոր ձևերով:

2. Ոչ ոք չպետք է պահի անազատ վիճակում:

3.ա) Մարդուն չի կարելի պարտադրել կատարելու ստիպողական կամ հարկադիր աշխատանք.

- a. այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքների հետ, Յկետի (ա) ենթակետը խոչընդուն չի հանդիսանում իրավասու դատարանի կողմից նման պատժի սահմանող դատավճիռի հիման վրա տաժանակիր աշխատանքի իրականացնանք,
- b. սույն կետի նպատակի համար «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.

(ի) (բ) Ենթակետում շիհատակված ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը,

(ii) ռազմական բնույթի ցանկացած ծառայություն, և այն երկրներում, որտեղ ճանաչվում է գինվորական ծառայությունից քաղաքական ու կրոնական շարժադրմերով հրաժարումը, գինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ցանկացած ծառայություն,

(iii) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

(iv) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

## Հոդված 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է գրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

1. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պատճառները և շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:

3. Յուրաքան մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցում է դատավորի կամ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական իշխանություն իրականացնելու. նա ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի, քայլ ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահելու հետևանքով իր ազատությունից գրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

## Հոդված 10

1. Ազատությունից գրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

2. a) Այն դեպքերում, երբ չկան բացառիկ հանգամանքներ,

մեղադրյալներու տեղավորվում են դատապարտյալներից առանձին, և նրանց հատկացվում է չդատապարտված անձի կարգավիճակին համապատասխանող առանձին ռեժիմ,

b) անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և հնարավորինս կարծ ժամկետում հասցում դատարան՝ որոշում կայացնելու համար:

3. Պատժի համակարգով բանտարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերադաստիարակումը: Անչափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, և նրանց հատկացվում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին համապատասխանող ռեժիմ:

## Հոդված 11

Ոչ ոք չի կարող ազատազրկել միայն այն բանի հիմքով, որ նա ի վիճակի չէ կատարելու որևէ պայմանագրային պարտավորություն:

## Հոդված 12

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական երկրից, մեկնելու իրավունք:

3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ քարոյականության կամ ել այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

4. Ոչ ոք չի կարող կամայականորեն գրկվել իր սեփական երկրը մուտք գործելու իրավունքից:

### Հոդված 13

Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման և, եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկների ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք, և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

### Հոդված 14

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու իրապարակային քննության իրավունք: Մանուլին ու հասարակայնությանը կարող է արգելվել մասնակցելու ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ քարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմների մասնավոր կյանքի շահերը, կամ ել հատուկ հանգամանքների դեպքում, երբ իրապարակայնությունը կիսախտի արդարադատության շահերը. նաև արգելումը կատարվում է այն չափով, որչափ, դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ դատական ցանկացած որոշում պետք է լինի իրապարակային, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան կամ գործը վերաբերում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ

իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական

մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

- a. շտապ կարգով և մանրակրկիտ, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի քննությի ու հիմքի մասին,
- b. բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր իսկ ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար,
- c. դատվել առանց չարդարացված հապաղման,
- d. դատվել իր ներկայությամբ և իրեն պաշտպանել անձանբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել այդ իրավունքի մասին, և ցանկացած դեպքում, ելնելով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի վճարելու այդ պաշտպանին,

- e. հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալ, որ այդ վկաները հարցաքննվեն, և կանչել ու հարցաքննել իր օգտին ցուցմունք տվող վկաներին՝ նույն պայմաններով, ինչ առկա են իր դեմ ցուցմունք տվող վկաների համար,
- f. օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով,
- g. պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր

ճանաչելու:

#### 4. Անշափահասների դեպքում դատավարությունը պետք է

լինի այնպիսին, որպեսզի հաշվի առնվեն նրանց տարիքը և նրանց վերադաստիարակությանն աջակցելու ցանկությունը:

#### 5. Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք

իրավունք ունի, որպեսզի իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից, օրենքի համաձայն:

#### 6. Եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական

հանցագործության համար և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն իիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա ննան դատապարտնան հետևանքով պատիժ կրած անձն օրենքի համաձայն ստանում է փոխհատուցում եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

#### 7. Ոչ ոք չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն

հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

### Հոդված 15

1. Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

#### 2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի

տալուն և պատժելուն ցանկացած գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել է քրեական հանցագործություն:

### Հոդված 16

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ նա գտնվելիս լինի, ունի իր իրավասությեկտության ճանաչման իրավունք:

### Հոդված 17

1. Արգելվում է կամայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ:

2. Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվելու իրավունք:

## Հոդված 18

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, իրապարակավ կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:

3. Կրոնի կամ համոզմունքների արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ պահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունն ապահովելու սեփական համոզմունքներին համապատասխան:

## Հոդված 19

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հավատարին մնալու իր կարծիքներին՝ առանց միջամտության:

2. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր թե տպագիր, գեղարվեստորեն արտահայտված, թե սեփական ընտրությամբ մանուկի ցանկացած միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պարտականությունների: Ուստի, այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով միայն և լինեն անհրաժեշտ.

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության, կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

## Հոդված 20

1. Պատերազմի ցանկացած քարոզություն պետք է արգելվի օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին ցանկացած ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով:

## Հոդված 21

Ֆանաչվում է խաղաղ հանրահավաքների իրավունքը: Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

## Հոդված 22

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու

ազատության իրավունք, ներառյալ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց մեջ նտնելու իրավունքը:

2. Այդ իրավունքից օգտվելը ենթակա չէ ոչ մի սահմանափակման,

բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքից օգտվելու օրինական սահմանափակումների կիրառումն այն անձանց համար, ովքեր նտնում են զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս Միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1948 թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վեհական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վեհական այդ երաշխիքների:

### Հոդված 23

1. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական

բջիջն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:

2. Ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար

ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:

3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների

ազատ ու լիակատար համաձայնության:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու համար ամուսինների իրավունքների և պարտականությունների հավասարությունը ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի երեխայի անհրաժեշտ պաշտպանություն:

### Հոդված 24

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սերի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի և ունենա անուն:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու

իրավունք:

### Հոդված 25

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և հնարավորություն ունի.

a. մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,

- a. ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդիանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,
- b. իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

## Հոդված 26

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ժագումը, գույքային դրությունը, ծննությ կամ այլ կարգավիճակ:

## Հոդված 27

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն եթերական, կրոնական կամ լեզվական փողորանականություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակույթից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզվից օգտվելու իրավունքը:

## ՄԱՍ IV.

### Հոդված 28

1. Ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտե (այսուհետ սույն Դաշնագրում անվանվում է Կոմիտե): Այն կազմված է տասնութ անդամներից և կատարում է ստորև նախատեսվող գործառույթները:

2.Կոմիտեի կազմի մեջ մտնում են այն անձինք, ովքեր սույն Դաշնագրի մասնակից պետությունների քաղաքացիներ են և օժտված են քարոյական քարձր հատկանիշներով ու մարդու իրավունքների բնագավառում ունեն ճանաչված իրավասություն, ընդ որում նկատի է առնվում իրավաբանական փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության օգտակարությունը:

3. Կոմիտեի անդամներն ընտրվում և աշխատում են անձնապես:

## Հոդված 29

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ այն անձանց ցուցակից, ովքեր բավարարում են 28-րդ հոդվածում նախատեսված պահանջները և այդ նպատակով առաջադրվել են սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից:

2. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջադրել երկու թեկնածությունից ոչ ավելի: Այդ անձինք պետք է լինեն իրենց առաջադրող պետության քաղաքացիներ:

3. Յուրաքանչյուր անձ ունի կրկնակի առաջադրման իրավունք:

## Հոդված 30

1. Նախնական ընտրություններն անցկացվում են սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս անց:

2. Կոմիտեի յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն չորս ամիս առաջ, բացի 34-րդ հոդվածին համապատասխան թափուր հայտարարված տեղերի հանալրման ընտրություններից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գրավոր իրավերով դիմում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու Կոմիտեի անդամության թեկնածություններ:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն կազմում է նման ձևով առաջադրված բոլոր անձանց այբբենական ցուցակ՝ նշելով սույն Դաշնագրի մասնակից այն պետությունները, որոնք առաջադրել են այդ անձանց, և հիշյալ ցուցակը ներկայացնում է սույն Դաշնագրի մասնակից այն պետություններին ոչ ուշ, քան յուրաքանչյուր ընտրության անցկացման օրվանից մեկ ամիս առաջ:

4. Կոմիտեի անդամների ընտրությունն անցկացվում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների նիստում, որը իրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմակերպության կենտրոնական հաստատություններում: Այդ նիստում, որի համար քվորում է կազմում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի կազմում ընտրված են համարվում այն անձինք, որոնց թեկնածություններն ստանում են առավելագույն թվով ձայներ և մասնակից պետությունների՝ ներկա գտնվող ու քվեարկող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

### Հոդված 31

1. Կոմիտեի կազմի մեջ չի կարող ընդգրկվել նույն պետության մեկից ավելի քաղաքացի:

2. Կոմիտեի ընտրությունների ժամանակ հաշվի է առնվում անդամության աշխարհագրական հավասար բաշխումը և քաղաքակրթության տարբեր ձևերի ու իրավական հիմնական համակարգերի ներկայացուցչությունը:

### Հոդված 32

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորսամյա ժամկետով: Նրանք իրավունք ունեն վերընտրվելու իրենց թեկնածությունների կրկնակի առաջադրման դեպքում: Սակայն, առաջին ընտրությունների ժամանակ ընտրված անդամներից հննի լիազորությունների ժամկետն ավարտվում է երկամյա ժամանակահատվածի վերջում. առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշվում են վիճակահանությամբ այն նիստի նախագահողի կողմից, որի մասին հիշատակվում է 30-րդ հոդվածի 4-րդ կետում:

2. Լիազորությունների լրանալուց հետո ընտրություններն անց են կացվում սույն Դաշնագրի սույն մասի նախորդ հոդվածներին համապատասխան:

### Հոդված 33

1. Եթե Կոմիտեի որևէ անդամի լիազորությունները դադարեցվել են մյուս անդամների միաձայն կարծիքով, ժամանակավոր բնույթի բացակայությունից բացի, որևէ այլ պատճառով, Կոմիտեի նախագահը տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետև այդ անդամի տեղը հայտարարում է թափուր:

2. Կոմիտեի որևէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում նախագահն անհապաղ տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ տեղը հայտարարում է թափուր մահվան կամ այն օրվանից, եթե պաշտոնաթողությունն ուժի մեջ է մտնում:

### Հոդված 34

1. Եթե, 33-րդ հոդվածին համապատասխան տեղը թափուր է հայտարարվում և եթե փոխարինման ենթակա անդամի լիազորությունների ժամկետը չի լրանում տեղը թափուր հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետությանը, որը կարող է երկու ամսվա ընթացքում, 29-րդ հոդվածին համապատասխան, թեկնածություն ներկայացնել այդ թափուր տեղի համար:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձևով առաջադրված անձանց այբբենական ցուցակ և ներկայացնում սույն Դաշնագրի մասնակից պետություններին: Թափուր տեղի համար ընտրություններն այնուհետև անցկացվում են սույն Դաշնագրի սույն մասի համապատասխան դրույթների համաձայն:

3. Կոմիտեի այն անդամը, որն ընտրվում է 33-րդ հոդվածին համապատասխան հայտարարված թափուր տեղի համար, պաշտոնն զբաղեցնում է այն անդամի լիազորությունների ժամկետի մնացյալ մասի ընթացքում, որի տեղը Կոմիտեում ազատվել է հիշյալ հոդվածի դրույթների համաձայն:

## Հոդված 35

Կոմիտեի անդամներն ստանում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվող վարձատրություն՝ Միավորված ազգերի կազմակերպության միջոցներից, Գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվող կարգով ու պայմաններով՝ հաշվի առնելով Կոմիտեի պարտականությունների կարևորությունը:

## Հոդված 36

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը անհրաժեշտ անձնակազմ ու նյութական միջոցներ է տրամադրում Կոմիտեի կողմից իր գործառույթներն արդյունավետ, սույն Դաշնագրին համապատասխան իրականացնելու համար:

## Հոդված 37

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կոմիտեի առաջին նիստը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում:

2. Իր առաջին նիստից հետո Կոմիտեն հավաքվում է սեփական Ընթացակարգի կանոններով նախատեսված ժամանակ:

3. Կոմիտեն, սովորաբար, հավաքվում է Միավորված ազգերի

կազմակերպության կենտրոնական հաստատություններում կամ Միավորված ազգերի կազմակերպության՝ ժնկի գրասենյակում:

## Հոդված 38

Կոմիտեի յուրաքանչյուր անդամ, նախքան իր պարտականություններն ստանձնելը, Կոմիտեի դռնբաց նիստում հանդիսավոր հայտարարություն է անում իր գործառույթներն անաշառ ու բարեխիղճ կատարելու վերաբերյալ:

## Հոդված 39

1. Կոմիտեն իր պաշտոնատար անձանց ընտրում է երկամյա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:

2. Կոմիտեն ընդունում է իր Ընթացակարգի կանոնները, սակայն դրանք պետք է, մասնավորապես, նախատեսեն, որ.

ա)քվորում կազմում են Կոմիտեի տասներկու անդամները,

բ) Կոմիտեի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների մեջամասնությամբ:

## Հոդված 40

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են գեկույցներ ներկայացնել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ծեռնարկած միջոցների և այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ծեզք բերած առաջնթացի մասին:

- իամապատասխան մասնակից պետության համար սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընացքում,
- դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն:

2. Բոլոր գեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի

կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանք ուղարկում է Կոմիտեին՝ քննության առնելու համար: Զեկույցներում նշվում են, եթե կան, այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրի կենսագործման վրա:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը, Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, կարող է շահագրգիռ մասնագիտացված հաստատություններին ուղարկել զեկույցների այն հատվածների պատճենները, որոնք կարող են վերաբերել նրանց իրավասության ոլորտին:

4. Կոմիտեն ուսումնասիրում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր զեկույցները և ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կհամարի: Կոմիտեն կարող է նաև այդ դիտողությունները, սույն Դաշնագրի մասնակից պետություններից ստացված զեկույցների պատճենների հետ միասին, ուղարկել Տնտեսական և տոյնական խորհրդին:

5. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են Կոմիտեին ներկայացնել իրենց նկատառումները բոլոր այն դիտողությունների վերաբերյալ, որոնք կարող են արվել սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

## Հոդված 41

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունը, սույն հոդվածին համապատասխան, կարող է ցանկացած ժամանակ հայտարարել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ստանալու և քննարկելու հաղորդումներ այն մասին, որ որևէ մասնակից պետություն հաստատում է, թե մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները: Սույն հոդվածով նախատեսվող հաղորդումները կարող են ընդունվել և քննարկվել միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացրել են այն մասնակից պետությունը, որը հայտարարություն է արել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի այդ իրավասությունը: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդում, եթե այն պատկանում է նման հայտարարություն չարած մասնակից պետությանը: Սույն հոդվածին համապատասխան ստացված հաղորդումները քննության են առնվում հետևյալ ընթացակարգով.

- a. Եթե սույն Դաշնագրի մասնակից որևէ պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կենսագործում սույն Դաշնագրի դրույթները, ապա նա կարող է գրավոր հաղորդմանը այդ հարցի մասին տեղեկացնել իիշյալ մասնակից պետությանը: Այդ հաղորդման ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հաղորդումն ստացած պետությունը նման հաղորդում հյած պետությանը ներկայացնում է իիշյալ հարցը պարզաբանող գրավոր բացատրություն կամ ցանկացած այլ հայտարարություն, որտեղ պետք է բովանդակվեն, որքանով դա հնարավոր ու նպատակահարմար է, ներպետական այն ընթացակարգերն ու պաշտպանության միջոցները, որոնք կիրառվել են, կիրառվելու են կամ կարող են կիրառվել տվյալ հարցի առնչությանը,
- b. Եթե ստացող պետության կողմից նախնական հաղորդումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում հարցը չի լուծվում ի բավարարումն երկու շահագրգիռ մասնակից պետությունների, այդ պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի հարցը հանձնել Կոմիտեին՝ այդ մասին տեղեկացնելով Կոմիտեին և մյուս պետությանը,
- c. Կոմիտեն իրեն հանձնված հարցը քննության է առնում միայն այն բանից հետո, եթե հավաստիանում է, որ տվյալ դեպքում միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան օգտագործվել և սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր մատչելի միջոցները: Տվյալ կանոնը չի գործում, եթե այդ միջոցների կիրառումը չարդարացված կերպով ծգծվել է,
- d. սույն հոդվածում նախատեսվող հաղորդումները քննության առնելիս Կոմիտեն անցկացնում է դունփակ նիստեր,
- e. Կոմիտեն, (c) ենթակետի դրույթները պահպանելով, իր բարի ծառայություններն է մատուցում շահագրգիռ մասնակից պետություններին՝ սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի հիման վրա հարցը բարեկանարար լուծելու նպատակով,
- f. իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցով Կոմիտեն կարող է դիմել (b) ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններին՝ գործին վերաբերող ցանկացած տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով,
- g. (b) ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններն իրավունք ունեն ներկա գտնվել Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ և առաջարկություններ անել բանավոր և (կամ) գրավոր,

h. Կոմիտեն (b) Ենթակետին համապատասխան ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում ներկայացնում է գեկույց՝

(i) Եթե (e) Ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում է ձեռք բերվում, ապա Կոմիտեն իր գեկույցում սահմանափակվում է հակիրճ շարադրելով փաստերն ու ձեռք բերված կարգավորումը,

(ii) Եթե (e) Ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում ձեռք չի բերվում, ապա Կոմիտեն իր գեկույցում սահմանափակվում է փաստերի հակիրճ շարադրանքով. շահագրգիռ մասնակից պետությունների գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառումը կցվում են գեկույցին:

Յուրաքանչյուր հարցի կապակցությամբ գեկույցն ուղարկվում է շահագրգիռ մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, եթե սույն Դաշնագրի տասը մասնակից պետություններ հանդես են գալիս հայտարարությամբ սույն հոդվածի առաջին կետին համապատասխան: Այդ հայտարարությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Նման գործողությունը չի խոչընդոտում ցանկացած հարցի քննարկմանը, որը, սույն հոդվածին համապատասխան, արդեն ուղարկված հաղորդման առարկա է. այն բանից հետո, եթե Գլխավոր քարտուղարը ծանուցում է ստացել հայտարարությունը հետ վերցնելու մասին, ցանկացած մասնակից պետության հետագա ոչ մի հաղորդում չի ընդունվում եթե շահագրգիռ մասնակից պետությունը հանդես չի եկել նոր հայտարարությամբ:

## Հոդված 42

1. a) Եթե 41-րդ հոդվածին համապատասխան Կոմիտեին համձնված որևէ հարց չի լուծվել ի բավարարումն շահագրգիռ մասնակից պետությունների, Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետությունների նախնական համաձայնությամբ նշանակել հատուկ հաշտարար հանձնաժողով /այսուհետ՝ Հանձնաժողով/: Հանձնաժողովի բարի ծառայությունները շահագրգիռ մասնակից պետություններին են մատուցվում սույն Դաշնագրի դրույթների պահպանման հիման վրա, տվյալ հարցի փոխհամաձայնեցված լուծման նպատակով:

բ) Հանձնաժողովը կազմվում է շահագրգիռ մասնակից պետությունների համար ընդունելի հինգ անդամից: Եթե շահագրգիռ մասնակից պետությունները երեք ամսվա ընթացքում համաձայնության չեն գալիս Հանձնաժողովի ամբողջ կազմի կամ նրա մի մասի վերաբերյալ, ապա Հանձնաժողովի՝ նշանակման հարցում ընդիանուր համաձայնության չարժանացած անդամներն ընտրվում են Կոմիտեի կազմից, գաղտնի քերարկությամբ, Կոմիտեի ձայնների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն շահագրգիռ մասնակից պետությունների կամ սույն Դաշնագրի ոչ մասնակից պետության կամ այն մասնակից պետության քաղաքացիներ, որը հանդես չի եկել 41-րդ հոդվածին համապատասխան հայտարարությամբ:

3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին և ընդունում իր Ընթացակարգի կանոնները:

4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար գումարվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում կամ Միավորված ազգերի կազմակերպության ժնկի գրասենյակում: Սակայն, Հանձնաժողովն իր որոշմամբ, խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի և շահագրգիռ մասնակից պետությունների հետ, դրանք կարող են գումարել այլ հարմար վայրերում:

5. Քարտուղարությունը 36-րդ հոդվածին համապատասխան սպասարկում է նաև սույն հոդվածի հիման վրա նշանակված հանձնաժողովներին:

6. Կոմիտեի ստացած և ուսումնասիրած տեղեկատվությունը հանձնվում է հանձնաժողովի տնօրինությանը, և վերջինս շահագրգիռ մասնակից պետություններին կարող է դիմել գործին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն ներկայացնելու խնդրանքով:

7. Հանձնաժողովի կողմից հարցի ամբողջական քննարկումից հետո, սակայն, համենայն դեպս, ոչ ուշ, քան տվյալ հարցը հանձնաժողովին հանձնելուց 12 ամիս անց, նա կոմիտեի նախագահին ներկայացնում է գեկույց՝ շահագրգիռ մասնակից պետություններին ուղարկելու համար՝

- a. Եթե հանձնաժողովը չի կարող տվյալ հարցի քննարկումն ավարտել տասներկու ամսվա ընթացքում, ապա նա իր գեկույցը սահմանափակում է իր կողմից տվյալ հարցի քննարկման վիճակի հակիրծ շարադրանքով,
- b. Եթե տվյալ հարցի փոխհանաձայնեցված կարգավորում ձեռք է բերվում սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիմնան վրա, Հանձնաժողովն իր գեկույցը սահմանափակում է փաստերի ու ձեռք բերված կարգավորման հակիրծ շարադրանքով,
- c. Եթե (b) ենթակետի դրույթների շրջանակում կարգավորում ձեռք չի բերվում, հանձնաժողովի գեկույցը պարունակում է նրա փաստացի եզրակացությունները շահագրգիռ մասնակից պետությունների վեճին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ և հանձնաժողովի նկատառումներն այդ հարցի փոխհանաձայնեցված կարգավորման հնարավորությունների մասին: Այդ գեկույցը պարունակում է նաև շահագրգիռ մասնակից պետությունների ներկայացրած գրավոր միջնորդությունները և բանավոր միջնորդությունների գրառունք,
- d. Եթե հանձնաժողովի գեկույցը ներկայացվում է (c) ենթակետի համաձայն, ապա շահագրգիռ մասնակից պետություններն այդ գեկույցն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում կոմիտեի նախագահին տեղեկացնում են այն մասին, թե իրենք համաձայն են արդյոք Հանձնաժողովի գեկույցի բովանդակությանը:

8. Սույն հոդվածի դրույթները չեն նվազեցնում կոմիտեի՝ 41-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

9. Շահագրգիռ մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների բոլոր ծախսերը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:

10. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կարող է, անհրաժեշտության դեպքում, վճարել հանձնաժողովի անդամների ծախսերը՝ մինչև, սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան, դրանց հատուցումը շահագրգիռ մասնակից պետությունների կողմից:

### Հոդված 43

Կոմիտեի և հատուկ հաշտարար հանձնաժողովների անդամները, որոնք կարող են նշանակվել 42-րդ հոդվածի համաձայն, օժուված են Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունների փորձագետների այն արտոնություններով, առավելություններով և անձեռնմխելիությամբ, որոնք նախատեսված են Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների և անձեռնմխելիության մասին կոնվենցիայի համապատասխան բաժիններով:

### Հոդված 44

Սույն Դաշնագրի իրականացմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց վնասելու մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստաթղթերով ու կոնվենցիաներով սահմանված կամ դրանց համաձայն գործող ընթացակարգերին, և սույն Դաշնագրի մասնակից պետություններին չեն խոչընդոտում օգտագործելու վեճերի լուծման այլ ընթացակարգեր՝ իրենց միջև գործող ընդհանուր կամ հատուկ միջազգային համաձայնագրերի հիմնան վրա:

### Հոդված 45

Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային Տնտեսական և սոցիալական խորհրդի միջոցով ներկայացնում է ամենամյա գեկույց իր գործունեության մասին:

## ՄԱՍ V.

### Հոդված 46

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների կամոնադրությունների այն դրույթների նշանակության նվազեցում, որոնք սահմանում են Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հաստատությունների տարրեր մարմինների համապատասխան պարտականությունները այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագիրը:

### Հոդված 47

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես իրենց բնական հարստությունից ու ռեսուրսներից լիարժեքորեն և ազատորեն օգտվելու և դրանք օգտագործելու՝ բոլոր ժողովուրդների անկապտելի իրավունքի սահմանափակում:

## ՄԱՍ VI.

### Հոդված 48

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ նրա ցանկացած մասնագիտացված հաստատությունների անդամի, Միջազգային դատարանի Ստատուտի մասնակից ցանկացած պետության և սույն Դաշնագրին մասնակցելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հրավիրած ցանկացած այլ պետության համար:
2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
3. Սույն Դաշնագիրը միանալու համար բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:
4. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:
5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագիրն ստորագրած կամ Դաշնագրին միացած բոլոր պետություններին տեղեկացնում է յուրաքանչյուր վավերագիրը կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին:

### Հոդված 49

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում երեսունինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն Դաշնագիրը կամ միանալու նրան երեսունինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

### Հոդված 50

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

### Հոդված 51

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն, այնուհետև, առաջարկված ցանկացած լրացում ու փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, թե իրենք համաձայն են արդյոք հրավիրելու մասնակից պետությունների կոնֆերանս՝ այդ առաջարկությունները քննարկելու և դրանց վերաբերյալ քվեարկություն անցկացնելու նպատակով։ Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է կոնֆերանսի անցկացման օգտին, Գլխավոր քարտուղարը հրավիրում է այն Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո։ Կոնֆերանսին ներկա գտնված և քվեարկությանը մասնակցած մասնակից պետությունների մեծամասնության ընդունած ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը։

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում, եթե հաստատվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից և ընդունվում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու-երրորդի մեծամասնությամբ իրենց սահմանադրական գործընթացների համաձայն։

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները պարտադիր են դառնում այն մասնակից պետությունների համար, որոնք ընդունել են դրանք, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները և նրանց կողմից նախկինում ընդունված ցանկացած լրացում ու փոփոխություն։

## Հոդված 52

48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նույն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին ծանուցում է հետևյալի մասին։

- 48-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,
- 49-րդ հոդվածի համաձայն՝ սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի և 51-րդ հոդվածի համաձայն կատարված ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին։

## Հոդված 53

Սույն Դաշնագրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հակասարագոր են, ի պահ է համձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ։

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի վավերացված պատճեններն ուղարկում է 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին։

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՅԹԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՄԻԶԱՋՎԱՅԻՆ ՂԱԾՆԱԳՐԻՆ ԿԻՑ ԿԱՄՑՏԻՐ ԱՐՁԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(1966 թ. դեկտեմբերի 16)

Սույն Արձանագրության մասնակից պետությունները՝

**Ակատի ունենալով**, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) հետագա նպատակների իրագործման և նրա դրույթների կատարման համար նպատակահարմար է Դաշնագրի IV մասի համաձայն վրա հիմնադրված Մարդու իրավունքների կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) հնարավորություն ընձեռել ընդունելու և քննության առնելու, ինչպես նախատեսված է սույն Արձանագրությամբ, հաղորդումներ առանձին անձանցից, ովքեր հայտարարում են, թե իրենք զոհ են Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման,

համաձայնել են ներքոհիշյալի շուրջ.

## Հոդված 1

Դաշնագրի մասնակից այն պետությունը, որը դառնում է սույն Արձանագրության մասնակից, ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու առանձին անձանց՝ իր իրավազորությանը ենթակա հաղորդումներ, ովքեր հայտարարում են, թե տվյալ մասնակից պետության կողմից՝ Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման գոհ են դարձել: Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե այն վերաբերում է Դաշնագրի մասնակից պետության, որը, սակայն, մասնակից չէ սույն Արձանագրությանը:

## Հոդված 2

Հոդված 1 դրույթներին համապատասխան, անձինք, ովքեր հայտարարում են, թե խախտվել է Դաշնագրում ամրագրված իրենց այս կամ այն իրավունքը, և ովքեր սպառել են իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, կարող են գրավոր հաղորդում ներկայացնել Կոմիտեի քննարկմանը:

## Հոդված 3

Կոմիտեն կարող է անընդունելի համարել սույն Արձանագրության համաձայն ներկայացվող, բայց անստորագիր կամ, Կոմիտեի կարծիքով, հաղորդումներ ներկայացնելու իրավունքը չարաշահող և կամ Դաշնագրի դրույթներին անհամատելելի ցանկացած հաղորդում:

## Հոդված 4

1. Կոմիտեն, 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, սույն Արձանագրության համաձայն ներկայացվող ցանկացած հաղորդման մասին ծանուցում է սույն Արձանագրության մասնակից այն պետությանը, որը, ինչպես պնդում են, խախտում է Դաշնագրի որևէ դրույթ:

2. Ծանուցում ստացած պետությունը վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ՝ պարզաբանելով քննության առարկա խնդիրը և, եթե դրանք կամ, պաշտպանության այն միջոցները, որոնք կարող են կիրառվել այդ պետության կողմից:

## Հոդված 5

1. Կոմիտեն քննության է առնում սույն Արձանագրության համաձայն ստացված հաղորդումներ՝ հաշվի առնելով առանձին անձանց և շահագրգիռ մասնակից պետության ներկայացրած ողջ գրավոր տեղեկատվությունը:

Կոմիտեն չի քննում անձանցից ստացված ոչ մի հաղորդում, քանի դեռ չի համոզվել, որ:

- այդ նույն հարցը չի քննարկվում միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի համաձայն,
- տվյալ անձն սպառել է իրավական պաշտպանության բոլոր մատչելի ներպետական միջոցները: Այս դրույթը չի գործում, եթե նման միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:

3. Սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդումները քննելիս Կոմիտեն գումարում է փակ նիստեր:

4. Իր նկատառումները Կոմիտեն հայտնում է համապատասխան մասնակից պետությանը և անձին:

## Հոդված 6

Կոմիտեն Դաշնագրի 45-րդ հոդվածով նախատեսված իր ամենամյա գեկուցման մեջ ամփոփ շարադրում է սույն Արձանագրությանը համապատասխան իրականացրած իր գործունեությունը:

## Հոդված 7

Մինչև Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ին ընդունած Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի վերաբերյալ 1514 (XV) բանաձևի նպատակների հրագործումը՝ սույն Արձանագրության դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը և Միավորված ազգերի կազմակերպության ու նրա մասնագիտացված հաստատությունների միջազգային այլ հանաձայնագրերով ու փաստաթրերով այդ ժողովուրդներին ընձեռված հանրագիր ներկայացնելու իրավունքը:

## Հոդված 8

- Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Դաշնագիրը ստորագրած ցանկացած պետության կողմից:
- Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերագրերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
- Սույն Արձանագրությունը միանալու համար բաց է Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության համար:
- Միանալ ուժի մեջ մտնում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հանձնելով:
- Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին հայտնում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ հանձնելու մասին:

## Հոդված 9

- Դաշնագրի՝ ուժի մեջ մտնելու դեպքում սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:
- Տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Արձանագրությունը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ դրան միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

## Հոդված 10

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

## Հոդված 11

- Սույն Արձանագրության մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետև Գլխավոր քարտուղարը առաջարկված յուրաքանչյուր լրացում ու փոփոխություն փոխանցում է սույն Արձանագրության մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, համաձայն են արդյոք հրավիրելու մասնակից պետությունների կոնֆերանս՝ այդ առաջարկությունները քննարկելու և քվեարկելու նպատակով: Եթե կոնֆերանս հրավիրելու օգտին արտահայտվում է մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը, ապա Գլխավոր քարտուղարը հրավիրում է կոնֆերանսը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող

մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ամեն մի լրացում և փոփոխություն հաստատման է ներկայացվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայում հաստատվելուց և սույն Արձանագրության մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ այդ պետությունների սահմանադրական ընթացակարգի համաձայն ընդունվելուց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դառնում են պարտադիր՝ դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Արձանագրության դրույթները և նախկինում նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

## Հոդված 12

1. Մասնակից յուրաքանչյուր պետություն ցանկացած ժամանակ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցումնվ կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց երեք ամիս անց:

2. Չեղյալ հայտարարումը չի խոչընդոտում մինչև դրա ուժի մեջ մտնելը 2-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաղորդումների առնչությամբ սույն Արձանագրության դրույթների կիրառումը շարունակելուն:

## Հոդված 13

Սույն Արձանագրության 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Դաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին տեղեկացնում է՝

- 8-րդ հոդվածի համաձայն ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,
- 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու և 11-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ժամկետի մասին,
- 12-րդ հոդվածի համաձայն՝ չեղյալ հայտարարելու մասին:

## Հոդված 14

1. Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն բնագրերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության վավերացված պատճեններն ուղարկում է Դաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱԾՆԱԳՐԻՆ ԿԻՑ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄԸՆՏԻՐ

### ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՎԵՐԱՑՈՒՄ ՄԱՐԱՊԱՏՃԻ

(1989 թ. դեկտեմբերի 15)

Սույն Արձանագրության մասնակից պետությունները՝

հավատալով, որ մահապատճի վերացումը կնպաստի մարդկային արժանապատվության ամրապնդմանը և մարդու իրավունքների առաջադիրական զարգացմանը,

**Վկայակոչելով** 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածը և 1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի 6-րդ հոդվածը,

**նշելով**, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրի 6-րդ հոդվածի՝ մահապատժի վերացմանը վերաբերող ձևակերպումը հստակորեն ենթադրում է, որ մահապատժի վերացումը ցանկալի է,

**համոզված լինելով**, որ մահապատիժը վերացնելու բոլոր միջոցները պետք է դիտել որպես առաջադիմություն կյանքի իրավունքի ապահովման ասպարեզում,

**ցանկանալով** սույնով ստանձնել մահապատիժը վերացնելու միջազգային պարտավորություն,

**համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.**

## Հոդված 1

1. Սույն Արձանագրության մասնակից պետության իրավագորության ներքո գտնվող ոչ մի անձ մահապատժի չի ենթարկվում:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն ծերնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցներն իր իրավագորության շրջանակներում մահապատիժը վերացնելու համար:

## Հոդված 2

1. Զի թույլատրվում որևէ վերապահում սույն Արձանագրության առնչությամբ, բացառությամբ վավերացման կամ միանալու պահին արված վերապահումի, որով մահապատժի կիրառում է նախատեսվում պատերազմի ժամանակ՝ համաձայն ռազմական բնույթի առավել ծանր հանցագործության կատարման համար մեղադրական դատավճռի:

2. Նման վերապահում կատարած մասնակից պետությունը վավերացման կամ միանալու պահին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հաղորդում է իր ազգային օրենսդրության՝ պատերազմի ժամանակ կիրառվող համապատասխան դրույթների մասին:

3. Նման վերապահում կատարած մասնակից պետությունը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցում է իր տարածքում պատերազմական ցանկացած դրույթյան սկսվելու կամ դադարելու մասին:

## Հոդված 3

Սույն Արձանագրության մասնակից պետությունները Մարդու իրավունքների կոմիտեին Դաշնագրի 40-րդ հոդվածին համապատասխան ներկայացվող գեկույցներում ընդգրկում են տեղեկատվություն սույն Արձանագրության իրականացման համար իրենց ծերնարկած միջոցառումների մասին:

## Հոդված 4

Դաշնագրի մասնակից այն պետությունների առնչությամբ, որոնք հայտարարություն են կատարել 41-րդ հոդվածի համաձայն, Մարդու իրավունքների կոմիտեի՝ այնպիսի հաղորդումներ ստանալու և քննարկելու իրավասությունը, երբ մի մասնակից պետություն պնդում է, թե մի այլ մասնակից պետություն չի կատարում իր պարտավորությունները, տարածվում է սույն Արձանագրության դրույթների վրա, եթե միայն շահագրգիռ մասնակից պետությունը հակառակը չի հայտարարել վավերացման կամ միանալու պահին:

## Հոդված 5

1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագրին կից առաջին կամընտիր Արձանագրության մասնակից պետությունների առնչությամբ, Մարդու իրավունքների Կոմիտեի՝ նրանց իրավագորության ներքո գտնվող առանձին անձանց հաղորդումներ ստանալու և քննարկելու իրավասությունը տարածվում է սույն Արձանագրության դրույթների վրա, եթե միայն շահագրգիռ մասնակից պետությունը հակառակը չի հայտարարել վավերացման կամ միանալու պահին:

## Հոդված 6

- Սույն Արձանագրության դրույթները կիրառվում են որպես Դաշնագիրը լրացնող դրույթներ:
- Առանց սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն վերապահում անելու հնարավորությանը խոչընդոտելու, սույն Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքը ենթակա չէ որևէ սահմանափակման՝ Դաշնագրի 4-րդ հոդվածի համաձայն:

## Հոդված 7

- Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Դաշնագիրն ստորագրած ցանկացած պետության համար:
- Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման ցանկացած պետության կողմից, որը վավերացրել է Դաշնագիրը կամ միացել նրան: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
- Սույն Արձանագրությունը բաց է միանալու համար Դաշնագիրը վավերացրած կամ նրան միացած ցանկացած պետության համար:
- Միանալն իրականացվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:
- Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունը ստորագրած կամ նրան միացած բոլոր պետություններին հաղորդում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնման մասին:

## Հոդված 8

- Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:
- Տասներորդ վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնումից հետո սույն Դաշնագիրը վավերացրած կամ նրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

## Հոդված 9

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

## Հոդված 10

- Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Դաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններին տեղեկացնում է՝
- սույն Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն կատարված վերապահումների, հաղորդումների և ծանուցումների մասին,
  - սույն Արձանագրության 4-րդ կամ 5-րդ հոդվածների համաձայն արված հայտարարությունների մասին,

- c. սույն Արձանագրության 7-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,
- d. սույն Արձանագրության 8-րդ հոդվածի համաձայն նրա ուժի մեջ մտնելու ժամկետի մասին:

## Հոդված 11

- Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարագոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:
- Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության հավաստված պատճեններն ուղարկում է Դաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱԾՆԱԳԻՐ

(1966թ. դեկտեմբերի 16)

## ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները՝

ուշադրության առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդիանուր խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից,

ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրին համապատասխան, վախից ու կարիքից ծերբազատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականացվել, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, այնպես էլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից,

ուշադրության առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ պետությունները պարտավոր են խրախուսել մարդու իրավունքների և ազատությունների համընդիանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

գիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց և այն կոլեկտիվի հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը,

համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

## ՄԱՍ I

### Հոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստությունները և ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու որևէ պարտավորություն, որը բխում է

Քիոյշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից և միջազգային իրավունքից: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող գրկվել գոյության՝ իրեն պատկանող միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, այդ թվում և նրանք, որոնք պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, պետք է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը:

## ՍԱՍ I I

### Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում, հասնելու համար սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը բոլոր պատշաճ միջոցներով, ներառյալ, մասնավորապես, օրենսդրական միջոցների ընդունմամբ:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ սույն Դաշնագրով հոչակված իրավունքները կիրականցվեն առանց որևէ խորականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզնունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

3. Զարգացող երկրները, պատշաճ կերպով հաշվի առնելով մարդու իրավունքները և իրենց ազգային տնտեսությունը, կարող են որոշել, թե սույն Դաշնագրով ճանաչվող տնտեսական իրավունքներն իրենք ինչ ծավալով պետք է երաշխավորեն իրենց քաղաքացի չիանդիսացող անձանց համար:

### Հոդված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղանարդկանց և կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

### Հոդված 4

Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ պետությունը կարող է սույն Դաշնագրին համապատասխան իր սահմանած իրավունքների իրականացումն ենթարկել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանվում են օրենքով և միայն այնքանով, որքանով դա համատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ, և բացառապես ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով:

### Հոդված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ ենթարկվի որևէ պետության, խմբի կամ անձի իրավունքը՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Դաշնագրով ճանաչված իրավունքների կամ ազատությունների վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ ծավալով, քան նախատեսվում է սույն Դաշնագրով:

2. Չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների հիման վրա ցանկացած երկրում ճանաչված կամ գոյություն ունեցող հիմնական իրավունքների որևէ սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորնամբ, թե սույն Դաշնագիրը նման իրավունքներ չի ճանաչում կամ ճանաչում է նվազ ծավալով:

## ՄԱՍ III.

### Հոդված 6

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն այդ իրավունքի ապահովմանն ուղղված համապատասխան քայլեր:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետության կողմից այդ իրավունքի լիարժեք իրականացմանը հասնելու նպատակով ձեռնարկվող քայլերն ընդգրկում են տեխնիկական և մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ծրագրեր, տնտեսական, սոցիալական ու մշակութային անշեղ զարգացման և արտադրական լրիվ զրադարձության ձեռքբերման ուղիներ ու մեթոդներ այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու քաղաքական և տնտեսական հիմնական ազատությունները:

## Հոդված 7

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը, մասնավորապես,

ա) վարձատրություն, որը բոլոր աշխատավորների համար նվազագույնն ապահովում է.

ի. արդար աշխատավարձ և հավասարարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն առանց որևէ տարրերակման, մասնավորապես, կանաց համար պետք է երաշխավորվեն աշխատանքի այնպիսի պայմաններ, որոնցից օգտվում են տղամարդիկ՝ հավասար աշխատանքի դիմաց հավասար վճարում,

(ii) իրենց և իրենց ընտանիքների համար բավարար կենսապայմաններ՝ սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան,

բ) անվտանգ և իհգիենիկ աշխատանքային պայմաններ,

շ) յուրաքանչյուրի համար իր աշխատանքում համապատասխան ավելի բարձր աստիճանով առաջսաղացման հավասար հնարավորություն՝ պայմանավորված բացառապես աշխատանքային ստաժով և որակավորումով,

դ) հանգստի, ժամանցի հնարավորություն և աշխատանքային ժամանակի ողջամիտ սահմանափակում ու վճարվող պարբերական արձակուրդ, ինչպես նաև վարձատրություն տոնական օրերի դիմաց:

## Հոդված 8

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել՝

ա) յուրաքանչյուրի՝ իր տնտեսական և սոցիալական շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը՝ համապատասխան կազմակերպության կանոնների պահպանման միակ պայմանով: Նշված իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության,

բ) արհեստակցական միությունների՝ ազգային դաշնություններ կամ համադաշնություններ կազմելու իրավունքը և վերջիններիս՝ միջազգային արհեստակցական կազմակերպություններ ստեղծելու ու կամ դրանց միանալու իրավունքը,

շ) արհեստակցական միությունների ազատորեն գործելու իրավունքը՝ առանց որևէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության,

դ) գործադրությունից իրավունքը՝ այն տվյալ երկրի օրենքներին համապատասխան իրականացման պայմանով:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքներն իրականացնելու օրինական սահմանափակումների նախատեսում այն անձանց համար, ովքեր մտնում են պետության գինված ուժերի կամ ոստիկանության կազմի կամ վարչակազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ՝ 1948 թ. Կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու նշված Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վեհական օրենքը կիրառելու ի վեհական այդ երաշխիքների:

### Հոդված 9

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության, իրավունքը:

### Հոդված 10

Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ.

1. Ընտանիքին, որը հասարակության բնական ու ինմանական բջիջն է, պետք է ըստ հնարավորին տրամադրվեն ամենալայն պաշտպանություն և աջակցություն, մասնավորապես, ընտանիքի կազմավորնան ժամանակ և քանի դեռ ընտանիքը պատասխանատու է ոչ ինքնուրույն երեխաների խնամքի ու կրթության համար: Անուսնությունը պետք է կայանա անուսնացողների ազատ համաձայնությամբ:

2. Հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի հղի կանաց մինչև ծննդաբերությունը և դրանից հետո ընկած ողջամիտ ժամանակաշրջանի ընթացքում: Այդ ժամանակաշրջանի ընթացքում աշխատող մայրերին պետք է տրամադրվի վճարովի արձակուրդ կամ արձակուրդ սոցիալական ապահովության բավարար նպաստներով:

3. Պաշտպանության և օգնության հատուկ միջոցները պետք է ձեռնարկվեն բոլոր երեխաների ու դեռահասների համար՝ առանց որևէ խտրականության ընտանեկան ծագման կամ այլ հատկանիշով: Երեխաներն ու դեռահասները պետք է պաշտպանված լինեն տնտեսական և սոցիալական շահագործումից: Նրանց բարոյականության կամ առողջության համար վնասակար, կամ կյանքի համար վտանգավոր, կամ բնականոն զարգացման համար հնարավոր վնասակար բնագավառում նրանց աշխատանքի օգտագործումը պետք է պատժելի լինի օրենքով: Պետությունները պետք է նաև սահմանեն տարիքային սահմանափակումներ, որից ցածր տարիքի երեխայի վճարովի աշխատանքն արգելվում է և պատժվում օրենքով:

### Հոդված 11

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի, և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները կձեռնարկեն պատշաճ միջոցներ այդ իրավունքի իրականացումն ապահովելու համար՝ այս կապակցությամբ ընդունելով ազատ կամարտահայտության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, ճանաչելով յուրաքանչյուրի՝ սովորված չնաև միջազգային համագործակցության օգնությամբ ձեռնարկում են միջոցներ, ներառյալ հատուկ ծրագրերը, որոնք նպատակ ունեն:

ա) բարելավելու սննդամթերքի արտադրության, պահպաննան և բաշխման մեթոդները՝ տեխնիկական և գիտական գիտելիքների լայն օգտագործման, սննդան սկզբունքների մասին գիտելիքների տարածման և ագրարային համակարգերի զարգացման կամ բարենորոգման միջոցով այնպես, որպեսզի ապահովեն բնական ռեսուրսների առավել արդյունավետ զարգացումն ու օգտագործումը,

բ) հաշվի առնելով ինչպես սննդամթերք ներմուծող, այնպես էլ արտահանող երկրների հիմնահարցերը՝ ապահովելու պարենի համաշխարհային պաշարների արդարացի բաշխումը պահանջնություններին համապատասխան:

## Հոդված 12

- Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:
- Սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով ձեռնարկվող միջոցներն ընդգրկում են միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են.
  - մեռելածնության ու մանկական մահացության կրծատման ապահովման և երեխայի առողջ զարգացման համար,
  - շրջակա միջավայրի հիգիենայի և արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերի բարելավման համար,
  - համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման և դրանց նկատմամբ վերահսկողության համար,
  - այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և բժշկական խնամք:

## Հոդված 13

- Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ կրթության իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և իմնական ազատությունների նկատմամբ: Մասնակից պետությունները, այնուհետև, համաձայնում են, որ կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ հասարակությանը, նպաստելու բոլոր ազգերի և ռասայական, երնկարական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխընթացքներուն հանդուրժողականությանն ու բարեկամությանը և աջակցելու խաղաղության պահպանման ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը:
- Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ընդունում են, որ այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով.
  - տարրական կրթությունը պարտադիր է և անվճար բոլորի համար,
  - միջնակարգ կրթությունն իր տարբեր ծերով, ներառյալ՝ միջնակարգ տեխնիկական և մասնագիտական կրթությունը, բաց և մատչելի է բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, աստիճանաբար անվճար կրթություն նաև միջոցով,
  - բարձրագույն կրթությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, հավասարապես մատչելի է բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, աստիճանաբար անվճար կրթություն նաև միջոցով,
  - իմնական կրթությունը խրախուսվում կամ հնարավորինս ակտիվացվում է այն անձանց համար, ովքեր չեն անցել կամ չեն ավարտել իրենց տարրական կրթության լրիվ դասընթացը,
  - պետք է ակտիվորեն իրականացնել բոլոր մակարդակների դպրոցների համակարգի զարգացումը, սահմանել կրթաթոշակների բավարար համակարգ և շարունակաբար կատարելագործել ուսուցչական կազմի նյութական պայմանները:
- Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների՝ իրենց երեխաների համար, պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից բացի, այլ դպրոցների ընտրության ազատությունը, որոնք համապատասխանում են պետության կողմից սահմանվող կամ հաստատվող կրթական նվազագույն ստանդարտներին, ինչպես նաև իրենց երեխաների կրոնական և բարոյական

դաստիարակությունը իրենց սեփական համոզմունքներին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը:

4. Սույն հոդվածի ոչ մի մաս չպետք է մեկնաբանվի որպես առանձին անձանց և մարմինների՝ ուսումնական հաստատություններ ստեղծելու և դրանք սույն հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքներին և նման հաստատություններում այնպիսի նվազագույն ստանդարտներին համապատասխան դեկավարելու ազատության սահմանափակում, որոնք կարող են սահմանվել պետության կողմից:

### Հոդված 14

Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն, որը մասնակից դառնալու ժամանակ իր մետրոպոլիայի տարածքում կամ իր իրավագորության տակ գտնվող մյուս տարածքներում չի կարողացել ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն, պարտավորվում է երկու տարվա ընթացքում մշակել և ընդունել միջոցառումների մանրանասն ծրագիր պարտադիր անվճար տարրական կրթության սկզբունքը ողջամիտ ժամկետում, որը պետք է նշված լինի այդ ծրագրում, աստիճանաբար կենսագործելու համար:

### Հոդված 15

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝

ա) մասնակցելու մշակութային կյանքին,

բ) օգտվելու գիտական առաջընթացի արդյունքներից և դրանց գործնական կիրառումից,

ս) օգտվելու այն բարոյական և նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկվող միջոցներին դասվում են նրանք, որոնք անհրաժեշտ են կրթության ու մշակույթի նվաճումների պահպանան, զարգացման և տարածման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են

հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են

գիտական ու մշակութային բնագավառներում միջազգային կապերի և համագործակցության խրախուսումից ու զարգացումից բխող օգուտը:

### ՄԱՍ IV

### Հոդված 16

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են այս Դաշնագրի 2-րդ մասին համապատասխան ներկայացնել գեկույցներ իրենց ձեռնարկած միջոցառումների և սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների պահպանան ասպարեզում ձեռք բերված առաջընթացի մասին:

2. а) Բոլոր գեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի

կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններմ ուղարկում է Տնտեսական և սոցիալական խորհրդի քննությանը՝ սույն Դաշնագրի դրույթներին հանապատասխան:

а. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նաև մասնագիտացված հաստատություններին է ուղարկում սույն Դաշնագրի մասնակից և միաժամանակ այդ հաստատությունների անդամ պետությունների գեկույցների կամ դրանց ցանկացած

համապատասխան հատվածների պատճենները, այնքանով, որքանով նման գեկույցները կամ այդ գեկույցների հատվածները վերաբերում են բոլոր այն հարցերին, որոնք մտնում են վերը նշված հաստատությունների պարտականությունների շրջանակների մեջ՝ նրանց հիմնադիր ակտերին համապատասխան:

### Հոդված 17

1. Սույն Դաշնագրի մասնակից պետություններն իրենց գեկույցները

ներկայացնում են փուլ առ փուլ, այն ժրագրին համապատասխան, որը պետք է սահմանվի Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից, սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում մասնակից պետությունների շահագրգիր մասնագիտացված հաստատությունների հետ խորհրդատվություններ անցկացնելուց հետո:

2. Զեկույցները կարող են մատնանշել այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրով ստանձնած պարտավորությունների կատարման աստիճանի վրա:

3. Եթե համապատասխան տեղեկատվությունը սույն Դաշնագրի որևէ

մասնակից պետություն ավելի վաղ է ներկայացրել Միավորված ազգերի կազմակերպությանը կամ որևէ մասնագիտացված հաստատության, ապա այդ տեղեկատվությունը վերաշարադրելու անհրաժեշտություն չկա, և բավական կլինի ճշգրիտ հղումը ներկայացված տեղեկատվությանը:

### Հոդված 18

Տնտեսական և սոցիալական խորհուրդը, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ասպարեզում Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունների համաձայն, կարող է համաձայնության գալ մասնագիտացված հաստատությունների հետ սույն Դաշնագրի իրենց գործունեության ոլորտին վերաբերող դրույթների կատարման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացի մասին իրեն գեկույցներ ներկայացնելու վերաբերյալ: Այդ գեկույցները կարող են ներառել տվյալներ՝ հիշյալ դրույթների կատարման մասին իրենց իրավասու մարմինների ընդունած որոշումների և հանձնարարականների վերաբերյալ:

### Հոդված 19

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է, քննության առնելու և ընդհանուր հանձնարարականներ տալու համար կամ, համապատասխան դեպքերում, որպես ի գիտություն, Մարդու իրավունքների հանձնաժողովին փոխանցել մարդու իրավունքների վերաբերյալ գեկույցներ, որոնք 16 և 17-րդ հոդվածներին համապատասխան ներկայացրել են պետությունները, և մարդու իրավունքների վերաբերյալ գեկույցներ, որոնք 18-րդ հոդվածին համապատասխան ներկայացրել են մասնագիտացված հաստատությունները:

### Հոդված 20

Սույն Դաշնագրի մասնակից շահագրգիր պետությունները և մասնագիտացված հաստատությունները կարող են Տնտեսական և սոցիալական խորհրդին ներկայացնել դիտողություններ 19-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանկացած ընդհանուր հանձնարարականի կամ նման ընդհանուր հանձնարարականի հղման կապակցությամբ, որը տեղ է գտնում Մարդու իրավունքների հանձնաժողովի ցանկացած գեկույցում կամ ցանկացած փաստաթղթում, որում առկա է այդ հղումը:

### Հոդված 21

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է ժամանակ առ ժամանակ Գլխավոր ասամբլեային ներկայացնել գեկույցներ ընդհանուր բնույթի հանձնարարականներով և ձեռնարկված միջոցառումների ու սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների ընդհանուր պահպանման ապահովման բնագավառում ձեռք բերված առաջընթացի մասին սույն Դաշնագրի մասնակից պետությունների և մասնագիտացված հաստատությունների ներկայացրած տեղեկատվության համառոտ շարադրանքով:

### Հոդված 22

Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարող է Միավորված ազգերի կազմակերպության մյուս մարմինների, նրանց օժանդակ մարմինների և տեխնիկական օգնության տրամադրման գործով զբաղվող մասնագիտացված հաստատությունների ուշադրությունը հրավիրել սույն Դաշնագրի այս մասում հիշատակված գեկուցների կապակցությամբ ծագող հիմնահարցերի վրա, որոնք կարող են այդ մարմինների համար օգտակար լինել իրենց հրավասությունների շրջանակներում միջազգային այն միջոցների նպատակահարմարությունը որոշելիս, որոնք կարող են նպաստել սույն Դաշնագրի աստիճանական արդյունավետ կենսագործմանը:

### Հոդված 23

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները համաձայնում են, որ սույն Դաշնագրով ճանաչվող հրավիրների հրականացմանը նպաստող միջազգային միջոցառումները ներառում են այնպիսի մեթոդներ, ինչպիսին են կոնվենցիաների կնքումը, հանձնարարականների ընդունումը, տեխնիկական օգնության տրամադրումը և խորհրդատվության նպատակով տարածաշրջանային համդիպումների ու տեխնիկական խորհրդակցությունների անցկացումը, ինչպես նաև շահագրգիռ կառավարությունների հետ համատեղ կազմակերպված հետազոտությունները:

### Հոդված 24

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և մասնագիտացված հաստատությունների կանոնադրությունների դրույթների նշանակության նվազեցում, որոնք սահմանում են Միավորված ազգերի կազմակերպության գանազան մարմինների և մասնագիտացված հաստատությունների համապատասխան պարտականություններն այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագրիը:

### Հոդված 25

Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես բոլոր ժողովուրդների՝ իրենց բնական հարստություններից և ռեսուրսներից լիարժեքորեն ու ազատորեն օգտվելու և դրանք օգտագործելու անկապտելի հրավունքի նվազեցում:

## ՄԱՍ V

### Հոդված 26

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Միավորված ազգերի

կազմակերպության անդամ պետության կամ այդ կազմակերպության ցանկացած մասնագիտացված հաստատության անդամ պետության, Միջազգային դատարանի Ստատուտի ցանկացած անդամ պետության և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից սույն Դաշնագրին մասնակից դաշնալու հրավիրված ցանկացած այլ պետության համար:

2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Դաշնագիրը բաց է միանալու սույն հոդվածի 1-ին

կետում նշված ցանկացած պետության համար:

4. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագիրը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին ծանուցում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ հանձնելու մասին:

### Հոդված 27

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին Երեսունհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից Երեք ամիս անց:

2. Երեսունհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Դաշնագիրը վավերացնած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից Երեք ամիս անց:

### Հոդված 28

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

### Հոդված 29

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարն, այնուհետև, առաջարկված ցանկացած լրացում կամ փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ խնդրելով հայտնել, թե նրանք համաձայն են արդյոք այդ առաջարկությունները քննության առնելու և դրանց առթիվ քվեարկություն անցկացնելու նպատակով մասնակից պետությունների կոնֆերանս հրավիրել: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է նման կոնֆերանսի օգտին, ապա Գլխավոր քարտուղարը կոնֆերանսը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվելուց և սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան ընդունվելուց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դաշնում են պարտադիր դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները և նախկինում կատարված ու նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

### Հոդված 30

26-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն կատարվող ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նույն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին տեղեկացնում է ներքոհիշյալը.

ա) 26-րդ հոդվածի համաձայն, ստորագրումների, վավերացումների և միանալու մասին,

բ) 27-րդ հոդվածի համաձայն, սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի, և 29-րդ հոդվածի համաձայն, ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

### Հոդված 31

1. Սույն Դաշնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի հաստատված պատճեններն ուղարկում է 26-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

# ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՈՒԹՅԱՆ ԴԱՐՁԵՐՈՎ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(1954թ. մարտի 1)

Սույն Կոնվենցիան ստորագրողները՝

ցանկանալով կատարելագործել 1905 թ. հուլիսի 17-ի քաղաքացիական դատավարության մասին կոնվենցիան, ինչը թելադրված է նրա կիրառման փորձով,

որոշում են այդ նպատակով կնքել նոր կոնվենցիա և համաձայնության են գալիս հետևյալ դրույթների շուրջ.

#### I. Դատական իրամանների և արտադատական

##### Քաղաքացիության հանձնումը

###### Հոդված 1

Պայմանավորվող պետությունների տարածքում քաղաքացիական կամ առևտրային գործերով փաստաթղթերն արտասահմանում գտնվող անձանց հանձնվում են հայցող պետության հյուպատոսի կողմից հայցվող պետության նշանակած մարմիններին ներկայացվող խնդրանքով: Խնդրանքը, որուն նշվում են փոխանցվող փաստաթուղթն ընդունած մարմնի անվանումը, կողմների անուններն ու կարգավիճակը, հասցեատիրոջ հասցեն ու փաստաթղթի բնույթը, կազմվում է հայցվող մարմնի լեզվով: Հայցվող մարմինը հյուպատոսին է փոխանցում հավաստագիր առ այն, որ փաստաթուղթը հանձնվել է, կամ նշում է փաստաթուղթը չհանձնելու պատճառները:

Հյուպատոսի խնդրանքի հետ կապված ցանկացած դժվարություն լուծվում է դիվանագիտական ուղիներով:

Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն մյուս պայմանավորվող պետությունների հետ հաղորդակցվելիս կարող է հայտարարել, որ ցանկանում է, որպեսզի իր տարածքում փաստաթղթեր հանձնելու վերաբերյալ 1-ին պարբերությունում նշված տվյալներ պարունակող խնդրանքը ներկայացվի դիվանագիտական ուղիներով:

Նախորդ դրույթներում ոչինչ չի կարող խոչընդոտել երկու պայմանավորվող պետություններին՝ համաձայնության գալու իրենց համապատասխան մարմինների միջև անմիջական հաղորդակցություն թույլատրելու հարցում:

###### Հոդված 2

Փաստաթղթերի հանձնումը կատարվում է հայցվող պետության օրենսդրության համաձայն իրավասու մարմնի միջոցով: Բացառությամբ 3-րդ հոդվածում նշված դեպքերի, այդ մարմնը կարող է փաստաթղթերի հանձնումն իրականացնելիս սահմանափակվել դրանք հասցեատիրոջը փոխանցելով, եթե վերջինս կամավոր է ընդունում դրանք:

###### Հոդված 3

Փաստաթղթերի հանձնման մասին խնդրանքին կցվում են հանձնման ենթակա փաստաթղթերի երկու պատճեն:

Եթե հանձնման ենթակա փաստաթուղթը կազմված է հայցվող մարմնի լեզվով կամ պայմանավորվող երկու պետությունների միջև համաձայնեցված լեզվով, կամ դրան կցված է թարգմանություն՝ այդ լեզուներից որևէ մեկով, հայցվող մարմինը, եթե խնդրանքում նման ցանկություն է արտահայտված, փաստաթորթի հանձնումը կատարում է նման դեպքերի համար իր ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով կամ հատուկ կարգով, եթե դա չի հակասում իր օրենսդրությամբ: Եթե խնդրանքում նման ցանկություն արտահայտված չէ, ապա հայցվող մարմինը նախառաջ փորձում է խնդրանքը կատարել 2-րդ հոդվածով սահմանված կարգով:

Այլ կարգ նախատեսող համաձայնության բացակայության դեպքում նախորդ պարբերությունում նշված թարգմանության իսկությունը հավաստում է հայցող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալը կամ հայցվող պետության երդվալ թարգմանիչը:

#### Հոդված 4

Փաստաթորթի 1, 2 և 3-րդ հոդվածներին համապատասխան հանձնումը կարող է մերժվել միայն այն դեպքում, եթե պետությունը, որի տարածքում հանձնումը կատարվում է, գտնում է, որ դա կարող է վնաս պատճառել իր ինքնիշխանությամբ կամ անվտանգությամբ:

#### Հոդված 5

Փաստաթորթի հանձնման հաստատումը կատարվում է ամսաթվի նշումով՝ հավաստված ստացականի կամ հայցվող մարմնի կողմից տրված հավաստագրի միջոցով, որում արձանագրվում է հանձնման փաստը, և նշվում են հանձնման կարգն ու ամսաթիվը:

Ստացականը կամ հավաստագրը պետք է գրված լինեն պատճեններից մեկի վրա կամ կցված լինեն դրան:

#### Հոդված 6

Նախորդ հոդվածների դրույթները չպետք է խոչընդոտեն՝

1. փաստաթուղթն արտասահմանում գտնվող շահագրգիր կողմերին՝ ուղղակիորեն փոստով ուղարկելու իրավունքին,
2. շահագրգիր կողմերին՝ փաստաթորթերն այն երկրի դատական պաշտոնյայի կամ իրավասու այլ պաշտոնյայի միջոցով ուղղակիորեն ստանալու իրավունքին, որտեղ կատարվում է փաստաթորթի հանձնումը,
3. յուրաքանչյուր պետության՝ արտասահմանում գտնվող անձանց՝ փաստաթորթերն իրենց երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների միջոցով ուղղակիորեն հանձնելու իրավունքին:

Փաստաթորթի հանձնման վերոհիշյալ ցանկացած եղանակ կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե այն ճանաչվում է շահագրգիր պետությունների միջև կոնվենցիաներով կամ եթե, նման կոնվենցիաների բացակայության դեպքում, պետությունը, որի տարածքում հանձնումը կատարվում է, այդ հարցում առարկություն չունի: Տվյալ պետությունը չի կարող առարկել, եթե 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված դեպքերում փաստաթուղթը պետք է հանձնվի հայցող պետության քաղաքացուն առանց հարկադրանքի կիրառման:

#### Հոդված 7

Փաստաթորթի հանձնումը չի կարող հիմք հանդիսանալ այս կամ այն հարկի կամ տուրքի գանձման համար:

Այնուամենայինվ, համաձայնության բացակայության դեպքում, հայցվող պետությունն իրավունք ունի հայցող պետությունից պահանջելու այն ծախսերի փոխառուցումը, որոնք առաջացել են դատական պաշտոնյայի միջամտության կամ 3-րդ հոդվածում նախատեսված հատուկ կարգի կիրառման հետևանքով:

## II. Դատական հանձնարարությունները

### Հոդված 8

Պայմանավորվող մի պետության դատական մարմինը կարող է իր օրենսդրության դրույթներին համապատասխան քաղաքացիական կամ առևտորային գործերով դատական հանձնարարություններով դիմել պայմանավորվող մյուս պետության իրավասու մարմնին՝ խնդրելով վերջինիս իր իրավազորության շրջանակներում կատարել քննություն կամ այլ դատավարական գործողություններ:

### Հոդված 9

Հայցող պետության հյուպատոսը դատական հանձնարարությունները փոխանցում է հայցվող պետության նշանակած իրավասու մարմնին: Վերջինս հյուպատոսին է հանձնում փաստաթուղթ, որը վկայում է դատական հանձնարարության կատարման մասին, կամ նշում դրան խոչընդոտող պատճառները:

Նման փոխանցման հետ կապված ցանկացած դժվարություն կարգավորվում է դիվանագիտական ուղիներով:

Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն, պայմանավորվող մյուս պետությունների հետ հաղորդակցվելիս, կարող է ցանկություն հայտնել, որպեսզի իր տարածքում իրականացվելիք դատական հանձնարարությունը փոխանցվի դիվանագիտական ուղիներով:

Վերոհիշյալ դրույթներում ոչինչ չի կարող խոչընդոտել պայմանավորվող երկու պետություններին՝ համաձայնության գալու իրենց համապատասխան մարմինների միջև անմիջական փոխանցում թույլատրելու հարցում:

### Հոդված 10

Այլ կարգ նախատեսող համաձայնության բացակայության դեպքում դատական հանձնարարությունը պետք է կազմվի հայցվող մարմնի լեզվով կամ պայմանավորվող երկու պետությունների միջև համաձայնեցված լեզվով, կամ դրան պետք է կցվի թարգմանություն այդ լեզուներից որևէ մեկով, որի իսկությունը պետք է հավաստի հայցող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալը կամ հայցվող պետության երդվյալ թարգմանչը:

### Հոդված 11

Դատական մարմինը, որին ուղղված է դատական հանձնարարությունը, պետք է կատարի այն՝ կիրառելով հարկադրանքի նույն միջոցները, որոնք կիրառվում են հայցվող պետության մարմնի հանձնարարությունը կամ շահագրգիռ կողմի՝ այդ նպատակով ներկայացված խնդրանքը կատարելիս: Հարկադրանքի միջոցների կիրառումը պարտադիր չէ, եթե խոսքը վերաբերում է կողմերի՝ դատարան ներկայանալուն:

Հայցվող մարմինը, եթե ցանկանում է, տեղեկացվում է հանձնարարության կատարման վայրի ու ժամանակի մասին, որպեսզի շահագրգիռ կողմը հնարավորություն ունենա ներկա գտնվելու:

Դատական հանձնարարության կատարումը կարող է մերժվել, միայն՝ եթե՝

1. հաստատված չէ փաստաթղթի իսկությունը,
2. հայցվող պետությունում դատական հանձնարարության կատարումը չի մտնում դատական իշխանության գործառույթների մեջ,
3. պետությունը, որի տարածքում պետք է կատարվի դատական հանձնարարությունը, գտնում է, որ դրա կատարումը վնաս կպատճառի իր ինքնիշխանությանը կամ անվտանգությանը:

### Հոդված 12

Եթե հայցվող մարմինը իրավասու չէ կատարելու դատական հանձնարարությունը, ապա, նրա օրենսդրությամբ նախատեսված նորմերի համաձայն, այն ինքնարերաբար փոխանցվում է նույն պետության համապատասխան իրավասու դատական մարմնին:

### Հոդված 13

Բոլոր այն դեպքերում, երբ դատական հանձնարարությունը չի կատարվում հայցվող մարմնի կողմից, վերջինս այդ մասին անհապաղ տեղեկացնում է հայցող մարմնին նշելով, ինչ վերաբերում է 11-րդ հոդվածին, դատական հանձնարարության կատարումը մերժելու պատճառները և, ինչ վերաբերում է 12-րդ հոդվածին, այն մարմնիը, որին հանձնարարությունը փոխանցվել է:

### Հոդված 14

Դատական հանձնարարությունը կատարող դատական մարմնը կիրառում է իր երկու օրենքները՝ կապված ընթացակարգերի պահպանման հետ:

Սակայն, երբ հայցող մարմնը դիմում է հատուկ ընթացակարգ կիրառելու խնդրանքով, ապա այդ խնդրանքը բավարարվում է, եթե նման ընթացակարգը չի հակասում հայցվող պետության օրենսդրությամբ:

### Հոդված 15

Վերոհիշյալ հոդվածների դրույթները չեն բացառում յուրաքանչյուր պետության՝ դատական հանձնարարություններն իր դիմագիտական կամ հյուպատոսական գործակալների միջոցով ուղղակիրուն կատարելու իրավունքը, եթե դա թույլ են տալիս շահագործի պետությունների միջև կնքված կոնվենցիաները, կամ, եթե պետությունը, որի տարածքում դատական հանձնարարությունը պետք է կատարվի, առարկություն չունի:

### Հոդված 16

Դատական հանձնարարությունների կատարումը չի կարող հիմք հանդիսանալ այս կամ այն հարկի կամ տուրքի գանձման համար:

Այնուամենայնիվ, համաձայնության բացակայության դեպքում, հայցվող պետությունը պետք է իրավունք ունենա հայցող պետությունից պահանջելու վկաներին կամ փորձագետներին վճարած գումարի փոխհատուցում, ինչպես նաև, վկաների ինքնակամ չներկայանալու դեպքում, դատական պաշտոնյայի հարկադրված միջանտության հետ կապված այն ծախսերի փոխհատուցում, որոնք առաջանում են 14-րդ հոդվածի 2-րդ մասի հնարավոր կիրառման հետևանքով:

## III. Երաշխիքները օտարերկրացի հայցվորների կողմից վճարվող

### դատական ծախսերի և տուգանքների վճարման համար

### Հոդված 17

Պայմանավորվող պետություններից մեկի քաղաքացիները, ովքեր բնակվում են այդ պետություններից մեկի տարածքում և պայմանավորվող մեկ այլ պետության դատարաններում հանդես են գալիս որպես հայցվող կամ երրորդ կողմ, չեն կարող պարտադրվել գրավ կամ ապահովում վճարելու այն պատճառով միայն, որ նրանք օտարերկրացի են կամ չեն բնակվում կամ ապրում պայմանավորվող այն պետության տարածքում, որի դատարանում հանդես են գալիս:

Նույն կանոնը կիրառվում է հայցվորից կամ երրորդ կողմից ի ապահովումն դատական ծախսերի գանձվող ցանկացած այլ վճարի առնչությամբ:

Բոլոր այն պայմանագրերը, որոնցով պայմանավորվող պետությունները կարող էին իրենց քաղաքացիներին, անկախ նրանց բնակության վայրից, ազատել **cautio judicatum solvi** -ից կամ դատական ծախսերի վճարումից, մնում են ուժի մեջ:

### Հոդված 18

Ապահովումից, գրավից կամ վճարումից 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների կամ այն պետության օրենսդրության հիման վրա, որտեղ սկսված է դատական քննությունը, ազատված հայցվորի կամ երրորդ կողմի դեմ պայմանավորվող մի պետության տարածքում կայացված՝ դատական ծախսերի

Վճարման վերաբերյալ դատական որոշումը յուրաքանչյուր այլ պայմանավորվող պետությունում իրավասու մարմնի կողմից կատարվում է անվճար՝ դիվանագիտական ուղիներով ներկայացված խնդրանքով:

Նույն դրույթը կիրառվում է նաև դատական ծախսերի հետագա բռնագանձման վերաբերյալ դատական որոշումների նկատմամբ:

Վերոհիշյալ դրույթներում ոչինչ չի կարող խոչընդոտել պայմանավորվող երկու պետություններին՝ համաձայնության գալու այն մասին, որ դատական որոշումն ի կատար ածելու վերաբերյալ խնդրանքն աննիշականորեն ներկայացնի շահագրգիռ կողմը:

### Հոդված 19

Դատական ծախսերի և վճարումների մասին որոշումները ենթակա են կատարման առանց կողմերին լսելու, սակայն պայմանով, որ կողմը, որից բռնագանձում է կատարվում, ունենա տվյալ որոշումը գանգատարկելու իրավունք այն պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում որոշումը պետք է ի կատար ածվի:

Մարմինը, որն իրավասու է քննության առնելու որոշումն ի կատար ածելու խնդրանքը, պետք է սահմանափակվի հետևյալ հարցերի քննությամբ՝

1. արդյոք, վճիռ կայացնող պետության օրենսդրության համաձայն, որոշման պատճենը բավարարում է դրա իսկությանը ներկայացվող պահանջներին,
2. արդյոք, նույն օրենսդրության համաձայն, տվյալ որոշումը օրինական ուժի մեջ է մտել,
3. արդյոք որոշման եզրափակիչ նասը շարադրված է հայցվող մարմնի կամ շահագրգիռ երկու պետությունների կողմից համաձայնեցված լեզվով կամ արդյոք դրան կից կա այդ լեզուներից որևէ մեկով կատարված թարգմանություն, իսկ այլ կարգ նախատեսող համաձայնության բացակայության դեպքում՝ արդյոք դրա իսկությունը հավաստված է հայցող պետության դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալի կամ հայցվող պետության երդվալ թարգմանչի կողմից:

2-րդ պարբերության 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պայմանները կատարելու համար բավարար է՝ կամ հայցող պետության իրավասու մարմնի ներկայացրած հայտարարությունն առ այն, որ տվյալ որոշումը մտել է օրինական ուժի մեջ, կամ պատշաճ ձևով հավաստված և տվյալ որոշման ուժի մեջ մտնելը վկայող փաստարդերի տրամադրում: Վերոհիշյալ մարմինների՝ իրավասու լինելու հանգամանքը, այլ կարգ սահմանող համաձայնության բացակայության դեպքում, հավաստում է հայցվող երկրում արդարադատության մարմինները դեկավարող բարձրագույն պաշտոնյան: Վերոհիշյալ հայտարարությունը և հավաստագրի պետք է կազմվեն կամ թարգմանվեն 2-րդ պարբերության 3-րդ ենթակետով սահմանված կանոնների համաձայն:

Մարմինները, որոնք իրավասու են քննության առնելու դատական որոշումներն ի կատար ածելու վերաբերյալ խնդրանքը, գնահատում են սույն հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ ենթակետում նշված հաստատագրի, թարգմանության և հավաստագրերի համար կատարված ընդիհանուր ծախսերի չափը, եթե այդ մասին միաժամանակ խնդրում է կողմը: Նման ծախսերը դիտվում են որպես դատավարական ծախսեր:

### IV. Անվճար իրավաբանական օգնությունը

### Հոդված 20

Պայմանավորվող յուրաքանչյուր պետության քաղաքացի պայմանավորվող մյուս պետության տարածքում քաղաքացիական և առևտորային գործերով իրավունք ունի ստանալու անվճար իրավաբանական օգնություն նույն պայմաններով, ինչ այդ պետության քաղաքացիները՝ նրա օրենսդրությանը համպատասխան:

Այն պետություններում, որտեղ անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է նաև վարչական գործերով, վերոհիշյալ դրույթը կիրառվում է նաև նման գործերով իրավասու դատարաններում քննվող գործերի առնչությամբ:

## Հոդված 21

Յուրաքանչյուր դեպքում օտարերկրացու նշտական բնակության վայրի կամ, դրա բացակայության դեպքում, նրա ներկա բնակության վայրի մարմինների կողմից տրվում կամ ընդունվում է կարիքավորությունը հավաստող վկայական կամ հայտարարություն: Եթե այդ մարմինները պայմանավորվող պետության մարմիններ չեն և չեն տալիս կամ ընդունում նման վկայական կամ հայտարարություն, բավական է այն երկրի դիվանագիտական կան հյուպատոսական գործակալի տված կամ ընդունած վկայականը կամ հայտարարությունը, որի քաղաքացին է օտարերկրացին:

Եթե հայցվորը չի բնակվում այն երկրում, որտեղ ներկայացված է խնդրանքը, ապա կարիքավորությունը հավաստող վկայականը կամ հայտարարությունն անվճար հավաստվում է այն երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալի կողմից, որի տարածքում տվյալ փաստաթուղթը պետք է ներկայացվի:

## Հոդված 22

Կարիքավորությունը հավաստող վկայական կամ հայտարարություն տվող կամ ընդունող իրավասու մարմինը կարող է դիմումատուի ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ խնդրել պայմանավորվող մյուս պետությունների մարմիններից:

Անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու վերաբերյալ խնդրանքը քննության առնելու հարցում պատասխանատու մարմինն իր իրավասությունների շրջանակներում իրավունք ունի ստուգելու ներկայացված վկայականները, հայտարարություններն ու իրեն ներկայացված տեղեկատվությունը և պահանջելու ցանկացած այլ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները:

## Հոդված 23

Այս դեպքում, երբ կարիքավոր անձը գտնվում է ոչ այն երկրի տարածքում, որտեղ հայցվում է անվճար իրավաբանական օգնության տրամադրումը, իրավաբանական օգնության մասին նրա խնդրանքը կից վկայականի կամ հայտարարության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև լրացուցիչ փաստաթղթերի հետ միասին, կարող է իր քաղաքացիության երկրի հյուպատոսի կողմից փոխանցվել այն մարմնին, որն իրավասու է քննության առնելու վերոհիշյալ դիմումը, կամ այն պետության կողմից նշանակված մարմնին, որտեղ խնդրանքը պետք է քննության առնվի:

Դատական հանձնարարություններին վերաբերող 9-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ կետերի, 10 և 12-րդ հոդվածների դրույթները կիրառվում են նաև անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին խնդրանքի և նրան կից փաստաթղթերի հանձնման առնչությամբ:

## Հոդված 24

Եթե պայմանավորվող պետություններից որևէ մեկի քաղաքացուն տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն, ապա պայմանավորվող մյուս պետությունում տվյալ գործով փաստաթղթերի հանձնումը, անկախ դրա իրականացման կարգից, չի առաջացնում հայցվող պետության կատարած ծախսերի փոխառություն հայցող պետության կողմից:

Նույն դրույթը վերաբերում է դատական հանձնարարությունների կատարմանը, բացառությամբ փորձագետներին տրվող վճարումներից:

## V. Ծննդյան, ամուսնության և մահվան վկայականներից

### Քաղաքացների անվճար տրամադրումը

## Հոդված 25

Պայմանավորվող մի պետության քաղաքացի հանդիսացող կարիքավոր անձինք պայմանավորվող մյուս պետության տարածքում կարող են պահանջել ծննդյան, ամուսնության և մահվան վկայականներից քաղաքացների անվճար տրամադրում նույն պայմաններով, ինչ տվյալ պետության քաղաքացիները:

Ամուսնության համար անհրաժեշտ փաստաթղթերը հավաստում են անվճար՝ պայմանավորվող պետությունների դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալները:

## VI. Ազատազրկումը պարտքի դիմաց

### Հոդված 26

Քաղաքացիական կամ առևտրային գործերով՝ պարտքի դիմաց ազատազրկումը, որպես կատարման կամ նախազգուշական միջոց, չի կիրառվում պայմանավորվող որևէ պետության քաղաքացի հանդիսացող օտարերկրացու նկատմամբ այն դեպքերում, եթե դա չի կիրառվում տվյալ պետության քաղաքացիների նկատմամբ: Տվյալ երկրում բնակություն ունեցող քաղաքացու կողմից՝ որպես պարտքի դիմաց ազատազրկումից իրեն ազատ արձակելու հիմք ներկայացված այդ փաստը կարող է նմանապես վկայել հօգուտ պայմանավորվող պետության քաղաքացու, եթե, նույնիսկ, դա տեղի է ունեցել արտասահմանում:

## VII. Եզրափակիչ դրույթները

### Հոդված 27

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միջազգային մասնավոր իրավունքի կոնֆերանսի 7-րդ նստաշրջանում ներկայացված պետությունների համար:

Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը:

Յուրաքանչյուր վավերագրի՝ ի պահ հանձնվելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որի հավաստված պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկվում է ստորագրած յուրաքանչյուր պետության:

### Հոդված 28

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն չորրորդ վավերագրին ի պահ հանձնելուց հետո 60-րդ օրը:

Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետության համար, որն ավելի ուշ է վավերացրել այն, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերագրին ի պահ հանձնելու օրվանից հետո 60-րդ օրը:

### Հոդված 29

Սույն Կոնվենցիան վավերացրած պետությունների հարաբերություններում այն փոխարինում է 1905 թ. հուլիսի 17-ին Նախագայում կնքված Քաղաքացիական դատավարության հարցերով կոնվենցիային:

### Հոդված 30

Սույն Կոնվենցիան ինքնարերաբար կիրառվում է պայմանավորվող պետությունների մետրոպոլիաների տարածքների նկատմամբ:

Եթե պայմանավորվող պետությունը ցանկանում է, որ այն կիրառվի բոլոր կամ որոշակի տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է, ապա նման մտադրությունն արտահայտվում է փաստաթղթի միջոցով, որն ի պահ է հանձնվում Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը: Վերջինս այդ փաստաթղթի հավաստված իսկական պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկում է պայմանավորվող պետություններին:

Առարկություն չներկայացրած պետությունների և այն տարածքի կամ տարածքների հարաբերություններում, որոնց միջազգային հարաբերությունների համար տվյալ պետությունը պատասխանատու է և որոնց կապակցությանը ծանուցում է ներկայացվել, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցումից հետո 6 ամսվա ընթացքում:

### Հոդված 31

Կոնֆերանսի 7-րդ նստաշրջանում չներկայացված ցանկացած պետության կարող է թույլատրվել միանալու սույն Կոնվենցիային, եթե Կոնվենցիան վավերացրած մեկ կամ մի քանի պետություններ 60 օրվա ընթացքում առարկություններ չեն ներկայացնում դրա դեմ՝ սկսած այն օրից, երբ Նիդեռլանդների կառավարությունը ծանուցում է այդ միանալու մասին: Կոնվենցիային միանալը կատարվում է 27-րդ հոդվածի 2-րդ մասում նշված կարգով:

Նկատի է առնվում, որ միանալը կատարվում է Կոնվենցիայի 28 հոդվածի առաջին մասին համապատասխան ուժի մեջ մտնելու հետո միայն:

### Հոդված 32

Պայմանավորվող յուրաքանչյուր պետություն, ստորագրելով կամ վավերացնելով սույն Կոնվենցիան կամ հետագայում միանալով դրան, վերապահությամբ կարող է սահմանափակել 17-րդ հոդվածի կիրառումը պայմանավորվող այն պետությունների նկատմամբ, որոնք մշտական բնակության վայր ունեն պայմանավորվող մյուս պետության տարածքում և նրա դատարաններում հանդես են գալիս որպես հայցվոր կամ երրորդ կողմ:

### Հոդված 33

Սույն Կոնվենցիայի գործողության ժամկետը 5 տարի է սկսած 28-րդ հոդվածի առաջին մասում նշված օրվանից:

Այդ ժամկետը գործում է նաև այն պետությունների համար, որոնք ավելի ուշ են միացել Կոնվենցիային կամ վավերացրել այն:

Սույն Կոնվենցիայի գործողության ժամկետը երկարաձգվում է յուրաքանչյուր իինգ տարին մեկ՝ կողմերի լրելայն համաձայնությամբ, եթե կողմերը չեն որոշում չեղյալ հայտարարել այն: Չեղյալ հայտարարելու մասին ծանուցվում է Կոնվենցիայի գործողության ժամկետը լրանալու առնվազն վեց ամիս առաջ՝ Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը, որն այդ մասին տեղեկացնում է պայմանավորվող մյուս պետություններին:

Չեղյալ հայտարարումը կարող է տարածվել 30-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն ծանուցման մեջ նշված բոլոր կամ որոշակի տարածքների վրա:

Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում միայն այն պետության համար, որն այդ մասին ծանուցել է: Պայմանավորվող մյուս պետությունների համար Կոնվենցիան շարունակում է ուժի մեջ մնալ:

Ի վկայումն որի, իրենց կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրութերն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Յագայում, 1954 թ. մարտի 1-ին, մեկ բնօրինակով, որը պահպան է Նիդեռլանդների կառավարության արխիվում: Սույն Կոնվենցիայի հավաստված պատճենը դիվանգիտական ուղիներով ուղարկվում է Յագայի միջազգային մասնավոր իրավունքի կոնֆերանսի 7-րդ նստաշրջանում ներկայացված յուրաքանչյուր պետության:

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

### ՔԱՐԱՔԱՑԻՎԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

### ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ

### ՂԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1993թ. հունվարի 22)

Անկախ պետությունների համագործակցության անդամ՝ սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները (այսուհետ) Պայմանավորվող կողմեր,

Ելմելով Պայմանավորվող կողմերի քաղաքացիներին և նրանց տարածքներում բնակվող անձանց անձնական և գույքային իրավունքների կապակցությամբ Պայմանավորվող բոլոր կողմերում նույնպիսի իրավական պաշտպանություն ապահովելու ձգտումից, ինչպիսին սեփական քաղաքացիներին է,

Կարևոր նշանակություն տալով արդարադատության մարմինների կողմից քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու ասպարեզում համագործակցության զարգացմանը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի շուրջ.

## ԲԱԺԻՆ I. ԸՆԴՐԱՍՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Մաս I. Իրավական պաշտպանություն

#### Հոդված 1

##### Իրավական պաշտպանության տրամադրումը

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, ինչպես նաև նրա տարածքում բնակվող անձինք մյուս բոլոր Պայմանավորվող կողմերի տարածքներում իրենց անձնական և գույքային իրավունքների կապակցությամբ օգտվում են նույնպիսի իրավական պաշտպանությունից, ինչպիսին տվյալ Պայմանավորվող կողմի սեփական քաղաքացիներին է:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները, ինչպես նաև նրա տարածքում բնակվող անձինք իրավունք ունեն ազատ ու անարգել դիմելու մյուս Պայմանավորվող կողմերի դատարաններ, դատախազություն և այլ մարմիններ (այսուհետ՝ արդարադատության մարմիններ), որոնց իրավասությանն են պատկանում քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերը. կարող են հանդես գալ այդ մարմիններում, ներկայացնել միջնորդություններ, հարուցել հայցեր և իրականացնել դատավարական այլ գործողություններ նույն պայմաններով, ինչ տվյալ Պայմանավորվող կողմի քաղաքացիները:

3. Սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են նաև Պայմանավորվող կողմերի օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձանց նկատմամբ:

#### Հոդված 2

##### Ազատումը տուրքերի մուծումից և ծախսերի փոխհատուցումից

1. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները և նրա տարածքում բնակվող անձինք ազատվում են դատական և նոտարական տուրքերի մուծումից և ծախսերի փոխհատուցումից, ինչպես նաև օգտվում են անվճար իրավաբանական օգնությունից նույն պայմաններով, ինչ սեփական քաղաքացիները:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված արտոնությունները տարածվում են տվյալ գործով իրականացվող բոլոր դատավարական գործողությունների, ներառյալ որոշման կատարման, վրա:

#### Հոդված 3

##### Ընտանեկան և գույքային դրության վերաբերյալ

##### Փաստաթուղթ ներկայացնելը

1. 2-րդ հոդվածով նախատեսված արտոնությունները տրամադրվում են միջնորդությունը հարուցած անձի ընտանեկան և գույքային դրության վերաբերյալ փաստաթղթի հիման վրա: Այդ փաստաթուղթը տրվում է այն Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից, որի տարածքում դիմուն ունի բնակության կամ գտնվելու վայր:

2. Եթե դիմունը Պայմանավորվող կողմերի տարածքում չունի բնակության կամ գտնվելու վայր, ապա բավական է ներկայացնել համապատասխան Պայմանավորվող Կողմի, որի քաղաքացին է նա, դիմագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական մարմնի կողմից տրված փաստաթուղթը:

3. Արտոնություններ տրամադրելու մասին միջնորդության վերաբերյալ որոշում կայացնող հաստատությունը կարող է փաստաթուղթը տված մարմնից պահանջել լրացուցիչ տվյալներ կամ անհրաժեշտ բացատրություններ:

## Մաս II. Իրավական օգնություն

### Հոդված 4

#### Իրավական օգնություն ցույց տալը

1. Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն են ցույց տալիս սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

2. Արդարադատության մարմինները սույն հոդվածի 1-ին կետում նշված գործերով, իրավական օգնություն են ցույց տալիս նաև այլ մարմինների:

### Հոդված 5

#### Հաղորդակցման կարգը

Սույն Կոնվենցիան կատարելիս պայմանավորվող կողմերի արդարադատության իրավասու մարմինները միմյանց հետ հաղորդակցվում են իրենց կենտրոնական մարմինների միջոցով, եթե միայն սույն Կոնվենցիայով հաղորդակցման այլ կարգ չի սահմանված:

### Հոդված 6

#### Իրավական օգնության ծավալը

Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս հարցվող պայմանավորվող կողմի օրենսդրությամբ նախատեսված դատավարական և այլ գործողություններ կատարելու, մասնավորաբես, փաստաթղթեր կազմելու և փոխանցելու, խուզարկության, իրեղեն ապացույցներ առգրավելու, փոխանցելու և հանձնելու, փորձաքննություն անցկացնելու, կողմերի, մեղադրյալների, վկաների, փորձագետների հարցաքննության, հանցագործություն կատարած անձանց դեմ քրեական հետապնդում հարուցելու, նրանց հետախուզման ու հանձնման, քաղաքացիական գործերով դատական որոշումների և քաղաքացիական հայցի մասով՝ դատավճիռների, կատարողական մակագրությունների ճանաչման և կատարնան, ինչպես նաև փաստաթղթերի հանձնման միջոցով:

### Հոդված 7

#### Իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ

##### հանձնարարականի բովանդակությունն ու ձևը

1. Իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարականում պետք է նշվեն՝

ա) հարցվող մարմնի անվանումը,

բ) հարցմող մարմնի անվանումը,

- գ) գործի անվանումը, որի կապակցությամբ իրավական օգնություն է հայցվում,
- դ) կողմերի, վկաների, կասկածյալների, ամբաստանյալների, դատապարտյալների կամ տուժողների անուններն ու ազգանունները, նրանց բնակության կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, զբաղնունքը, իսկ քրեական գործերով՝ նաև ծննդյան վայրն ու ամսաթիվը և, հնարավորության դեպքում, ծնողների անուններն ու ազգանունները, իրավաբանական անձանց համար՝ դրանց անվանումն ու գտնվելու վայրը,
- Ե) «Դ» Ենթակետում նշված անձանց ներկայացուցիչների առկայության դեպքում՝ նրանց անունները, ազգանուններն ու հասցեները,
- զ) հանձնարարականի բովանդակությունը, ինչպես նաև դրա կատարման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ,
- Է) քրեական գործերով՝ նաև կատարված արարքի նկարագրությունն ու որակումը և տվյալներ վնասի չափերի վերաբերյալ, եթե այն պատճառվել է արարքի արդյունքում:
2. Փաստաթուղթը հանձնելու մասին հանձնարարականում պետք է նաև նշված լինեն ստացողի ճիշտ հասցեն և հանձնվող փաստաթղթի անվանումը:
3. Հանձնարարականը պետք է ստորագրվի և ամրագրվի հարցնող մարմնի գինանշանային կնիքով:
- ## Հոդված 8
- ### Կատարման կարգը
1. Իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարություն կատարելիս հարցվող մարմինը կիրառում է իր երկիր օրենսդրությունը: Հարցնող մարմնի խնդրանքով նա կարող է կիրառել նաև հարցնող Պայմանավորվող կողմի դատավարական նորմերը, եթե միայն դրանք չեն հակասում հարցվող ստացած Պայմանավորվող կողմի օրենսդրությանը:
2. Եթե հարցվող մարմինն իրավասու չէ կատարելու հանձնարարականը, նա այն ուղարկում է իրավասու մարմնին և այդ մասին տեղեկացնում հարցնող մարմնին:
3. Հարցնող մարմնի խնդրանքով հարցվող մարմինը նրան և շահագրգիռ կողմերին ժամանակին տեղեկացնում է հանձնարարության կատարման ժամանակի և վայրի մասին, որպեսզի նրանք, հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, կարողանան ներկա գտնվել հանձնարարության կատարմանը:
4. Այն դեպքում, եթե հանձնարարականում նշված անձի ծցգրիտ հասցեն անհայտ է, հարցվող մարմինը, այն Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում նա գտնվում է, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հասցեն պարզելու համար:
5. Հանձնարարության կատարումից հետո հարցվող մարմինը փաստաթղերը վերադարձնում է հարցնող մարմնին. այն դեպքում, եթե իրավական օգնություն ցուցաբերելը հնարավոր չէ, նա միաժամանակ տեղեկացնում է այն հանգամանքների մասին, որոնք խոչընդոտում են հանձնարարության կատարմանը, և փաստաթղերը վերադարձնում է հարցնող մարմնին:
- ## Հոդված 9
- ### Վկաներին, տուժողներին, քաղաքացիական հայցվորներին, քաղաքացիական պատասխանողներին, նրանց ներկայացուցիչներին, փորձագետներին կանչելը
1. Վկան, տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը և նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև փորձագետը, որը հարցվող Պայմանավորվող կողմի մարմնի հանձնած կանչով ներկայանում է հարցնող Պայմանավորվող կողմի արդարադատության մարմին, չեն կարող, անկախ իրենց քաղաքացիությունից, վերջինիս տարածքում քրեական կամ վարչական պատասխանատվության կանչվել, ձերբակալվել և պատժի ենթարկվել այն արարքի համար, որը կատարել են մինչև նրա պետական սահմանը հատելը: Նման անձինք չեն կարող նաև

պատասխանատվության կանչվել, ձերբակալվել կամ պատժի ենթարկվել քննության առարկա քրեական գործով իրենց վկայությունների կամ, որպես փորձագետ տված եղակացությունների առնչությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձննք կորցնում են այդ կետով նախատեսված երաշխիքը, եթե նրանք հարցնող Պայմանավորվող կողմից տարածքը չեն լրում, թեև դրա հնարավորությունն ունեն, 15 օրվա ընթացքում այն օրից, երբ հարցնող արդարադատության մարմինը հայտնում է նրանց, որ այդուհետ նրանց ներկայության անհրաժեշտությունը չկա: Այդ ժամկետում չի հաշվվում այն ժամանակը, որի ընթացքում այդ անձննք, ոչ իրենց մեղքով, չեն կարողացել լրել հարցնող Պայմանավորվող կողմից տարածքը:

3. Հարցնող Պայմանավորվող կողմը վկային, փորձագետին, ինչպես նաև տուժողին և նրա օրինական ներկայացուցչին փոխհատուցում է այդ պետությունում գտնվելու և ուղևորության հետ կապված ծախսերը, ինչպես նաև չաշխատած օրերի աշխատավարձը. փորձագետն ունի նաև կատարած փորձագիտության համար պարզաւորության իրավունք: Կանչում պետք է նշվի, թե ինչ վճարումներ ստանալու իրավունք ունեն կանչված անձննք. հարցնող Պայմանավորվող կողմից արդարադատության մարմինը նրանց միջնորդությամբ համապատասխան ծախսերը հոգալու կանխավճար է տալիս:

4. Պայմանավորվող մի կողմից տարածքում բնակվող վկային կամ փորձագետին Պայմանավորվող մյուս կողմից արդարադատության մարմին ներկայանալու մասին կանչը չպետք է պարունակի չներկայանալու դեպքում հարկադրանքի միջոցներ կիրառելու սպառնալիքներ:

## Հոդված 10

### Փաստաթղթերի հանձնման վերաբերյալ հանձնարարականը

1. Հարցվող արդարադատության մարմինը փաստաթղթերի հանձնումն իրականացնում է իր պետությունում գործող կարգին համապատասխան, եթե հանձնվող փաստաթղթերը գրված են իր լեզվով կամ ռուսաց լեզվով կամ էլ դրանց կցված է հաստատված թարգմանություն այդ լեզուներով: Հակառակ դեպքում նա այդ փաստաթղթերը հանձնում է ստացողին, եթե վերջինս համաձայն է կամավոր ընդունել դրանք:

2. Եթե փաստաթղթերը չեն կարող հանձնվել ըստ հանձնարարականում նշված հասցեի, հարցվող արդարադատության մարմինը, իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում հասցեն պարզելու համար: Եթե հարցվող արդարադատության մարմինը կողմից հասցեն պարզելն անհնարին է, նա այդ մասին ծանուցում է հարցնող մարմինն և նրան է վերադարձնում հանձնման ենթակա փաստաթղթերը:

## Հոդված 11

### Փաստաթղթերի հանձնման հաստատումը

Փաստաթղթերի հանձնումը հավաստվում է փաստաթուղթն ստացող անձի կողմից ստորագրված և հարցվող մարմնի պաշտոնական կնիքով ամրագրված, հանձնման ամսաթվի նշումն ու փաստաթուղթը հանձնող մարմնի աշխատակցի ստորագրությունը բովանդակող հաստատվող կամ այդ մարմնի կողմից տրված այլ փաստաթղթով, որում պետք է նշվեն հանձնման ձևը, վայրն ու ժամանակը:

## Հոդված 12

### Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական մարմինների իրավասությունները

1. Պայմանավորվող կողմերն իրավունք ունեն իրենց քաղաքացիներին փաստաթղթեր հանձնելու դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական մարմինների միջոցով:

2. Պայմանավորվող կողմերն իրավունք ունեն, իրենց իրավասու մարմինների հանձնարարությամբ, հարցաքննել սեփական քաղաքացիներին դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական մարմինների միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերում չի կարելի գործադրել հարկադրանքի միջոցներ կամ դրանք գործադրելու սպառնալիքներ:

### Հոդված 13

#### Փաստաթղթերի վավերականությունը

1. Փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում պատրաստվել կամ վավերացվել են մարմնի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից իրենց իրավասությունների շրջանակներում ու սահմանված ձևով, և ամրագրված են գինանշանային կնիքով, մյուս Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում են առանց որևէ հատուկ հավաստագրի:

2. Փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում դիտվում են որպես պաշտոնական փաստաթղթեր, Պայմանավորվող մյուս կողմերի տարածքներում օգտվում են պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժից:

### Հոդված 14

#### Քաղաքացիական կացության մասին փաստաթղթերի և այլ փաստաթղթերի առաքումը

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, խնդրանքի դեպքում, առանց թարգմանության և անվճար, մինչյանց առաքել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականներ, կրթության, աշխատանքային ստաժի մասին և այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում են հարցնող Պայմանավորվող կողմի քաղաքացիների և նրա տարածքում բնակվող այլ անձանց անձնական կամ գույքային իրավունքներին ու շահերին:

### Հոդված 15

#### Իրավական հարցերով տեղեկատվություն

Պայմանավորվող կողմերի արդարադատության կենտրոնական մարմինները, խնդրանքի դեպքում, մինչյանց տրամադրում են տեղեկություններ իրենց տարածքներում գործող կամ գործած ներպետական օրենսդրության և արդարադատության մարմինների կողմից դրա կիրառման պրակտիկայի վերաբերյալ:

### Հոդված 16

#### Կասցեների և այլ տվյալների պարզում

1. Պայմանավորվող կողմերը, խնդրանքի դեպքում, իրենց օրենսդրությանը համապատասխան, մինչյանց օգնություն են ցուցաբերում իրենց տարածքում բնակվող անձանց հասցեները պարզելու գործում, եթե դա պահանջվում է սեփական քաղաքացիների իրավունքների իրականացման համար: Ընդ որում, հարցնող Պայմանավորվող կողմը խնդրանքում նշված անձի հասցեն պարզելու համար հաղորդում է իր ունեցած տվյալները:

2. Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները մինչյանց օգնություն են ցուցաբերում հարցվող Պայմանավորվող կողմի տարածքում բնակվող այն անձանց աշխատավայրն ու եկամուտները պարզելու գործում, որոնց նկատմամբ հարցնող Պայմանավորվող կողմի արդարադատության մարմիններում ներկայացված են քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով գույքային պահանջներ:

### Հոդված 17

#### Լեզուն

Սույն կոնվենցիայի կատարման ժամանակՊայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները մինչյանց հետ հաղորդակցվում են Պայմանավորվող կողմերի պետական լեզուներով կամ ուսաց լեզվով:

### Հոդված 18

## **Իրավական օգնություն ցույց տալու հետ կապված ծախսերը**

Հարցվող Պայմանավորվող կողմը չի պահանջի իրավական օգնություն ցույց տալու հետ կապված ծախսերի փոխառուցում: Պայմանավորվող կողմերն իրենք են հոգում իրենց տարածքներում իրավական օգնություն ցույց տալու հետ կապված բոլոր ծախսերը:

### **Հոդված 19**

#### **Իրավական օգնություն ցույց տալը մերժելը**

Իրավական օգնություն ցույց տալու խնդրանքը կարող է մերժվել, եթե նման օգնության ցուցաբերումը կարող է վնաս պատճառել հարցվող ստացած Պայմանավորվող կողմի ինքնիշխանությանը կամ անվտանգությանը կամ հակասում է նրա օրենսդրությանը:

#### **ԲԱԺԻՆ II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ**

##### **ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

###### **Մաս I. Իրավասություն**

### **Հոդված 20**

#### **Ընդհանուր դրույթներ**

1. Եթե սույն բաժնի II-V մասերում չի սահմանված այլ բան, ապա Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում բնակության վայր ունեցող անձանց դեմ, անկախ նրանց քաղաքացիությունից, հայցերը հարուցվում են այդ Պայմանավորվող կողմի դատարաններում, իսկ իրավաբանական անձանց դեմ՝ հայցերը հարուցվում են այն Պայմանավորվող կողմի դատարաններում, որի տարածքում գտնվում է տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինը, ներկայացնելու կամ մասնաճյուղը:

Եթե գործին մասնակցում են տարբեր Պայմանավորվող կողմերի տարածքներում բնակության վայր (գտնվելու վայր) ունեցող մի քանի պատասխանողներ, ապա, հայցվորի ընտրությամբ, վեճը քննվում է ըստ ցանկացած պատասխանողի բնակության վայրի (գտնվելու վայրի):

2. Պայմանավորվող կողմի դատարաններն իրավասու են նաև այն դեպքերում, եթե նրա տարածքում՝  
ա) պատասխանողի ձեռնարկությունը (մասնաճյուղը) իրականացնում է առևտուր, արդյունաբերական կամ այլ տնտեսական գործունեություն,

բ) կատարված է կամ պետք է լրիվ կամ մասնակի կատարվի պայմանագրից բխող վեճի առարկա որևէ պարտավորություն,

գ) պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հայցով հայցվորն ունի մշտական բնակության կամ գտնվելու վայր:

3. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների վերաբերյալ հայցերը բացառապես ընդունակ են գույքի գտնվելու վայրի դատարաններին:

Բեռների, ուղևորների և ուղեբերի փոխադրման պայմանագրերից բխող հայցերը փոխադրողների դեմ ներկայացվում են ըստ այն տրանսպորտային կազմակերպության կառավարչության գտնվելու վայրի, որի նկատմամբ, սահմանված կարգով, պահանջ է ներկայացվել:

### **Հոդված 21**

#### **Պայմանագրային ընդդատություն**

1. Պայմանավորվող կողմի դատարանները կարող են քննել գործերը նաև այլ դեպքերում, եթե առկա է կողմերի գրավոր համաձայնությունը՝ վեճն այդ դատարաններին հանձնելու վերաբերյալ:

Ընդ որում, 20-րդ հոդվածի 3-րդ կետից և սույն բաժնի II-V մասերով սահմանված այլ նորմերից, ինչպես նաև համապատասխան Պայմանավորվող կողմի ներպետական օրենսդրությունից բխող բացառիկ իրավասությունը չի կարող փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

2. Վեճի փոխանցման վերաբերյալ համաձայնության առկայության դեպքում դատարանը, պատասխանողի դիմումի հիման վրա, դադարեցնում է գործի քննությունը:

## Հոդված 22

### Դատավարությունների փոխկապվածությունը

1. Այն դեպքում երբ երկու Պայմանավորվող կողմերի՝ սույն Կոնվենցիային համապատասխան իրավասու դատարաններում հարուցվում է վարույթ միևնույն կողմերի միջև, միևնույն առարկայի շուրջ, միևնույն հիմքերով, գործն ավելի ուշ հարուցած դատարանը վարույթը կարծում է:

2. Հակընդդեմ հայցը և հաշվանցման վերաբերյալ պահանջը, որոնք բխում են նույն իրավահարաբերությունից, ինչ և հիմնական հայցը, ենթակա են քննության այն դատարանում, որը քննում է հիմնական հայցը:

## Մաս II. Անձնական կարգավիճակը

### Հոդված 23

### Իրավունակությունը և գործունակությունը

1. Ֆիզիկական անձի գործունակությունը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է տվյալ անձը:

2. Քաղաքացիություն չունեցող անձի գործունակությունը որոշվում է այն երկու իրավունքով, որտեղ նա մշտական բնակության վայր ունի:

3. Իրավաբանական անձի իրավունակությունը որոշվում է այն պետության օրենսդրությամբ, որի օրենքներով այն հիմնադրվել է:

### Հոդված 24

### Սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելը:

### Գործունակության վերականգնումը

1. Անձին սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերով, բացառությամբ սույն հոդվածի 2 և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի, իրավասու է այն Պայմանավորվող կողմի դատարանը, որի քաղաքացին է հանդիսանում տվյալ անձը:

2. Այն դեպքում, երբ Պայմանավորվող մի կողմի դատարանին հայտնի են դաշտում իր տարածքում բնակու և Պայմանավորվող մյուս կողմի քաղաքացի հանդիսանող անձին սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելու հիմքերը, նա այդ մասին տեղեկացնում է այն Պայմանավորվող կողմի դատարանին, որի քաղաքացին է տվյալ անձը:

3. Եթե այն Պայմանավորվող կողմի դատարանը, որը տեղեկացվել է սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելու հիմքերի մասին, եթեք անսկա ընթացքում դատաքննություն չի սկսում կամ իր կարծիքը չի հաղորդում, ապա սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը քննում է այն Պայմանավորվող կողմի դատարանը, որի տարածքում տվյալ քաղաքացին ունի մշտական բնակության վայր: Անձին սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումն ուղարկվում է այն Պայմանավորվող կողմի իրավասու դատարանին, որի քաղաքացին է տվյալ անձը:

4. Սույն հոդվածի 1-3 կետերի դրույթները կիրառվում են, համապատասխանաբար, նաև գործունակության վերականգնման նկատմամբ:

## Հոդված 25

### Անհայտ բացակայող ճանաչելը և մահացած հայտարարելը:

#### Մահվան փաստի հաստատումը

1. Անձին անհայտ բացակայող ճանաչելու կամ մահացած հայտարարելու, ինչպես նաև մահվան փաստը հաստատելու վերաբերյալ գործերով իրավասու են այն Պայմանավորվող կողմի արդարադատության մարմինները, որի քաղաքացին է հանդիսացել տվյալ անձն այն ժամանակ, երբ նա, ըստ վերջին տվյալների, ողջ է եղել, իսկ այլ անձանց նկատմամբ անձի վերջին բնակության վայրի արդարադատության մարմինները:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի արդարադատության մարմինները կարող են մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացուն և նրա տարածքում բնակվող այլ անձի ճանաչել անհայտ բացակայող կամ մահացած, ինչպես նաև հաստատել նրա մահվան փաստը՝ տվյալ կողմի տարածքում բնակվող շահագրգիռ անձանց միջնորդությամբ, որոնց իրավունքներն ու շահերը հիմնված են այդ Պայմանավորվող կողմի օրենսդրության վրա:

3. Անձին անհայտ բացակայող ճանաչելու կամ մահացած հայտարարելու, ինչպես նաև մահվան փաստը հաստատելու վերաբերյալ գործերը քննության առնելիս Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները կիրառում են իրենց պետության օրենսդրությունը:

## Մաս III. Ընտանեկան գործերը

## Հոդված 26

### Անուսանադրություն

Ապագա անուսաներից յուրաքանչյուրի համար ամուսնադրության պայմանները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է նա, իսկ քաղաքացիության չունեցող անձանց համար՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որը նրանց մշտական բնակության վայրն է: Բացի այդ, անուսանադրության արգելվների առնչությամբ պետք է պահպանվեն այն Պայմանավորվող կողմի օրենսդրության պահանջները, որի տարածքում կնքվում է անուսնությունը:

## Հոդված 27

### Անուսինների իրավահարաբերությունները

1. Անուսինների անձնական և գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր:

2. Եթե ամուսիններից մեկը բնակվում է մի Պայմանավորվող կողմի, իսկ երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում և, ընդսմին, երկու ամուսիններն էլ ունեն միևնույն քաղաքացիությունը, ապա նրանց անձնական և գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացիներն են նրանք:

3. Եթե ամուսինները երկու տարբեր Պայմանավորվող կողմերի քաղաքացիներ են, և նրանցից մեկը բնակվում է մի, երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, ապա նրանց անձնական ու գույքային իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեցել են իրենց վերջին համատեղ բնակության վայրը:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված անձինք Պայմանավորվող կողմերի տարածքներում չեն ունեցել համատեղ բնակության վայր, ապա կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի մարմինը քննում է գործը:

5. Ամուսինների՝ անշարժ գույքին վերաբերող իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում գտնվում է այդ գույքը:

6. Ամուսինների անձնական և գույքային իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով իրավասու են այն Պայմանավորվող կողմի մարմինները, որոնց օրենսդրությունը ենթակա է կիրառման՝ սույն հոդվածի 1-3 և 5-րդ կետերին համապատասխան:

## Հոդված 28

### Ամուսնալուծությունը

1. Ամուսնալուծության վերաբերյալ գործերով կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի քաղաքացիներն են ամուսինները դիմումը ներկայացնելու պահին:

2. Եթե ամուսիններից մեկը մի, իսկ երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացի է, ապա կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի մարմինը քննում է ամուսնալուծության գործը:

## Հոդված 29

### Պայմանավորվող կողմների մարմինների իրավասությունը

1. 28-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում ամուսնալուծության վերաբերյալ գործերով իրավասու են այն Պայմանավորվող կողմների մարմինները, որի քաղաքացիներն են ամուսինները դիմումը ներկայացնելու պահին: Եթե դիմումը ներկայացնելու պահին երկու ամուսինները բնակվում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, ապա իրավասու են նաև այդ Պայմանավորվող կողմի մարմինները:

2. 28-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում ամուսնալուծության վերաբերյալ գործերով իրավասու են այն Պայմանավորվող կողմների մարմինները, որի տարածքում ապրում են երկու ամուսինները: Եթե ամուսիններից մեկը բնակվում է մի իսկ երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, ապա ամուսնալուծության վերաբերյալ գործերով իրավասու են երկու Պայմանավորվող կողմների մարմինները, որոնց տարածքներում բնակվում են ամուսինները:

## Հոդված 30

### Ամուսնության անվավեր ճանաչումը

1. Ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որը, 26-րդ հոդվածին համապատասխան, կիրավել է ամուսնադրության ժամանակ:

2. Ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով մարմինների իրավասությունը որոշվում է 27-րդ հոդվածին համապատասխան:

## Հոդված 31

### Հայրության կամ մայրության ճանաչումն ու վիճարկումը

Հայրության կամ մայրության ճանաչումն ու վիճարկումը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է երեխան ծնունդով:

## Հոդված 32

### Ծնողների և երեխաների իրավահարաբերությունները

1. Ծնողների և երեխաների իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում մշտապես բնակվում են երեխաները:

2. Զափահաս երեխաներից ալիմենտներ գանձելու գործերով կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի տարածքում ալիմենտ ստանալ հավակնող անձն ունի մշտական բնակության վայր:

3. Ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով իրավասու է այն Պայմանավորվող կողմի դատարանը, որի օրենսդրությունը, սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, ենթակա է կիրառման:

### Հոդված 33

#### Խնամակալությունը և հոգաբարձությունը

1. Խնամակալություն և հոգաբարձություն սահմանելը կամ դադարեցնելը կատարվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է անձը, որի նկատմամբ սահմանվում կամ դադարեցվում է խնամակալությունը կամ հոգաբարձությունը:

2. Խնամակալի կամ հոգաբարձուի և խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի միջև իրավահարաբերությունները կարգավորվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի մարմինը նշանակել է խնամակալին կամ հոգաբարձուին:

3. Խնամակալությունը կամ հոգաբարձությունը ստանձնելու պարտականությունը սահմանվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է խնամակալ կամ հոգաբարձու նշանակվող անձը:

4. Մի Պայմանավորվող կողմի քաղաքացի հանդիսացող անձի խնամակալ կամ հոգաբարձու կարող է նշանակվել մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացին, եթե բնակվում է այն կողմի տարածքում, որտեղ նա պետք է իրականացնի խնամակալությունը կամ հոգաբարձությունը:

### Հոդված 34

#### Պայմանավորվող կողմների մարմինների իրավասությունը

#### Խնամակալության և հոգաբարձության հարցերով

Խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու կամ դադարեցնելու գործերով իրավասու են այն Պայմանավորվող կողմի մարմինները, որի քաղաքացին է այն անձը, որի նկատմամբ սահմանվում կամ դադարեցվում է խնամակալությունը կամ հոգաբարձությունը, եթե սույն Կոնվենցիայով այլ բան սահմանված չէ:

### Հոդված 35

#### Խնամակալության և հոգաբարձության հարցերով միջոցներ ձեռնարկելու կարգը

1. Խնամակալության և հոգաբարձության հարցերով միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում, ելելով մի Պայմանավորվող կողմի քաղաքացու շահերից, որի մշտական բնակության վայրը, գտնվելու վայրը կամ գույքը գտնվում է մյուս Պայմանավորվող կողմի տարածքում, վերոնշյալ Պայմանավորվող կողմի մարմինն անհապաղ ծանուցում է 34-րդ հոդվածին համապատասխան իրավասու մարմնին:

2. Անհետաձգելի դեպքերում մյուս Պայմանավորվող կողմի մարմինը կարող է ինքը ձեռնարկել անհրաժեշտ ժամանակավոր միջոցներ՝ իր օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, նա պարտավոր է այդ մասին անհապաղ ծանուցել 34-րդ հոդվածին համապատասխան իրավասու մարմնին: Այդ միջոցները պահպանում են ուժը՝ մինչև 34-րդ հոդվածում նշված մարմնի կողմից այլ որոշման ընդունումը:

### Հոդված 36

#### Խնամակալության կամ հոգաբարձության փոխանցման կարգը

1. 34-րդ հոդվածին համապատասխան իրավասու մարմինը կարող է խնամակալությունը կամ հոգաբարձությունը փոխանցել մյուս Պայմանավորվող կողմի մարմնին այն դեպքում, եթե խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձն այդ Պայմանավորվող կողմի տարածքում ունի բնակության վայր, գտնվելու վայր կամ գույք: Խնամակալության կամ հոգաբարձության փոխանցումն ուժի մեջ է մտնում այն պահից, երբ հարցվող մարմինն ինքն է ստանձնում խնամակալությունը կամ հոգաբարձությունը և այդ մասին ծանուցում է հարցնող մարմնին:

2. Յիմնարկը, որը, սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, ինքն է ստանձնել խնամակալությունը կամ հոգաբարձությունը, դրանք իրականացնում է իր պետության օրենսդրությանը համապատասխան:

## Հոդված 37

### Որդեգրումը

1. Որդեգրումը կամ դրա վերացումը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է որդեգրողը որդեգրման կամ այն վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին:

2. Եթե երեխան մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացի է, ապա որդեգրման կամ դրա վերացման դեպքում անհրաժեշտ է ստանալ օրինական ներկայացուցչի և պետական իրավասու մարմնի համաձայնությունը, ինչպես նաև երեխայի համաձայնությունը, եթե դա պահանջվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է նա:

3. Եթե երեխային որդեգրում են ամուսիններ, որոնցից մեկը մի, իսկ երկրորդը՝ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացին է, ապա որդեգրումը կամ դրա վերացումը պետք է կատարվեն երկու Պայմանավորվող կողմերի օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան:

4. Որդեգրման կամ դրա վերացման գործերով իրավասու է այն Պայմանավորվող կողմի մարմինը, որի քաղաքացին է որդեգրողը որդեգրման կամ այն վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին իսկ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքում, իրավասու է այն Պայմանավորվող կողմի մարմինը, որի տարածքում ամուսիններն ունեն կամ ունեցել են վերջին համատեղ բնակության կամ գտնվելու վայրը:

## Մաս IV. Գույքային իրավահարաբերությունները

## Հոդված 38

### Սեփականության իրավունքը

1. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում է գտնվում անշարժ գույքը: Այն հարցը, թե որ գույքն է համարվում անշարժ, որոշվում է այն երկրի օրենսդրությամբ, որի տարածքում է գտնվում այդ գույքը:

2. Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում է գտնվում տրանսպորտային միջոցի գրանցումն իրականացնող մարմինը:

3. Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ գույքային այլ իրավունքի ծագումն ու դադարումը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում է գտնվում տրանսպորտային իրավունքի ծագման կամ դադարման համար հիմք ծառայած գործողության կամ այլ հանգանքի տեղի ունենալու պահին:

4. Գործարքի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կամ գույքային այլ իրավունքի ծագումն ու դադարումը որոշվում է գործարքի կատարման վայրի օրենսդրությամբ, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

## Հոդված 39

## **Գործարքի ձևը**

1. Գործարքի ձևը որոշվում է նրա կատարման վայրի օրենսդրությամբ:
2. Անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների առիթով գործարքի ձևը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում է գտնվում է այդ գույքը:

## **Հոդված 40**

### **Լիազորագիրը**

Լիազորագրի ձևը և գործողության ժամկետը որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում տրվել է լիազորագիրը:

## **Հոդված 41**

### **Գործարքի կողմերի իրավունքներն**

#### **ու պարտականությունները**

Գործարքի կողմերի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են գործարքի կնքման վայրի օրենսդրությամբ, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

## **Հոդված 42**

### **Վճարի հատուցում**

1. Վճարի հատուցման վերաբերյալ պարտավորությունները, բացի պայմանագրերից և այլ օրինաչափ գործողություններից բխող պարտավորություններից, որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում տեղի է ունեցել վճարի հատուցման վերաբերյալ պահանջի համար հիմք ծառայած գործողությունը կամ այլ հանգամանք:

2. Եթե վճար պատճառողն ու տուժողը միևնույն Պայմանավորվող կողմի քաղաքացիներ են, կիրառվում է այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված գործերով իրավասու է այն Պայմանավորվող կողմի դատարանը, որի տարածքում տեղի է ունեցել վճարի հատուցման վերաբերյալ պահանջի համար հիմք ծառայած գործողությունը կամ այլ հանգամանք: Տուժողը կարող է հայցը ներկայացնել նաև այն Պայմանավորվող կողմի դատարան, որի տարածքում բնակության վայր ունի պատասխանողը:

## **Հոդված 43**

### **Հայցային վաղեմություն**

Հայցային վաղեմության հարցերը լուծվում են ըստ այն օրենսդրության, որը կիրառվում է համապատասխան իրավահարաբերության կարգավորման համար:

## **Մաս V. Ժառանգումը**

## **Հոդված 44**

## **Դավասարության սկզբունքը**

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի քաղաքացիները կարող են այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում օրենքով կամ կտակով ժառանգել գույք կամ իրավունքներ՝ հավասար պայմաններով և նույն ծավալով, ինչ տվյալ Պայմանավորվող կողմի քաղաքացիները:

## **Հոդված 45**

### **Ժառանգման իրավունքը**

1. Գույքի ժառանգման իրավունքը, բացի սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված դեպքից, որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում ժառանգատուն ունեցել է վերջին մշտական բնակության վայրը:

2. Անշարժ գույքի ժառանգման իրավունքը որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում է գտնվում այդ գույքը:

## **Հոդված 46**

### **Ժառանգության անցումը պետությանը**

Եթե Պայմանավորվող կողմի՝ ժառանգման դեպքում կիրառման ենթակա օրենսդրությամբ ժառանգ է հանդիսանում աետությունը, ապա ժառանգվող շարժական գույքն անցնում է այն Պայմանավորվող կողմին, որի քաղաքացին է ժառանգատուն մահվան պահին, իսկ ժառանգվող անշարժ գույքն անցնում է այն Պայմանավորվող կողմին, որի տարածքում գտնվում է այդ գույքը:

## **Հոդված 47**

### **Կտակը**

Անձի՝ կտակ կազմելու և վերացնելու ունակությունը, ինչպես նաև կտակի և դրա վերացման ձևը որոշվում են այն երկրի իրավունքով, որտեղ կտակարարը բնակության վայր է ունեցել կտակը կազմելիս: Սակայն կտակը կամ այն վերացնելը չեն կարող անվավեր ճանաչվել ձևը չպահպանելու պատճառով, եթե այդ ձևը բավարարում է կտակը կազմելու վայրի իրավունքի պահանջները:

## **Հոդված 48**

### **Ժառանգության վերաբերյալ գործերով իրավասությունը**

1. Շարժական գույքի ժառանգման վերաբերյալ գործերով դատավարությունն իրավասու են վարել այն Պայմանավորվող կողմի մարմինները, որի տարածքում ժառանգատուն մահվան պահին բնակության վայր է ունեցել:

2. Անշարժ գույքի ժառանգման վերաբերյալ գործերով դատավարություն իրավասու են վարել այն Պայմանավորվող կողմի մարմինները, որի տարածքում գտնվում է գույքը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև այն վեճերի լուծման դեպքում, որոնք ծագում են ժառանգության վերաբերյալ գործերով դատավարության կապակցությամբ:

## **Հոդված 49**

### **Ժառանգության վերաբերյալ գործերով դիվանագիտական ներկայացուցչունների կամ հյուպատոսական մարմինների իրավասությունները**

1. Ժառանգման, այդ թվում՝ ժառանգման առնչվող վեճերի վերաբերյալ գործերով, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի դիվանագիտական ներկայացուցչունները կամ հյուպատոսական

մարմիններն իրավասու են, առանց հատուկ լիազորագրի, մյուս Պայմանավորվող կողմերի մարմիններում ներկայացնելու (բացառությամբ ժառանգությունից հրաժարվելու իրավունքի) իրենց պետության քաղաքացիներին, եթե նրանք բացակայում են կամ չեն նշանակել ներկայացուցիչների:

## Հոդված 50

### Ժառանգության պահպանության միջոցները

1. Պայմանավորվող կողմերի մարմինները, իրենց օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այլ Պայմանավորվող կողմերի քաղաքացիների կողմից իրենց տարածքներում թողած ժառանգության պահպանությունն ապահովելու կամ այն կառավարելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ձեռնարկված միջոցների մասին անհապաղ տեղեկացվում է այն Պայմանավորվող կողմի դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական մարմինը, որի քաղաքացին է ժառանգութուն: Նշված ներկայացուցչությունը կամ մարմինը կարող է մասնակցել այդ միջոցների իրականացմանը:

3. Ժառանգման վերաբերյալ գործերով սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ձեռնարկված միջոցները իրավասու արդարադատության մարմնի, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական մարմնի միջնորդությամբ կարող են փոփոխվել, չեղյալ հայտարարվել կամ հետաձգվել:

## ԲԱԺԻՆ III. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ճԱՍԱՉՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

## Հոդված 51

### ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ճԱՆԱՀՈՒՄԸ Լ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն Կոնվենցիայով նախատեսված պայմաններով, ճանաչում և կատարում է այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունված հետևյալ որոշումները՝

ա) քաղաքացիական և ընտանեկան գործերով արդարադատության մարմինների որոշումները, ներառյալ՝ նման գործերով դատարանի հաստատած հաշտության համաձայնագրերն ու դրամական պարտավորությունների վերաբերյալ նոտարական ակտերը (այսուհետ՝ որոշումներ),

բ) վճարի հատուցման վերաբերյալ քրեական գործերով դատարանների որոշումները:

## Հոդված 52

### ԿԱՏԱՐՈՒՄ ՀԱՊԱՀԱՆՁՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ճԱՆԱՀՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի արդարադատության մարմնի կայացրած և օրինական ուժի մեջ մտած, իրենց բնույթով կատարում չպահանջող որոշումները ճանաչվում են այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում առանց հատուկ վարույթի, պայմանով, եթե՝

ա) հարցվող Պայմանավորվող կողմի արդարադատության մարմինները այդ գործով ավելի վաղ չեն կայացրել որոշում, որն օրինական ուժի մեջ է մտել,

բ) գործը, սույն Կոնվենցիայի համաձայն, իսկ նրանով չնախատեսված դեպքերում՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում պետք է ճանաչվի որոշումը, չի պատկանում այդ Պայմանավորվող կողմի արդարադատության մարմինների բացառիկ իրավասությանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները վերաբերում են նաև խնամակալության և հոգաբարձության որոշումներին, ինչպես նաև ամուսնալուծության վերաբերյալ որոշումներին, որոնք կայացրել են այն Պայմանավորվող կողմի օրենսդրության համաձայն իրավասու մարմինները, որի տարածքում կայացվել է այդ որոշումը:

## Հոդված 53

## **Որոշման հարկադիր կատարման թույլտվության նասին միջնորդությունը**

1. Որոշման հարկադիր կատարման թույլտվության նասին միջնորդությունը ներկայացվում է այն Պայմանագրովող կողմի իրավասու դատարան, որտեղ որոշումը ենթակա է կատարման: Միջնորդությունը կարող է ներկայացվել նաև այն դատարան, որը գործով որոշում է կայացրել առաջին ատյանում: Այդ դատարանը միջնորդությունն ուղարկում է տվյալ միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասու դատարանին:

### **2. Միջնորդությանը կցվում են՝**

ա) որոշումը կամ դրա հաստատված պատճենը, ինչպես նաև պաշտոնական փաստաթուղթ առ այն, որ որոշումն օրինական ուժի մեջ է մտել և ենթակա է կատարման, կամ առ այն մասին, որ որոշումը ենթակա է կատարման մինչև օրինական ուժի մեջ մտնելը, եթե դա նրանից իսկ չի բխում,

բ) փաստաթուղթ, որից հետևում է, որ դատավարությանը չմասնակցած կողմը, որի դեմ ընդունվել է որոշումը, պատշաճ կարգով և ժամանակին կանչվել է դատարան, իսկ նրա դատավարական անգործունակության դեպքում՝ պատշաճ ձևով ներկայացված է եղել,

գ) փաստաթուղթ, որը հաստատում է որոշման ուղարկման պահին նրա մասնակի կատարումը,

դ) փաստաթուղթ, որը հաստատում է կողմերի համաձայնությունը պայմանագրային ընդդատության գործերով:

3. Որոշման հարկադիր կատարման թույլտվության նասին միջնորդությունը և նրան կցված փաստաթորերը լրացվում են հարցվող Պայմանագրովող կողմի լեզվով կամ ռուսաց լեզվով կատարված և հաստատված թարգմանությամբ:

### **Հոդված 54**

#### **Որոշումների ճանաչման և հարկադիր կատարման կարգը**

1. 51-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության նասին միջնորդությունները քննվում են այն Պայմանագրովող կողմի դատարաններում, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը:

2. Որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության նասին միջնորդությունները քննող դատարանը սահմանափակվում է պարզելով, որ պահպանված են սույն Կոնվենցիայով նախատեսված պայմանները: Եթե այդ պայմանները պահպանված են, դատարանը որոշում է կայացնում հարկադիր կատարման նասին:

3. Հարկադիր կատարման կարգը որոշվում է այն Պայմանագրովող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը:

### **Հոդված 55**

#### **Որոշումների ճանաչման և կատարման մերժումը**

1. 52-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող են մերժվել, եթե՝

ա) այն Պայմանագրովող կողմի օրենսդրությամբ համապատասխան, որի տարածքում կայացվել է որոշումը, վերջինս օրինական ուժի մեջ չի մտել կամ ենթակա չէ կատարման, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումը ենթակա է կատարման մինչև օրինական ուժի մեջ մտնելը.

բ) պատասխանողը չի մասնակցել դատավարության այն պատճառով, որ նրան կամ նրա կողմից լիազորված անձին պատշաճ ձևով և ժամանակին չի հանձնվել դատարան ներկայանալու մասին ծանուցագիրը,

գ) այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ պետք է ճանաչվի և կատարվի որոշումը, միևնույն կողմերի միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով գործով պետի վաղ ընդունվել է օրինական ուժի մեջ մտած որոշում կամ առկա է երրորդ պետության դատարանի ճանաչված որոշումը, կամ էլ եթե այդ Պայմանավորվող կողմի մարմինն այդ գործով քննություն է սկսել ավելի վաղ,

դ) գործը, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն, իսկ նրանով չնախատեսված դեպքերում՝ այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում որոշումը պետք է ճանաչվի և կատարվի, պատկանում է այդ կողմի մարմնի բացառիկ իրավասությանը,

Ե) բացակայում է պայմանագրային ընդդատության գործով կողմերի համաձայնությունը հաստատող վիաստաթուղթը,

զ) լրացել է հարկադիր կատարման վաղեմության ժամկետը՝ նախատեսված այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի դատարանը կատարում է հանձնարարությունները:

## ԲԱԺԻՆ IV. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

### Մաս I. Հանձնում

#### Հոդված 56

##### Հանձնման պարտավորությունը

1. Պայմանավորվող կողմերը, սույն Կոնվենցիայով նախատեսված պայմաններին համապատասխան, պարտավորվում են պահանջի դեպքում մինչանց հանձնել իրենց տարածքում գտնվող անձանց՝ նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար:

2. Քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնումը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք հարցնող և հարցվող Պայմանավորվող կողմերի օրենքներով համարվում են պատժելի և որոնց կատարման համար նախատեսվում է պատիժ 1 տարուց ոչ պակաս ժամկետով ազատազրկման ձևով կամ ավելի խիստ պատիժ:

3. Դատավճիռն ի կատար ածելու համար հանձնումը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք հարցնող և հարցվող Պայմանավորվող կողմերի օրենքներով համարվում են պատժելի և որոնց կատարման համար անձը, որի հանձնումը պահանջվում է, դատապարտվել է 6 ամսից ոչ պակաս ժամկետով ազատազրկման կամ ավելի խիստ պատիժ:

#### Հոդված 57

##### Հանձնելուց իրաժարվելը

1. Հանձնումը չի կատարվում, եթե՝

ա) անձը, որի հանձնումը պահանջվում է, հարցվող Պայմանավորվող կողմի քաղաքացի է,

բ) պահանջն ստամալու պահին, հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրության համաձայն, քրեական հետապնդում չի կարող հարուցվել կամ դատավճիռը չի կարող ի կատար ածվել վաղեմության ժամկետն անցնելու պատճառով կամ այլ օրինական հիմքով,

գ) անձի նկատմամբ, որի հանձնումը պահանջվում է, հարցվող Պայմանավորվող կողմի տարածքում նույն հանցագործության համար կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ գործով վարույթը կարծելու մասին որոշում,

դ) հանցագործությունը, հարցնող կամ հարցվող Պայմանավորվող կողմերի օրենսդրությանը համապատասխան, հետապնդվում է նաև մեղադրանքի կարգով (ըստ տուժողի դիմումի):

2. Հանձնումը կարող է մերժվել, եթե հանցագործությունը, որի առիթով հանձնումը պահանջվում է, կատարվել է հարցվող Պայմանավորվող կողմի տարածքում:

3. Հանձնումը մերժելու դեպքում, հարցնող Պայմանավորվող կողմը պետք է տեղեկացվի մերժման հիմքերի մասին:

## Հոդված 58

### Հանձնելու մասին պահանջը

1. Հանձնելու մասին պահանջը պետք է բովանդակի՝

ա) հարցվող մարմնի անվանումը,

բ) արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը և հարցնող Պայմանավորվող կողմի այն օրենքի տեքստը, որի հիման վրա տվյալ արարքը ճանաչվում է հանցագործություն,

գ) հանձման ենթակա անձի ազգանումը, անունը, հայրանունը, քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ արտաքին նկարագրությունը և նրա մասին այլ տեղեկություններ,

դ) տվյալներ հանցագործությամբ պատճառված վնասի չափի մասին:

2. Քրեական հետապնդում իրականացնելու համար հանձնելու մասին պահանջին պետք է կցված լինի կալանքի վերցնելու մասին որոշման հաստատված պատճեն:

3. Դատավճիռն ի կատար ածելու համար հանձնելու մասին պահանջին պետք է կցված լինեն դատավճռի հաստատված պատճենը՝ նրա օրինական ուժի մեջ նշնելու մասին նշումով, և քրեական օրենքի այն դրույթի տեքստը, որի հիման վրա անձը դատապարտվել է: Եթե դատապարտյալն արդեն կրել է պատժի մի մասը, տվյալներ են հաղորդվում նաև այդ մասին:

4. Հանձնելու մասին պահանջը և դրան կցված փաստաթղթերը կազմվում են 17-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

## Հոդված 59

### Լրացուցիչ տեղեկությունները

1. Եթե հանձնելու մասին պահանջը չի պարունակում բոլոր անհրաժեշտ տվյալները, ապա հարցվող Պայմանավորվող կողմը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ, ինչի համար սահմանում է մինչև մեկամյա ժամկետ: Այդ ժամկետը, հարցնող Պայմանավորվող կողմի միջնորդությամբ, կարող է երկարաձգվել ևս մինչև 1 ամսով:

2. Եթե հարցնող Պայմանավորվող կողմը սահմանված ժամկետում չի ներկայացնում լրացուցիչ տեղեկություններ, ապա հարցվող Պայմանավորվող կողմը պետք է ազատի կալանքի վերցված անձին:

## Հոդված 60

### Հանձնման համար կալանքի վերցնելը

Պահանջն ստանալուն պես, հարցվող Պայմանավորվող կողմն անհապաղ միջոցներ է ձեռնարկում այն անձին կալանքի վերցնելու ուղղությամբ, որի հանձնումը պահանջվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնումը չի կարող կատարվել:

## Հոդված 61

### Կալանքի վերցնելը կամ ձերբակալումը նախքան հանձնելու

#### մասին պահանջն ստանալը

1. Անձը, որի հանձնումը պահանջվում է, միջնորդությամբ կարող է կալանքի վերցվել նաև նախքան հանձնելու մասին պահանջն ստանալը: Միջնորդությունը պետք է բովանդակի հղում կալանքի վերցնելու մասին որոշմանը կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռին և նշում այն մասին, որ հանձնելու մասին պահանջը կներկայացվի լրացուցիչ: Նախքան հանձնելու մասին պահանջն ստանալը կալանքի վերցնելու մասին միջնորդությունը կարող է հանձնվել փոստով, հեռագրով, տելեֆոնով կամ տելեֆաքսով:

2. Անձը կարող է ձերբակալվել նաև առանց սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված միջնորդության, եթե օրենսդրությամբ նախատեսված հիմքեր կան կասկածելու, որ նա այլ Պայմանավորվող կողմից տարածքում կատարել է հանձնման հանգեցնող հանցանք:

3. Նախքան հանձնելու մասին պահանջն ստանալը կալանքի վերցնելու կամ ձերբակալելու մասին անհրաժեշտ է անհապաղ ծանուցել մյուս Պայմանավորվող կողմին:

## Հոդված 62

### Կալանքի վերցված կամ ձերբակալված անձին ազատելը

1. 61-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն կալանքի վերցված անձը պետք է ազատվի, եթե նրա հանձնման մասին պահանջը չստացվի կալանքի վերցնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

2. 61-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ձերբակալված անձը պետք է ազատվի, եթե նրան հանձնելու մասին պահանջը չստացվի այն ժամկետի ընթացքում, որն օրենսդրությամբ նախատեսված է ձերբակալության համար:

## Հոդված 63

### Հանձնումը հետաձգելը

Եթե անձը, որի հանձնումը պահանջվում է, ենթարկվել է քրեական պատասխանատվության կամ դատապարտվել է հարցվող Պայմանավորվող կողմից տարածքում կատարած այլ հանցագործության համար, ապա նրան հանձնելը կարող է հետաձգվել մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը, դատավճռի ի կատար աժելը կամ պատժից ազատելը:

## Հոդված 64

### Ժամանակավորապես հանձնելը

1. Եթե 63-րդ հոդվածով նախատեսված հանձնման հետաձգումը կարող է հանգեցնել քրեական հետապնդման վաղենության ժամկետն անցնելուն կամ վնաս պատճառել քննությանը, անձը, որի հանձնումը պահանջվում է միջնորդությամբ, կարող է հանձնվել ժամանակավորապես:

2. Ժամանակավոր հանձնված անձը պետք է վերադարձվի քրեական գործով այն գործողության կատարումից հետո, որի համար նա հանձնվել էր, բայց ոչ ուշ, քան հանձնելու օրվանից 3 ամսվա ընթացքում: Հիմնավորված դեպքերում ժամկետը կարող է երկարաձգվել:

## Հոդված 65

## Հանձնելու մասին պահանջների կոլիգիան

Եթե հանձնելու մասին պահանջն ստացվում է մի քանի պետություններից, ապա հարցվող Պայմանավորվող կողմն ինքն է որոշում, թե այդ պահանջներից որը պետք է բավարարվի:

### Հոդված 66

#### Հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները

1. Առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ հանձնված անձին չի կարելի քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկել մինչև հանձնելը նրա կատարած այն հանցագործության համար, որի կապակցությամբ նա չի հանձնվել:

2. Առանց հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնության՝ անձը չի կարող հանձնվել նաև երրորդ պետության:

3. Հարցվող Պայմանավորվող կողմի համաձայնությունը չի պահանջվում, եթե հանձնված անձը քրեական դատավարության ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում, իսկ դատապարտվելու դեպքում՝ պատիժը կրելուց կամ ազատվելուց հետո մեկ ամսվա ընթացքում չի լրում հարցվող Պայմանավորվող կողմի տարածքը կամ եթե ինքնակամ վերադառնում է այնտեղ: Այս ժամկետի մեջ չի հաշվվում այն ժամանակը, որի ընթացքում հանձնված անձը հարցնող Պայմանավորվող կողմի տարածքը չի կարողանում լքել ոչ իր մեղքով:

### Հոդված 67

#### Հանձնման ենթակա անձին փոխանցելը

Հարցվող Պայմանավորվող կողմը հարցնող Պայմանավորվող կողմին տեղյակ է պահում հանձնման վայրի և ժամանակի մասին: Եթե հարցնող Պայմանավորվող կողմը հանձնման ենթակա անձին չի ընդունում հանձնման նշանակած ամսաթվից հետո 15 օրվա ընթացքում, այդ անձը պետք է ազատվի կալանքից:

### Հոդված 68

#### Կրկնակի հանձնումը

Եթե հանձնված անձը խուսափում է քրեական հետապնդումից կամ պատիժը կրելուց և վերադառնում է հարցվող Պայմանավորվող կողմի տարածք, ապա նոր պահանջով նա պետք է հանձնվի՝ առանց 58 և 59-րդ հոդվածներում նշված նյութերը ներկայացնելու:

### Հոդված 69

#### Քրեական գործով դատավարության արդյունքների

#### մասին ծանուցելը

Պայմանավորվող կողմերը միմյանց ծանուցում են իրենց հանձնված անձի դեմ քրեական գործով դատավարության արդյունքների մասին: Խնդրանքի դեպքում ուղարկվում է նաև վերջնական որոշման պատճենը:

### Հոդված 70

#### Տարանցիկ փոխադրումը

1. Պայմանավորվող կողմը մյուս Պայմանավորվող կողմի միջնորդությամբ թույլատրում է երրորդ պետության կողմից մյուս Պայմանավորվող կողմին հանձնված անձանց տարանցիկ փոխադրումը իր տարածքով:

2. Նման փոխադրման թույլատրության մասին միջնորդությունը քննվում է նույն կարգով, ինչ հանձնման մասին պահանջը:

3. Քարցվող Պայմանավորվող կողմը թույլատրում է տարանցիկ փոխադրման այն եղանակը, որն առավել նպատակահարմար է գտնում:

## Հոդված 71

### Հանձնման և տարանցիկ փոխադրման հետ կապված ծախսերը

Հանձնելու հետ կապված ծախսերը հոգում է այն Պայմանավորվող կողմը, որի տարածքում դրանք ծագել են, իսկ տարանցիկ փոխադրելու հետ կապված ծախսերը՝ այն Պայմանավորվող կողմը, որը դիմել է նման փոխադրման մասին միջնորդությամբ:

### Մաս II. Քրեական հետապնդման իրականացումը

## Հոդված 72

### Քրեական հետապնդում իրականացնելու պարտավորությունը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պարտավորվում է նյուս Պայմանավորվող կողմի հանձնարարությամբ, իր օրենսդրությանը համապատասխան, քրեական հետապնդում իրականացնել սեփական քաղաքացիների նկատմամբ, որոնք կասկածվում են հարցնող Պայմանավորվող կողմի տարածքում հանցագործություն կատարելու մեջ:

2. Եթե հանցագործությունը, որի կապակցությամբ հարուցված է գործ, առաջ է բերում հանցագործությունից վնաս կրած անձանց քաղաքացիական պահանջներ, վնասը հատուցելու մասին նրանց միջնորդության առկայության դեպքում դրանք քննվում են տվյալ գործի վարույթում:

## Հոդված 73

### Քրեական հետապնդում իրականացնելու մասին հանձնարարությունը

1. Քրեական հետապնդում իրականացնելու մասին հանձնարարությունը պետք է բովանդակի՝

ա) հարցնող մարմնի անվանումը,

բ) այն արարքի նկարագրությունը, որի առնչությամբ ուղարկված է հետապնդում իրականացնելու մասին հանձնարարությունը,

գ) արարքի կատարման ժամանակի և տեղի մասին հնարավորինս ստույգ նշումներ,

դ) հարցնող Պայմանավորվող կողմի այն օրենքի դրույթի տեքստը, որի հիման վրա արարքը ճանաչվում է հանցագործություն, ինչպես նաև գործի վարույթի համար էական նշանակություն ունեցող օրենսդրական այլ նորմերի տեքստերը,

ե) կասկածվող անձի ազգանունն ու անունը, քաղաքացիությունը, ինչպես նաև նրա մասին այլ տվյալներ,

զ) տուժողի դիմումի հիման վրա հարուցվող քրեական գործերով տուժողների հայտարարությունները և վնասի հատուցման մասին հայտարարությունները,

է) հանցագործությամբ պատճառված վնասի չափը:

Հանձնարարությանը կցվում են հարցնող Պայմանավորվող կողմի տրամադրության տակ եղած քրեական հետապնդման նյութերը, ինչպես նաև ապացույցները:

2. Հարցնող Պայմանավորվող կողմի հարուցած քրեական գործն ուղարկելիս այդ գործով քննությունը հարցվող Պայմանավորվող կողմը շարունակում է իր օրենսդրությանը համապատասխան։ Գործում առկա յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է հաստատված լինի հարցնող Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության մարմնի գինանշանային կնիքով։

3. Հանձնարարությունը և նրան կցված փաստաթղթերը կազմվում են 18-րդ հոդվածի դրույթներին համապատասխան։

4. Եթե հետապնդում իրականացնելու մասին հանձնարարությունն ուղարկելու պահին մեղադրվողը գտնվում է կալանքի տակ հարցնող Պայմանավորվող կողմի տարածքում, ապա նա բերման է ենթարկվում հարցվող Պայմանավորվող կողմի տարածք։

## Հոդված 74

### Քրեական հետապնդման արդյունքների մասին ծանուցելը

Հարցվող Պայմանավորվող կողմը պարտավոր է հարցնող Պայմանավորվող կողմին ծանուցել վերջնական որոշման մասին։ Հարցնող Պայմանավորվող կողմի խնդրանքով ուղարկվում է վերջնական որոշման պատճենը։

## Հոդված 75

### Որոշում ընդունելու հետևանքները

Եթե Պայմանավորվող կողմին, 72-րդ հոդվածին համապատասխան, ուղարկված է եղել քրեական հետապնդում իրականացնելու հանձնարարություն այն բանից հետո, եթե դատավճիռը կամ հարցվող Պայմանավորվող կողմի մարմնի ընդունած այլ վերջնական որոշումն ուժի մեջ է մտել, ապա քրեական գործը չեն կարող հարուցել հարցնող Պայմանավորվող կողմի մարմինները, իսկ դրանց հարուցած գործը ենթակա է կարծման։

## Հոդված 76

### Պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները

Յուրաքանչյուրը Պայմանավորվող կողմ հանցագործությունների հետաքրննության և դատարանների կողմից քրեական գործերի քննության ժամանակ, հաշվի է առնում պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող՝ Պայմանավորվող կողմների օրենսդրությամբ նախատեսված հանգամանքները, անկախ այն բանից, թե որ Պայմանավորվող կողմի տարածքում են դրանք ծագել։

## Հոդված 77

### Երկու կամ մի քանի Պայմանավորվող կողմների դատարաններին

### ընդհատյա գործերի քննության կարգը

Մեկ կամ մի խումբ անձանց մի քանի այնպիսի հանցագործությունների կատարման մեջ մեղադրելիս, որոնց վերաբերյալ գործերն ընդդատյա են երկու կամ ավելի Պայմանավորվող կողմների դատարաններին, դրանք քննելու համար իրավասու է այն Պայմանավորվող կողմի դատարանը, որի տարածքում ավարտվել է նախնական քննությունը։ Նման դեպքում գործը քննվում է այդ Պայմանավորվող կողմի դատավարական կանոններով։

## Հոդված 78

### Առարկաների հանձնելը

1. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են խնդրանքի դեպքում մինյանց հանձնել՝

ա) այն առարկաները, որոնք օգտագործվել են, սույն Կոնվենցիային համապատասխան, անձի հանձնում առաջ բերող հանցագործություն կատարելիս, այդ թվում հանցագործության գործիքները, այն առարկաները, որոնք ձեռք են բերվել հանցագործության հետևանքով կամ որպես դրա վարձատրություն, կամ էլ նրանք, որոնք հանցագործն ստացել է վերոնշյալ ճանապարհով ձեռք բերված առարկաների փոխարեն,

բ) այն իրերը, որոնք քրեական գործում կարող են ունենալ ապացուցողական նշանակություն. դրանք հանձնվում են նաև այն դեպքում, եթե հանցագործի հանձնումը չի կարող իրականացվել նրա մահվան, փախուստի կամ այլ հանգանաքների պատճառով:

2. Եթե հարցվող Պայմանավորվող կողմին սույն հոդվածի 1-ին կետում նշված առարկաներն անհրաժեշտ են որպես քրեական գործով ապացույցներ, ապա դրանց հանձնումը կարող է հետաձգվել մինչև քրեական գործով վարույթի ավարտը:

3. Հանձնված առարկաների նկատմամբ երրորդ անձանց իրավունքները մնում են ուժի մեջ: Քրեական գործով վարույթի ավարտից հետո այդ առարկաները պետք է անհատույց վերադարձվեն դրանք հանձնած Պայմանավորվող կողմին:

## Հոդված 79

### Մեղադրական դատավճիռների մասին ծանուցումը

#### և դատվածության մասին տեղեկությունները

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ամեն տարի մյուս Պայմանավորվող կողմերին տեղեկություններ կիաղորիդի համապատասխան Պայմանավորվող կողմի քաղաքացիների նկատմամբ իր դատարանների կայացրած, օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռների մասին՝ միաժամանակ ուղարկելով դատապարտյալների առկա մատնահետքերը:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմերին, խնդրանքի դեպքում, անվճար տրամադրում է տեղեկություններ իր դատարանների կողմից նախկինում դատապարտված անձանց դատվածության վերաբերյալ, եթե այդ անձինք քրեական պատասխանատվության են կանչվում հարցնող Պայմանավորվող կողմի տարածքում:

## Հոդված 80

### Քրեական հետապնդման և հանձնման հարցերով

#### հաղորդակցման կարգը

Քրեական հետապնդման, հանձնման, ինչպես նաև քաղաքացիների իրավունքները շոշափող և դատախազի սանկցիա պահանջող քննչական հանձնարարությունների կատարման հարցերով հաղորդակցվում են Պայմանավորվող կողմերի գլխավոր դատախազները (դատախազները):

## ԲԱԺԻՆ V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հոդված 81

### Սույն Կոնվենցիայի կիրառման հարցերը

Սույն Կոնվենցիան կիրառելիս ծագած հարցերը փոխադարձ համաձայնությամբ լուծում են  
Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները:

## Հոդված 82

### Կոնվենցիայի հարաբերակցությունը միջազգային պայմանագրերի հետ

Սույն Կոնվենցիան չի շոշափում միջազգային այլ պայմանագրերի դրույթները, որոնց մասնակիցներ են  
Պայմանավորվող կողմերը:

## Հոդված 83

### Ուժի մեջ մտնելու կարգը

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման այն ստորագրած պետությունների կողմից: Վավերագրերն  
ի պահ են հանձնվում Բնելառուսի Հանրապետության կառավարությանը, որը կատարում է սույն  
Կոնվենցիայի ավանդապահի գործառույթը:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում՝ երրորդ վավերագրին ավանդապահին ի պահ հանձնելուց  
հաշված 30-րդ օրը: Այն պետության համար, որի վավերագրին ավանդապահին ի պահ կհանձնվի սույն  
Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, այն ուժի մեջ կմտնի նրա վավերագրին ավանդապահին ի պահ  
հանձնելուց հաշված 30-րդ օրը:

## Հոդված 84

### Կոնվենցիայի գործողությանը ժամկետը

1. Սույն Կոնվենցիան գործում է՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը  
լրանալուց հետո, Կոնվենցիան ինքնարերաբար երկարաձգվում է՝ յուրաքանչյուր անգամ նոր հնգամյա  
ժամկետով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ նրա գործողության  
ընթացիկ հնգամյա ժամկետի լրանալուց 12 ամիս առաջ այդ մասին գործությունը ուղարկելով  
ավանդապահին:

## Հոդված 85

### Գործողությունը ժամանակի մեջ

Սույն Կոնվենցիայի գործողությունը տարածվում է նաև մինչև նրա ուժի մեջ մտնելը ծագած  
իրավահարաբերությունների վրա:

## Հոդված 86

### Կոնվենցիային միանալու կարգը

Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, բոլոր Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ, նրան  
կարող են միանալ այլ պետություններ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու  
միջոցով: Միանալը համարվում է ուժի մեջ մտած՝ ավանդապահի կողմից միանալու համաձայնության  
մասին վերջին հաղորդումն ստանալուց 30 օր անց:

## Հոդված 87

### Ավանդապահի պարտականությունները

Ավանդապահը սույն Կոնվենցիան ստորագրած և նրան միացած բոլոր պետություններին անհապաղ կտեղեկացնի յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու նասին փաստաթղթի ի պահ հանձնելու ամսաթվի, Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի, ինչպես նաև իր ստացած այլ ծանուցումների մասին:

Կատարված է Մինսկ քաղաքում, 1993թ. հունվարի 22-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահպում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը նրա հաստատված պատճենը կուղարկի սույն Կոնվենցիայի մասնակից պետություններին:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒՅՑՈՒՆ

### 1993 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ԸՆՏԱՍԵԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

(1997թ. մարտի 28)

1993 թ. հունվարի 22-ի Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների նասին Կոնվենցիայի մասնակից պետությունները

պայմանավորվեցին նշված Կոնվենցիայում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1. 1-ին հոդվածի 2-րդ կետում «դատախազություն» բառից հետո ստորակետով լրացնել «ներքին գործերի մարմիններ» բառերով (այնուհետև՝ ըստ տեքստի):

2. 5 և 6-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

## «Հոդված 5

### Դադորդակցման կարգը

Սույն Կոնվենցիան կատարելիս Պայմանավորվող կողմերի արդարադատության իրավասու մարմինները միմյանց հետ հաղորդակցվում են իրենց կենտրոնական, տարածքային և այլ մարմինների միջոցով, եթե միայն սույն Կոնվենցիայով հաղորդակցման այլ կարգ չի սահմանված: Պայմանավորվող կողմերը սահմանում են իրենց կենտրոնական, տարածքային և այլ մարմինների ցանկը, որոնք լիազորված են իրականացնելու անմիջական հաղորդակցություն, ինչի նաև նաև ավանդապահին:

## Հոդված 6

### Իրավական օգնության ծավալը

Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս դատավարական և այլ գործողություններ կատարելու միջոցով, որոնք նախատեսված են հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, այդ թվում՝ փաստաթղթեր կազմելու և առաքելու, զննում, խուզարկություն, առգրավում կատարելու, իրեղեն ապացույցներ փոխանցելու, փորձաքննություն անցկացնելու, կողմերին, երրորդ անձանց, կասկածյալներին, նեղադրյալներին, տուժողներին, վկաներին, փորձագետներին հարցաքննելու, անձանց հետախուզման, քրեական հետապնդում իրականացնելու, քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար անձանց հանձնելու, քաղաքացիական գործերով դատական որոշումների և դատավճիռների քաղաքացիական հայցի նասի, կատարողական մակագրությունների ճանաչման և կատարման, ինչպես նաև փաստաթղթերի հանձնման միջոցով»:

3. 7-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետում.

«կասկածյալների» բառից հետո ավելացնել «մեղադրյալների» բառը,

«դրանց անվանումը ու գտնվելու վայրը» բառերը փոխարինել «դրանց անվանումը, իրավաբանական հասցեն և (կամ) գտնվելու վայրը» բառերով:

#### **4. Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց, որոնք բնակվում են Պայմանավորվող մի կողմի տարածքում, Պայմանավորվող մյուս կողմի արդարադատության մարմին ներկայանալու մասին կանչը չպետք է պարունակի չներկայանալու դեպքում հարկադրանքի միջոցներ կիրառելու սպառնալիքներ»:

#### **5. Կոնվենցիայի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

#### **«Հոդված 14**

##### **Քաղաքացիական կացության մասին փաստաթղթերի**

##### **և այլ փաստաթղթերի առաքում**

1. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, խնդրանքի դեպքում, առանց թարգմանության և անվճար, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականները միմյանց առաքել անմիջականորեն Պայմանավորվող կողմերի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների միջոցով՝ քաղաքացիներին ծանուցելով փաստաթղթերի առաքման մասին:

2. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, խնդրանքի դեպքում, առանց թարգմանության և անվճար, միմյանց առաքել և հարցվող Պայմանավորվող կողմի քաղաքացիների և նրա տարածքում բնակվող այլ անձանց կրությանը, աշխատանքային ստաժին, ինչպես նաև անձնական կամ գույքային իրավունքներին ու շահերին վերաբերող այլ փաստաթղթեր»:

#### **6. 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակության նախադասությամբ.**

«Փաստաթղթերը Պայմանավորվող կողմերի պետական լեզուներով կատարելու դեպքում դրանց կցվում են ռուսերեն լեզվով հաստատված թարգմանությունները»:

#### **7. 19-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

#### **«Հոդված 19**

##### **Իրավական օգնություն ցույց տալը մերժելը**

Իրավական օգնություն ցույց տալու խնդրանքը կարող է լրիվ կամ մասնակիորեն մերժվել, եթե նման օգնության ցուցաբերումը կարող է վնաս պատճառել հարցվող Պայմանավորվող կողմի ինքնիշխանությանը կամ անվտանգությանը կամ հակասում է նրա օրենսդրությանը։ Իրավական օգնություն ցույց տալու խնդրանքը մերժելու դեպքում հարցնող Պայմանավորվող կողմն անհապա տեղեկացվում է մերժման պատճառերի մասին»:

#### **8. Կոնվենցիան լրացնել հետևյալ բովանդակության 22<sup>1</sup> հոդվածով.**

#### **«Հոդված 22<sup>1</sup>**

##### **Քաղաքացիական դատավարությունում դատախազի**

##### **մասնակցության մասին խնդրանքը**

Պայմանավորվող մի կողմի դատախազն իրավունք ունի դիմելու Պայմանավորվող մյուս կողմի դատախազին խնդրելով հարցնող Պայմանավորվող կողմի քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ դատարանում գործ հարուցելու, այդ գործերի քննությանը մասնակցելու կամ վերադաս ատյանի դատարանին վճռաբեկ կամ մասնավոր բողոք, ինչպես նաև նման գործերով դատական որոշումների նկատմամբ հսկողական կարգով բերելու մասին»:

#### **9. 32-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

#### **«Հոդված 32**

## **Ծնողների և երեխաների իրավահարաբերությունները**

1. Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ ծնողների՝ երեխաներին պահելու պարտավորությունները, որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածում նրանք ունեն համատեղ մշտական բնակության վայր, իսկ ծնողների և երեխաների համատեղ մշտական բնակության վայրի բացակայության դեպքում նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է երեխան:

Ալիմնենտային պարտավորությունների նկատմամբ, հայցվորի պահանջով, կիրառվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի տարածում մշտապես բնակվում է երեխան:

2. Չափահաս երեխաների ալիմնենտային պարտավորությունները ծնողների օգտին, ինչպես նաև ընտանիքի մյուս անդամների ալիմնենտային պարտավորությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածում նրանք ունեցել են համատեղ բնակության վայր: Համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում նման պարտավորությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է հայցվորը:

3. Ծնողների և երեխաների իրավահարաբերությունների գործերով իրավասու է այն Պայմանավորվող կողմի դատարանը, որի օրենսդրությունը ենթակա է կիրառման, սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին հանապատասխան:

4. Երեխաների դաստիարակության հետ կապված գործերով դատարանի որոշումների կատարումն իրականացվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածում բնակվում է երեխան:

5. Պայմանավորվող կողմները միմյանց օգնություն են ցույց տալիս ալիմնենտի բռնագանձման գործերով պատասխանողի հետախուզման հարցում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ պատասխանողը գտնվում է մյուս Պայմանավորվող կողմի տարածում, և դատարանը որոշում է կայացրել նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին»:

**10. Կոնվենցիայի IV բաժնի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«Բաժին IV. Քրեական գործերով իրավական օգնությունը և իրավական հարաբերությունները»:

**11. Կոնվենցիայի IV բաժնի III մասի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«Սաս III. Հատուկ դրույթներ քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին»

**12. 58-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«1. Հանձնելու մասին պահանջը պետք է բովանդակի հետևյալ տեղեկությունները՝

ա) հարցնող և հարցվող մարմինների անվանումը,

բ) արարքի փաստական հանգամանքների նկարագրությունը և հարցնող Պայմանավորվող կողմի այն օրենքի տեքստը, որի հիման վրա տվյալ արարքը ճանաչվում է հանցագործություն, նշելով այդ օրենքով նախատեսվող պատժամիջոցները,

գ) հանձնման ենթակա ամփական ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, քաղաքացիությունը, բնակության կամ գտնվելու վայրը, հնարավորության դեպքում՝ արտաքին նկարագրությունը, լուսանկարը, մատնահետքերը և նրա մասին այլ տեղեկություններ,

դ) տվյալներ հանցագործությամբ պատճառված վնասի չափի մասին»:

**13. 60-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

## **Հետախուզումը և հանձնման համար կալանքի վերցնելը**

Հանձնելու մասին պահանջն ստանալուն պես հարցվող Պայմանավորվող կողմն անհապաղ միշոցներ է ձեռնարկում այն անձի հետախուզման և կալանքի վերցնելու ուղղությամբ, որի հանձնումը պահանջվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնումը չի կարող կատարվել»:

**14. Կոնվենցիան լրացնել հետևյալ բովանդակության 61<sup>1</sup> և 61<sup>2</sup> հոդվածներով.**

### **«Հոդված 61<sup>1</sup>**

**Անձի հետախուզումը նախքան հանձնելու մասին**

#### **պահանջն ստանալը**

1. Պայմանավորվող կողմերը, հանձնարարության հիման վրա, անձի հետախուզում են իրականացնում, նախքան նրա հանձնելու մասին պահանջն ստանալը, եթե իմբքեր կան ենթադրելու, որ այդ անձը կարող է գտնվել հարցվող Պայմանավորվող կողմի տարածքում:

2. Հետախուզումն իրականացնելու մասին հանձնարարությունը կազմվում է 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և պետք է բովանդակի, ցանկացած այլ տեղեկատվությունից բացի հետախուզվող անձի հնարավորինս ամբողջական նկարագրությունը, ինչը հնարավորություն կտա պարզելու նրա գտնվելու վայրը, ինչպես նաև խորանք տվյալ անձին կալանքի վերցնելու վերաբերյալ՝ նշելով, որ այդ անձի հանձնման մասին պահանջը կներկայացվի:

3. Հետախուզումն իրականացնելու մասին հանձնարարությանը կցվում են իրավասու մարմնի՝ կալանքի վերցնելու մասին որոշման կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հաստատված պատճենը, պատժի չկրած մասի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև լուսանկարը և մատնահետքերը (եթե այդպիսիները կան):

4. Հետախուզվող անձին կալանքի վերցնելու կամ հետախուզման այլ արդյունքների մասին անհապաղ տեղեկացվում է հարցնող Պայմանա վորվող կողմին:

### **Հոդված 61<sup>2</sup>**

**Կալանքի տակ պահելու ժամկետի հաշվառումը**

Սույն Կոնվենցիայի 60, 61 և 61<sup>1</sup> հոդվածների դրույթներին համապատասխան կալանքի վերցված անձի՝ կալանքի տակ պահելու ժամանակը, նրան հանձնելու դեպքում, հաշվվում է կալանքի տակ պահելու ամբողջ ժամկետի մեջ, որը նախատեսված է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որին այդ անձը հանձնվել է»:

**15. 62-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

### **«Հոդված 62**

**Կալանքի վերցված կամ ձերբակալված անձին ազատելը**

1. 61-րդ հոդվածի 1-ին կետի և 61<sup>1</sup> հոդվածի համաձայն կալանքի վերցված անձը պետք է ազատվի, եթե հարցնող Պայմանավորվող կողմից ստացվի այդ անձի ազատման անհրաժեշտության մասին ծանուցում, կամ եթե հարցվող Պայմանավորվող կողմը կալանքի վերցնելու օրվանից 40 օրվա ընթացքում չստանա 58-րդ հոդվածով նախատեսված բոլոր փաստաթղթերը բովանդակող հանձնման մասին պահանջը:

2. 61-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ձերբակալված անձը պետք է ազատվի, եթե 61-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան նրան կալանքի վերցնելու մասին միջնորդությունը չստացվի այն ժամկետի ընթացքում, որն օրենսդրությամբ նախատեսված է ձերբակալման համար»:

**16. Կոնվենցիան լրացնել հետևյալ բովանդակության 67<sup>1</sup> հոդվածով.**

**«Հոդված 67<sup>1</sup>**

**Կրկնակի ձերբակալումը կամ կալանքի վերցնելը**

ԱՅՃԻԾ 59-րդ հոդվածի 2-րդ կետին, 62 հոդվածի 1-ին ու 2-րդ կետերին և 67-րդ հոդվածին համապատասխան ազատելը չի խոչընդոտում նրան երկրորդ անգամ ձերբակալելուն և կալանքի վերցնելուն՝ հետագայում հանձննան մասին պահանջ ստանալու դեպքում՝ պահանջվող անձին հանձնելու նպատակով»:

**17. 70-րդ հոդվածի 1-ին կետում «մյուս Պայմանավորվող կողմին հանձնված» բառերից հետո ավելացնել «կամ ժամանակավոր փոխանցված» բառերը:**

**18. 71-րդ հոդվածում «հանձնելու» բառից հետո ավելացնել «կամ ժամանակավոր փոխանցելու» բառերը:**

**19. Կոնվենցիան լրացնել հետևյալ բովանդակության 76<sup>1</sup> հոդվածով.**

**«Հոդված 76<sup>1</sup>**

**Դատավճրության ճանաչումը**

ԱՆՁԻՆ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչելու, հանցագործության կրկնակի կատարման և պայմանական դատապարտման, դատավճողի կատարման հետաձգման կամ պայմանական վաղակետ ազատման հետ կապված պարտականությունների խախտման փաստերը պարզելու մասին հարցերը լուծելիս՝ Պայմանավորվող կողմերի արդարադատության մարմինները կարող են ճանաչել և հաշվի առնել այն դատավճրությունները, որոնք կայացվել են նախկին ԽՍՀ Միության և նրա կազմի մեջ մտած միութենական հանրապետությունների դատարանները (տրիբունալները), ինչպես նաև Պայմանավորվող կողմերի դատարանները»:

**20. Կոնվենցիան լրացնել հետևյալ բովանդակության 78<sup>1</sup> հոդվածով.**

**«Հոդված 78<sup>1</sup>**

**Կալանքի տակ գտնվող կամ ազատազրկման ձևով պատիժը**

**կրող անձի ժամանակավորապես հանձնումը**

1. Այն դեպքում, եթե անհրաժեշտ է մյուս պայմանավորվող կողմի տարածքում կալանքի տակ գտնվող կամ ազատազրկման ձևով պատիժը կրող անձին հարցաքննել որպես վկա կամ տուժող, ինչպես նաև նրա մասնակցությամբ կատարելու քննչական այլ գործողություններ, այդ անձը, անկախ նրա քաղաքացիությունից, շահագործի Պայմանավորվող կողմի հիմնավորված խնդրանքով, հարցվող Պայմանավորվող կողմի գլխավոր դատախազի (դատախազի) որոշմամբ, կարող է ժամանակավոր փոխանցվել՝ նրան կալանքի տակ պահելու և սահմանված ժամկետում վերադարձնելու պայմանով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձի ժամանակավոր փոխանցման մասին խնդրանքը կազմվում է 7-րդ հոդվածի դրություններին համապատասխան և պետք է բովանդակի նաև նշում այն ժամկետի վերաբերյալ, որի ընթացքում նրա ներկայությունը պահանջվում է հարցնող Պայմանավորվող կողմում:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձի ժամանակավոր փոխանցումը չի կատարվում, եթե

ա) չի ստացվել նրա համաձայնությունն այդպիսի փոխանցման մասին,

բ) նրա ներկայությունն անհրաժեշտ է հարցվող Պայմանավորվող կողմի տարածքում իրականացվող նախաքննությանը կամ դատաքննությանը,

գ) նման փոխանցումը կարող է հանգեցնել այդ անձին կալանքի տակ պահելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելու սահմանված ժամկետների խախտման:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձի վրա տարածվում են 9-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքները»:

**21. Կոնվենցիայի 80-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

### **«Հոդված 80**

#### **Դադորդակցման հատուկ կարգ**

Քրեական հետապնդման և հանձնման հարցերով հադորդակցվում են Պայմանավորվող կողմերի գլխավոր դատախազները (դատախազների):

Դատավարական և դատախազի (դատարանի) սանկցիա պահանջող այլ գործողությունների կատարման հարցերով հադորդակցվում են դատախազական մարմինները՝ Պայմանավորվող կողմերի գլխավոր դատախազների (դատախազների) կողմից՝ սահմանած կարգով»:

Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում վերոհիշյալ Կոնվենցիայի 83-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Սույն Արձանագրության՝ ուժի մեջ մտնելուց հետո, բոլոր Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ, նրան կարող են միանալ այլ պետություններ՝ միանալու մասին փաստաթղթերն ավանդապահին հանձնելու միջոցով: Միանալը համարվում է ուժի մեջ մտած՝ ավանդապահի կողմից միանալու համաձայնության մասին վերջին հադորդումը ստանալուց 30 օր անց:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 1997թ. մարտի 28-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահպան է Անկախ պետությունների համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը նրա հաստատված պատճենը կուղարկի սույն Արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետության:

**Դայաստանի Դամրապետության Ազգային ժողովը սույն Կոնվենցիան վավերացրել է հետևյալ վերապահումով.**

**Դայաստանի Դամրապետության Ազգային ժողովը**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**Վավերացնել 1997 թ. մարտի 28-ին Մոսկվա քաղաքում ստորագրված «1993 թ. հունվարի 22-ի քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի արձանագրությունը հետևյալ վերապահումով՝**

**«Դայաստանի Դամրապետությունը պարտավորվում է Արձանագրության 8-րդ կետով նախատեսված Կոնվենցիայի 22<sup>1</sup> հոդվածի նորմի պահանջմերը կատարել այնքանով, որքանով դրանք չեն հակասի Դայաստանի Դամրապետության օրենսդրությանը»:**

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

### ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ

#### ՊԱՐԱՆՁԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(1961թ. հոկտեմբերի 5)

Սույն Կոնվենցիան ստորագրած պետությունները՝

ցանկանալով վերացնել օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի դիվանագիտական կամ հյուպատոսական օրինականացման պահանջը,

որոշել են այդ կապակցությամբ կնքել Կոնվենցիա և համաձայնել են ներքոհիշյալ դրույթների շուրջ.

#### Հոդված 1

Սույն Կոնվենցիան կիրառվում է այն պաշտոնական փաստաթղթերի առնչությամբ, որոնք տրվել են պայմանավորվող պետություններից նեկի տարածքում և պետք է ներկայացվեն այլ պայմանավորվող պետության տարածքում:

Սույն Կոնվենցիայի նպատակների համար պաշտոնական փաստաթղթերը են համարվում՝

- պետության դատարանների կամ տրիբունալների կամ դրանց հետ կապված պաշտոնատար անձանց, ներառյալ դատախազի, դատարանի քարտուղարի կամ դատական կատարածուի, կողմից ընդունված փաստաթղթերը,
- վարչական փաստաթղթերը,
- նոտարական փաստաթղթերը,
- մասնավոր կարգավիճակով գործող անձանց կողմից ստորագրված փաստաթղթերի վրա կատարված պաշտոնական հավաստագրերը, ինչպիսին են փաստաթղթի գրանցումը կամ որոշակի ամսաթվին դրա գոյության փաստն արձանագրող պաշտոնական հավաստագրերը, ինչպես նաև ստորագրությունների պաշտոնական և նոտարական հաստատումները:

Այնուամենայնիվ, սույն Կոնվենցիան չի կիրառվում՝

- դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից ընդունված փաստաթղթերի նկատմամբ,
- առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերի նկատմամբ:

#### Հոդված 2

Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն օրինականացումից ազատում է այն փաստաթղթերը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան և որոնք պետք է ներկայացվեն իր տարածքում։ Սույն Կոնվենցիայի նպատակների համար «օրինականացում» նշանակում է միայն այն հասուլ ընթացակարգը, որի միջոցով այն երկրի դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալը, որի տարածքում փաստաթուղթը ենթակա է ներկայացման, հավաստում է ստորագրության, այն պաշտոնեկան դիրքի իսկությունը, որով հանդես է եկել փաստաթուղթն ստորագրած անձը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փաստաթղթի վրա դրված կնիքի կամ դրոշմի իսկությունը։

#### Հոդված 3

Միակ ընթացակարգը, որը կարող է պահանջվել ստորագրության, այն պաշտոնեական դիրքի հսկության, որով հանդես է եկել փաստաբուղբն ստորագրած անձը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փաստաթրի վրա դրված կնիքի կամ դրոշմի հսկության հավաստման համար, հավաստագիր դնելն է 4-րդ հոդվածում նկարագրված ձևով, ինչը կատարում է այն պետության իրավասու մարմինը, որտեղ այդ փաստաբուղբն ընդունվել է:

Այսուամենայնիվ, նախորդ պարբերությունում նշված ընթացակարգը չի կարող պահանջվել, եթե տվյալ պետությունում, որտեղ փաստաբուղբն ենթկայացվում է, գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը կամ պրակտիկան կամ էլ երկու կամ ավելի պայմանավորվող պետությունների միջև համաձայնությունը վերացրել կամ պարզեցրել են այդ ընթացակարգը կամ փաստաբուղբն ազատել են օրինականացումից:

#### Հոդված 4

3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված հավաստագիրը դրվում է անմիջապես փաստաթրի կամ փաստաթրին ամրացված առանձին թղթի վրա և պետք է ունենա սույն Կոնվենցիայի հավելվածը կազմող նմուշի ձևը:

Սակայն, հավաստագիրը կարող է կազմված լինել այն տվյալ մարմնի պաշտոնեական լեզվով: Նրանում արկա ստանդարտ արտահայտությունները կարող են լինել նաև երկրորդ լեզվով: Վերնագիրը՝ "Apostille" (Convention de La Haye du 5 octobre 1961), պետք է լինի ֆրանսերեն:

#### Հոդված 5

Հավաստագիրը տրվում է այն ստորագրած անձի կամ ներկայացնող ցանկացած անձի միջնորդությամբ:

Պատշաճորեն լրացված լինելով՝ այն հավաստում է ստորագրության, այն պաշտոնեական դիրքի հսկությունը, որով հանդես է եկել փաստաբուղբն ստորագրած անձը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փաստաթրի վրա դրված կնիքի կամ դրոշմի հսկությունը:

Հավաստագրի վրա դրված ստորագրությունը, կնիքը կամ դրոշմն ազատ են բոլոր հավաստումներից:

#### Հոդված 6

Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն նշանակում է այն մարմիններին, որոնք իրավասու են տալու 3-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշանակված հավաստագիր՝ հաշվի առնելով այդ մարմինների պաշտոնեական գործառույթները:

Նման նշանակման մասին նաև տեղեկացնում է Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը՝ իր վավերագիրը, կամ միանալու մասին փաստաթրի, կամ էլ Կոնվենցիայի գործողության տարածման մասին հայտարարությունն ի պահ հանձնելիս: Նաև տեղեկացնում է նաև այդ մարմինների նշանակման հետ կապված ցանկացած փոփոխության մասին:

#### Հոդված 7

6-րդ հոդվածին համապատասխան նշանակված յուրաքանչյուր մարմին վարում է գրանցանատյան կամ քարտարան, որտեղ նա գրանցում է տրված հավաստագրերը՝ նշելով.

- ա)հավաստագրի համարն ու ամսաթիվը,
- բ.
- ե)պաշտոնեական փաստաբուղբն ստորագրած անձի անուն ազգանունը և պաշտոնեական դիրքը, որով նա հանդես է եկել, իսկ չստորագրված փաստաթրերի դեպքում՝ կնիքը կամ դրոշմը դրած մարմինը:

Ցանկացած շահագրգիռ անձի պահանջով, հավաստագրը տված մարմինը ստուգում է, թե համապատասխանում են արդյոք դրանում առկա տվյալները գրանցանատյանում կամ քարտարանում գրանցված տվյալներին:

## Հոդված 8

Եթե երկու կամ մի քանի պայմանավորվող պետությունների միջև կնքված որևէ պայմանագիր, կոնվենցիա կամ համաձայնագիր բռվանդակում է դրույթներ, որոնք նախատեսում են որոշակի ընթացակարգ ստորագրության, կնքի կամ դրոշմի հավաստման համար, սույն Կոնվենցիան նախատեսում է այդ դրույթներից շեղում միայն այն դեպքում, եթե դրանցում նշված հատուկ ընթացակարգերն ավելի խիստ են, քան 3 և 4-րդ հոդվածներում նախատեսվածները:

## Հոդված 9

Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ կանխելու դիվանագիտական կամ հյուպատոսական գործակալների կողմից կատարվող օրինականացումը այն դեպքերում, երբ սույն Կոնվենցիան նախատեսում է ազատում օրինականացումից:

## Հոդված 10

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Դաշտայի միջազգային մասնավոր իրավունքի կոնֆերանսի իններորդ նստաշրջանում ներկայացված պետությունների, ինչպես նաև Իռլանդիայի, Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Թուրքիայի համար:

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը:

## Հոդված 11

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նախատեսված երրորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո 60-րդ օրը:

Կոնվենցիան ստորագրած յուրաքանչյուր պետության համար, որն ավելի ուշ է վավերացրել այն, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերագիրն ի պահ հանձնելուց հետո 60-րդ օրը:

## Հոդված 12

10-րդ հոդվածում չնշված ցանկացած պետություն կարող է միանալ սույն Կոնվենցիային նրա՝ 11-րդ հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան ուժի մեջ մտնելուց հետո: Միանալու մասին փաստաթուղթն ի պահ է հանձնվում Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը:

Նման միացումն իրավաբանական ուժ ունի միացած պետության և այն պայմանավորվող պետությունների միջև հարաբերությունների առնչությամբ միայն, որոնք 15-րդ հոդվածի (d) կետում նախատեսված ծանուցումն ստանալուց հետո 6 ամսվա ընթացքում չեն առարկում այդ պետության միանալու դեմ: Նման ցանկացած առարկության մասին ծանուցվում է Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը:

Միացած պետության և այն պետությունների միջև, որոնք միանալու դեմ չեն առարկել, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նախորդ պարբերությունում նշված վեցամսյա ժամկետը լրանալուց հետո 60-րդ օրը:

## Հոդված 13

Ցանկացած պետություն ստորագրման, վավերացման կամ միանալու պահին կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է, կամ այդ տարածքներից մեկի կամ մի քանիսի վրա: Այդ հայտարարությունը ուժի մեջ է մտնում տվյալ պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից:

Հետագայում ցանկացած ժամանակ Կոնվենցիայի գործողության նման տարածման մասին ծանուցվում է Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը:

Եթե Կոնվենցիայի գործողության տարածման մասին հայտարարությունը կատարում է այն պետությունը, որը ստորագրել և վավերացրել է Կոնվենցիան, վերջինս նշված տարածքների համար ուժի մեջ է մտնում 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Եթե Կոնվենցիայի գործողության տարածման մասին հայտարարությունը կատարում է այն պետությունը, որը միացել է Կոնվենցիային, ապա վերջինս նշված տարածքների համար ուժի մեջ է մտնում 2-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

### Հոդված 14

Սույն Կոնվենցիան գործում է 5 տարվա ընթացքում՝ սկսած նրա՝ 11-րդ հոդվածի 1-ին պարբերության համապատասխան ուժի մեջ մտնելու օրվանից, այդ թվում՝ այն պետությունների համար, որոնք այն վավերացրել կամ նրան միացել են հետագայում:

Եթե Կոնվենցիան չեղյալ չհայտարարվի, ապա նրա գործողությունն ինքնաբերաբար երկարաձգվում է՝ յուրաքանչյուր 5 տարվա համար:

Յուրաքանչյուր չեղյալ հայտարարման մասին Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը ծանուցվում է հնգամյա ժամկետի լրանալուց առնվազն վեց ամիս առաջ:

Չեղյալ հայտարարումը կարող է սահմանափակվել տարածքներից մի քանիսով, որոնց նկատմամբ կիրառվել է Կոնվենցիան:

Չեղյալ հայտարարումը իրավաբանական ուժ ունի միայն այն պետության առնչությամբ, որն այդ մասին ծանուցում է: Մյուս պայմանավորվող պետությունների համար Կոնվենցիան մնում է ուժի մեջ:

### Հոդված 15

Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությունը ծանուցում է 10-րդ հոդվածում հիշատակված պետություններին, ինչպես նաև 12-րդ հոդվածի դրույթների համապատասխան միացած պետություններին՝

- a. 6-րդ հոդվածի երրորդ պարբերությունում հիշատակվող ծանուցումների մասին,
- b. 10-րդ հոդվածում հիշատակվող ստորագրումների և վավերացումների մասին,
- c) 11-րդ հոդվածի առաջին պարբերության դրույթներին համապատասխան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- d) 12 հոդվածում հիշատակված միանալու և առարկումների մասին և միանալու ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- e. Կոնվենցիայի 13-րդ հոդվածում հիշատակվող գործողության տարածման և նրա ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,
- f) 14-րդ հոդվածի երրորդ պարբերությունում հիշատակվող չեղյալ հայտարարումների մասին:

Ի հավաստումն որի պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Հաագայում, 1961 թ. հոկտեմբերի 5-ին, ֆրանսերեն և անգլերեն (տեքստերի միջև տարբերության դեպքում նախապատվությունը տրվում է ֆրանսերեն տեքստին), մեկ բնօրինակով, որն ի պահ է տրվում Նիդեռլանդների կառավարության արխիվներին և որի հավաստված պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկվում է Հաագայի՝ միջազգային մասնավոր իրավունքի կոնֆերանսի իններորդ նստաշրջանին ներկա եղած յուրաքանչյուր պետության, ինչպես նաև Իռլանդիային, Իսլանդիային, Լիխտենշտեյնին և Թուրքիային:

### Կոնվենցիայի հավելված

### Հավաստագրի նմուշ

Հավաստագիրն ունի 9 սմ-ից ոչ պակաս կողմով քառակուսու ձև:

APOSTILLE

(Convention de la Haye du 5 octobre 1961)

1. Երկիրը .....

Սույն պաշտոնական փաստաթուղթը

2. Աստորագրված է Եղել (ում կողմից) .....

3. Աստորագրողը հանդես է եկել իբրև .....

4. Կրում է կնիք/դրոշմ (հաստատության անվանումը) .....

Հավաստված է

5. Որտեղ .....

6. ամսաթիվը .....

7. Ում կողմից .....

8. No .....

9. Կնիք / դրոշմ .....

10. Աստորագրություն .....

## ԱԶԱԿՅՈՒԹՅԱՎՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

### ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԿԱԶՄՈՂՆԵՐ

Վլադիմիր Հովհաննիսյան - ՀՀ սահմանադրական դատարանի փոխնախագահ, Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության խորհրդի նախագահ

Լիանա Հակոբյան - ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լուսինե Հակոբյան - Միջազգային իրավունքի հայկական ընկերակցության անդամ

Նարինե Սոլոմոնյան - ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

---

WITH ASSISTANCE OF AMERICAN BAR ASSOCIATION

COMPILERS OF THE COLLECTION

**Vladimir Hovhannisian** - Deputy Chairman of the Constitutional Court of the Republic of Armenia, President of the Council of Armenian Association of International Law

**Liana Hakobian** - Senior Specialist of Staff of the Constitutional Court of the Republic of Armenia

**Lusine Hakobian** - Member of Armenian Association of International Law

**Narine Solomonian** - Senior Specialist of Staff of the Constitutional Court of the Republic of Armenia